
ՀՅԴ Պատմութիւն
ԴՐՕՇԱԿ
Նոյեմբեր
N 11 (1602)
2008

ԴՐՕՇԱԿ

ՀՅԴ Պատմական

ԴՐՕՇԱԿ

ՀՅԴ Պատօնաթերթ



Համարի լուսանկարները՝
Հակբերի, Մաքսիմ Նովիկովի

"Դրօշակ"
ամենամսյա պաշտոնաթերթ
Հայ Հեղափոխական Դաշնակցության

Հիմնադիր՝ **ՀՅԴ**

Գլխավոր խմբագիր՝
Ռուբեն Հովսեփյան

Խմբագիր՝ **Կ. Խանլարյան**
Համակարգչային շարվածքը՝
Ս. Խաչատրյանի
Ձեւավորումը՝ **Մ. Հովսեփյանի**

Ոճը՝ **Ս. Փարթամյանի**

Գրանցման վկայական 897

Երեւան,375010,Միհեր Մկրտչյան 12/ 1
Հեռ. 521 876
էլ.փոստ.droshak@ arf.am

Տպագրությունը՝ «Բավիղ» ՍՊԸ-ի

"Droshak" monthly,
ARF dashnaktsoutiun publication

Editor-in-Chef: **Rouben Hovsepian**

12| 1 Mher Mkrtchian,Yerevan,375010
Tel. 521 876
e.mail:droshak@arf.am

Խմբագրական

Հայ-թուրքական յարաբերութիւնների կարմիր գծերը 2

Սոցիալ-տնտեսական

Աշխատանքի շուկան և աշխատավարձը 4

Հաղորդագրություն 12

Հայ դաս

Արևմուտքի անկումը

(Վուդրո Վիլսոնը և արդարացի աշխարհակարգի հաստատման ամերիկյան խոյանքը) 13

Կլոր սեղան

Փաստա-վավերագրական կինոնկար «Սարդարապատի» մասին 19

Դաշնակցական բեմ

Թշնամու և հերոսի կերպարը

հայ և թուրք ինքնությունների հարաբերման կիզակետում 27

Մերօրեայ «Մահ Իմացեալ»-ի 25-ամեակը 34

Աշխարհի միջօրեականներում

1968թ. շարժումը. դրդապատճառներն ու ձեռքբերումները 38

Սարոյան-100

«Անկարելի է հայ չըլլալ...» 42

«Դրօշակ»-ը 100 տարի առաջ

Սաֆօն 44

Նոր գրքեր

Բանկ Օսման 45

Պատկերասրահ

Լևոն Ասլանյան 48

Digitized by ARF PR Office

Հայ-թուրքական յարաբերութիւնների կարմիր գծերը

Ադդուլլահ Գիւլը հանրապետական Թուրքիայի առաջին նախագահն է, որ այցելեց Հայաստան: Այցելութեան առիթը թէեւ զուտ «ֆուտբոլային» էր, սակայն, յատկապէս այսօր, բոլորն էլ գիտակցում են դրա քաղաքական բուն դրդապատճառները եւ տեսնում մշուշապատ հեռանկարները:

Մէկ-երկու ամիս անց, չկայացած եւ դեռ պաշտօնական ձեւաչափերով չբնորոշուող այս յարաբերութիւններից արդէն նկատւում են մտահոգիչ երեւոյթներ: Բանակցութիւնների խորհրդապահական ընթացքը եւս հաստատում է մտահոգութիւնը: «*Գիւլի գալուն մենք դէմ չենք եղել,*- հոկտեմբերի 13-ին իր հարցազրոյցում յայտնել է ՀՅԴ Բիւրոյի ներկայացուցիչ ընկ. Հրանտ Մարգարեանը,- *բայց թէ հայ-թուրքական յարաբերութիւններն ինչպէ՞ս պէտք է ընթանան, այս խնդրի հետ կապուած՝ մենք ունենք բաւականին լուրջ մտահոգութիւններ*»:

Փորձենք պարզաբանել ՀՅԴ սկզբունքային դիրքորոշումը հայ-թուրքական յարաբերութիւնների նկատմամբ եւ ճշտել այն կարմիր գծերը, որոնցից անցնելը համարում ենք սխալ հայ ազգի եւ Հայաստանի շահերի տեսակէտից:

ա. Հայ-թուրքական դիւանագիտական եւ միջպետական փոխյարաբերութիւնները պէտք է սկսուեն նախապայմանների պարտադրման մթնոլորտի բացակայութեամբ: «*Բայց, երբ Թուրքիան բարիդրացիական յարաբերութիւնների դիմաց մեր երկրի ու ժողովրդի առաջ սրկացուցիչ պայմաններ է դնում,*- ընդգծում է ՀՅԴ Բիւրոյի ներկայացուցիչը,- *ուրեմն նորմալ յարաբերություններ չեն կարող լինել*»: Եթէ այս քայլին դիմելու համար գոյութիւն ունեն անխուսափելի եւ անհետաձգելի անհրաժեշտութիւններ կամ պարտադրանքներ, ապա այդ անհրաժեշ-

տութիւններ կամ պարտադրանքներ հանդէպ երկու կողմն էլ պէտք է համահաւասար կերպով պատասխանատուութիւն զգան: Ի՞նչ է նշանակում նախապայման, եթէ երկու պետութիւններն էլ պարտադրանքի առջեւ են կանգնած: Այսօր Եւրամիութեան առջեւ Թուրքիան պարտաւորուած է Հայաստանի հետ յարաբերութիւնները բնականոնացնելու: Իսկ եթէ Թուրքիան, օրինակ, փորձի հայկական կողմին պարտադրել հրաժարուել Հայոց Ցեղասպանութեան ճանաչման պահանջից եւ վերջինս էլ փորձի կուլ տալ այդ նախապայմանը, կը նշանակի, որ ձեւաւորուող յարաբերութիւններում, ինքնին, դրուելու է Թուրքիայի գերակայութեան սաղմը: Սա առաջին կարմիր գիծն է:

բ. Հայոց Ցեղասպանութեան միջազգային ճանաչման հարցը, բոլոր դէպքերում, պէտք է շարունակի մնալ ՀՀ արտաքին քաղաքականութեան օրակարգում: Սա, ըստ էութեան, միջազգայնացուած հարց է եւ արդէն երկու տասնեակից աւելի պետութիւններ եւ միջազգային ատեաններ, տարաբնոյթ բանաձեւերով, ճանաչել են պատմական իրողութիւնը: Հարցը միջազգային հարթութիւնից միջպետական հարթութիւն փոխադրելը անհեռատես քայլ կլինի: «*Բանն այն է, որ հէնց հարցը սկսեց քննարկուել որեւէ յանձնաժողովում, այլեւս աւարտ չի ունենալու,*- ասում է Հրանտ Մարգարեանը,- *Թուրքիան անընդհատ ու ամէնուր շարունակ կրկնելու է՝ հարցը քննութեան մէջ է, քննութիւնը դեռ չի աւարտուել, մի փորձէք միջամտել: Սա է, որ մեզ անհանգստացնում է*»: Որեւէ կերպ, որեւէ ձեւաչափով Հայոց Ցեղասպանութեան իրողութեան վիճարկումն էլ հէնց միւս կարմիր գիծն է հայ-թուրքական յարաբերութիւնների կոնտեքստում:

գ. Միջպետական յարաբերութիւնների նորմալացումը նախ եւ առաջ ենթադրում է վիճարկել ոչ թէ պատմական ճշմարտութիւնները, այլ սահմանների խնդիրը, այսինքն՝ ո՞րն է հայ-թուրքական ամենաիրաւական հիմք ունեցող սահմանագիծը, ո՞ր սահմանի բացելու մասին է խօսքը: Այս իմաստով, եթէ հայկական կողմին պարտադրուի տարածքային որեւէ կարգավիճակի ճանաչում, որը հիմնուած չէ հայութեան իրաւունքների եւ իրաւաքիրութեան սկզբունքի վրայ, եթէ հայկական կողմին պարտադրուի մեր ազգային գերխնդիրների ոչ հայանպաստ լուծում, ապա դա ոչ միայն մեր, այլեւ մեր աղագայ սերունդների իրաւունքների կողքից խախտում կը նշանակի: «*Այսօրուայ իշխանութիւնը, եւ կամ ցանկացած այլ իշխանութիւն, չի կարող կատարել այնպիսի զիջում, որը կը լինի սերունդների իրաւունքի հաշուին,*- յայտարարեց Հրանտ Մարգարեանը՝ շեշտելով.- *սերունդների իրաւունքն է իրենց հայրենիքին վերադարձը*»: Ահա եւս մէկ այլ կարմիր գիծ:

դ. Պետք է բացառուի Թուրքիայի միջնորդական դերը Արցախեան հիմնահարցի լուծման գործընթացում: Դեռ ոչ մի պաշտօնական համաձայնութիւն ձեռք չբերած՝ Թուրքիան արդէն վերարծարծում է իր վաղեմի դիրքորոշումը Արցախի հարցում: Եւ թւում է, հազիւ թէ այս դիրքորոշման մէջ ի յայտ գան լուրջ փոփոխութիւններ: Ակներեւ է միայն մէկ փոփոխութիւն, այն է՝ անդրկովկասեան իրականութեան մէջ Թուրքիայի դիրքերի ամրապնդումը: Այս իմաստով հայ-թուրքական յարաբերութիւնները չպէտք է միտուած լինեն ուժերի հաւասարակշռութեան խախտմանը եւ Թուրքիայի «միջնորդութեան» ապահովմանը: Սա էլ է կարմիր գիծ:

«*Թուրքիան ասում է՝ Ցեղասպանութիւնից հրաժարուէք, Ղարաբաղից ուժերը դուրս բերէք, սահմանները ճանաչէք: Այս երեք պայմանն էլ մեզ համար անընդունելի են, սարսափելի*»: Ելնելով իրավիճակից կարծում ենք, որ Գիւլը իրականում այցելեց Հայաստան իր պետութեան համար քաղաքական-տարածաշրջանային շահաբաժիններ ապահովելու եւ համաշխարհային հանրութեան աչքին հայ-թուրքական յարաբերութիւնների կարգաւորման պատրանք ստեղծելու նպատակով: Դրացիական ճշմարիտ յարաբերութիւնների փոխարէն այդ պատրանքի հետագայ հրամցնումը, որ, հնարաւոր է, փորձի իրագործել թուրքական դիւանագիտութիւնը, կարմիր գծերը հատելու լուրջ սպառնալիքներ է ստեղծելու, ինչն, ըստ ամենայնի, անընդունելի է:

ԲԵՆԻԱՄԻՆ ՄԻՐԶՈՅԱՆ
ՎԼԱԴԻՄԻՐ ԳՐԻԳՈՐՅԱՆ

Աշխատանքի շուկան և աշխատավարձը Հայաստանում

Աշխատանքի շուկան այն հիմնական գործոնն է, որն անմիջապես անդրադառնում է զբաղվածության մակարդակի բարձրացման ու տնային տնտեսությունների եկամուտների ավելացման, հետևապես և աղքատության կրճատման վրա: Սույն հոդվածում հեղինակները փորձել են համառոտակի վերլուծել Հայաստանի Հանրապետությունում աշխատանքային ռեսուրսների օգտագործման իրավիճակը, աշխատանքի շուկայի զարգացումները, զբաղվածության և աշխատավարձի փոփոխությունները վերջին տասնամյակում:

ՀՀ աշխատանքային ռեսուրսները և զբաղվածությունը

Մինչև 2001 թ. հրատարակված վիճակագրական տարեգրքերում չի արտացոլվել ՀՀ բնակչության արտագաղթի իրական պատկերը: 2001 թ. մարդահամարի արդյունքում պարզվեց, որ հանրապետության մշտական բնակչության թվաքանակը 590 հազ. մարդով պակաս է, քան ցույց էր տալիս ընթացիկ վիճակա-գրությունը: Իր հերթին աշխատանքային ռեսուրսները կազմում էին ոչ թե 2,4 մլն., այլ մոտ 2 մլն. մարդ:

Քանի որ վերջին տարիներին աշխատանքային հասակի մեջ է մտել մինչև 1990 թ. ծնված սերունդը (երբ տարեկան ծնվում էր 75-80 հազ. երեխա), ապա հանրապետության մշտական բնակչության թվաքանակի կայունացման պայմաններում (3,2 մլն. մարդ) աշխատանքային ռեսուրսները 5 տարում (2003-2007 թթ.) ավելացել են 9,7 %-ով (193 հազ. մարդով), որոշակի լարվածություն ստեղծելով աշխատանքի շուկայում: 2008 թ. սկզբի տվյալներով, ՀՀ մշտական բնակչության 67,2 %-ը կազմել է աշխատունակ բնակչությունը (տղամարդիկ՝ 16-62, կանայք՝ 16-60 տարեկան), աշխատունակ տարիքից ցածր բնակչության տեսակարար կշիռը կազմել է 20,8, իսկ բարձրը՝ 12 %:

Տնտեսապես ակտիվ բնակչության կազմում մտնում են զբաղվածները և գործազուրկները: Վիճակագրական տվյալներով, ՀՀ տնտեսության մեջ զբաղվածների թիվը նույն 5 տարիներին (2003-2007 թթ.) պակասել է 1,9 %-ով (21,1 հազ. մարդով), իսկ պաշտոնապես գրանցված գործազուրկներինը՝ 35 %-

ով (44,5 հազ. մարդով): Միաժամանակ նույն տարիներին տնտեսապես ոչ ակտիվ բնակչության թիվն ավելացել է մոտ 38 %-ով, կազմելով 2008 թ. սկզբի դրությամբ ավելի քան 1 մլն. մարդ:

Հենվելով պաշտոնական վիճակագրական տվյալների վրա ՀՀ կառավարության գործողության (2008-2012 թթ.) ծրագրում նշվում է. «Վերջին տարիներին տնտեսական զարգացումները զուգակցվել են գյուղատնտեսության մեջ զբաղվածության մակարդակի կայունությամբ և ոչ գյուղատնտեսական զբաղվածության կրճատմամբ: Միևնույն ժամանակ 2005 թվականից երկրում նկատվում են ոչ գյուղատընտեսական զբաղվածության աճի միտումներ, և տեսանելի են զբաղվածության ընդլայնման խնդրի լուծման հնարավորություններ»: («ՀՀ», 29.04.2008 թ.)

Կառավարության ծրագրում նախատեսվում է 2008-2012 թթ. ոչ գյուղատնտեսական զբաղվածությունն ավելացնել 105 հազ. մարդով, աշխատատեղեր ստեղծելով հիմնականում Երևանից դուրս՝ հանրապետության այլ քաղաքներում և գյուղաբնակ մարզերում, որոնցում գործազրկության մակարդակն ավելի բարձր է:

Աղյուսակ 1

Աշխատանքային ռեսուրսների բաշխումն ըստ մարզերի (2006 թ.)

Մարզեր	Ընդամենը ռեսուրսներ* (հազ. մարդ)	Նրանցից՝ %-ով ընդամենի նկատմամբ		
		Զբաղվածներ	Գործազուրկներ	Տնտեսապես ոչ ակտիվ բնակչություն
ՀՀ	2114.9	51.7	4.2	44.1
ք. Երևան	678.6	44.4	3.0	52.6
Արագածոտն	94.3	67.8	1.4	30.8
Արարատ	170.6	67.9	1.7	30.4
Արմավիր	180.2	67.4	1.6	31.0
Գեղարքունիք	161.8	63.2	3.0	33.8
Լոռի	216.6	42.8	9.1	48.1
Կոտայք	168.6	46.5	2.8	50.7
Շիրակ	208.9	41.5	8.2	50.3
Սյունիք	99.5	51.0	9.8	39.2
Վայոց ձոր	44.8	60.3	2.9	36.8
Տավուշ	88.5	55.8	4.6	39.6

* Կրոնական կազմակերպություններում զբաղվածների թվաքանակը ըստ մարզերի բաշխված չէ:
Աղբյուրը՝ «Հայաստանի Հանրապետության մարզերը թվերով, 2002-2006», Վիճակագրական ժողովածու, Երևան 2007, էջ 72:

Եթե վերլուծության համար հիմք ընդունենք աղյուսակում բերված պաշտոնական վիճակագրական տվյալները, ապա նոր աշխատատեղեր առաջին հերթին պետք է ստեղծել Երևանում, այնուհետև Կոտայքի, Շիրակի ու Լոռու մարզերում, որոնցում աշխատանքային ռեսուրսների ավելի քան կեսը կազմում է տնտեսապես ոչ ակտիվ բնակչությունը: Բանն այն է, որ հատկապես մայրաքաղաքում գոյություն ունի հսկայական թաքնված զբաղվածություն, իսկ գյուղական մի շարք մարզերում (Արագածոտն, Արարատ, Արմավիր, Գեղարքունիք, Վայոց ձոր, Տավուշ)՝ թաքնված գործազրկություն: Այդ մարզերում անչափ թույլ են զարգացած արդյունաբերությունը, շինարարությունը, ծառայությունների տարբեր ոլորտներն ու ենթակառուցվածքները, բնակչության զբաղմունքի գրեթե միակ ոլորտը գյուղատնտեսական սեզոնային աշխատանքն է:

Աշխատանքային շուկայի զարգացումները

Ըստ պաշտոնական վիճակագրության, վերջին 10 տարիներին Հայաստանում գրանցված կայուն ու բարձր տեմպերով տնտեսական աճն ամբողջովին ապահովվել է աշխատանքի արտադրողականության աճի հաշվին:

Նշվում է այն փաստը, որ ազատական տնտեսակարգին անցման սկզբնական փուլում ձեռնարկությունները ձեռնպահ էին մնում ազատվել լրացուցիչ աշխատուժից: Միայն 90-ական թվականների կեսերից սկսվեց աշխատուժի լայնածավալ ազատումը, որի արդյունքում կրճատվեց վերամշակող արդյունաբերության ու ծառայությունների

Աղյուսակ 2

Հայաստանի ՀՆԱ-ի, զբաղվածության, իրական աշխատավարձի և աշխատանքի արտադրողականության դինամիկան 1998-2007 թթ.

(1997=100)

Համախառն ներքին արդյունք (ՀՆԱ)	268.9
Զբաղվածության թվաքանակը	79.6
Իրական միջին ամսական աշխատավարձ	412.4
Աշխատանքի արտադրողականություն	337.8

Վիճակագրական այդ տվյալները հաճախ դառնում են քաղաքական շահարկումների առարկա: Իրոք, ինչպե՞ս կարող է տնտեսության բուռն վերելքի պայմաններում զբաղվածությունը կրճատվել ավելի քան 20 %-ով: Պարզ է, որ զբաղվածության և աշխատանքի արտադրողականության վերաբերյալ ցուցանիշներն արժանահավատ չեն:

ՀՀ ազգային վիճակագրական ծառայությունը (ԱՎԾ) և Համաշխարհային բանկը (ՀԲ) իրենց վերլուծական զեկույցներում տալիս են հակասական այդ տվյալների բացատրությունը:

ողորտի գրեթե կես միլիոն աշխատատեղ:

Հայաստանի աշխատաշուկայում շարունակում է բարձր տեսակարար կշիռ ունենալ թաքնված կամ ոչ ֆորմալ զբաղվածությունը, որի տեսակարար կշիռն անընդհատ բարձրանում է, կազմելով 2006 թ. ընդհանուր զբաղվածների 24,8 %-ը:

Թաքնված զբաղվածությունը ներառում է գործատուի հետ բանավոր պայմանավորվածությամբ վարձու աշխատողներին և այն գործատուներին ու ինքնազբաղվածներին, որոնք իրականացնում են չգրանցված տնտեսական գործունեություն:

Թաքնված զբաղվածների թիվն ահավոր չափերի է հասնում հատկապես շինարարությունում: Պաշտոնական վիճակագրական տվյալներով, շինարարության բնագավառում աշխատողների թիվը 1998-2006 թթ. կրճատվել է գրեթե 2 անգամ (1997 թ.՝ 59,7 հազ., 2006 թ.՝ 29,7 հազ. մարդ): Մինչդեռ նույն ժամանակահատվածում հանրապետության շինարարության ծավալը, համադրելի գներով, ավելացել է ավելի քան 7 անգամ, որի արդյունքում շինարարի աշխատանքի արտադրողականությունը բարձրացել է 14 անգամ: Դա իրականությանը չհամապատասխանող անհեթեթ ցուցանիշ է:

Թաքնված զբաղվածությունը մեծ չափերի է հասնում նաև տրանսպորտի, առևտրի և ծառայությունների այլ ոլորտներում: Եթե դատենք վիճակագրական տվյալներով, ապա առևտրի ոլորտում ներկայումս ավելի քիչ մարդիկ են զբաղված, քան 1990 թվականին (100,7 հազ. մարդ): Եվ դա այն դեպքում, երբ ամեն մի քայլափոխում գործում են խանութներ, շուկաներ, կրպակներ ու առևտրի այլ օբյեկտներ ու կետեր, իսկ առևտուրը դարձել է բնակչության զգալի մասի ապրուստի հիմնական աղբյուրը:



Վիճակագրական տվյալներով, 2006 թ. տնտեսության մեջ զբաղվածների (1092,4 հազ.) 42,6 %-ն (504,3 հազ. մարդ) ընդգրկված է գյուղատնտեսությունում (ներառյալ անտառտնտեսությունը և որսորդությունը): Մինչդեռ 2001 թ. մարդահամարով, զբաղված բնակչության թիվը կազմել է 1020,8 հազ. մարդ, որից գյուղատնտեսությունում (ներառյալ որսորդությունը, անտառտնտեսությունը, ձկնորսությունը և ձկնաբուծությունը)՝ 342521 մարդ (զբաղվածների 33,6 %-ը): Մարդահամարի ժամանակ իրենց գործազուրկ են համարել 570,5 հազ. մարդ (տնտեսապես ակտիվ մշտական բնակչության մոտ 36%-ը), այնինչ պաշտոնապես գործազուրկ են համարվում 74,6 հազ. մարդ, կամ տնտեսապես ակտիվ բնակչության 6,3 %-ը (2008 թ. առաջին կիսամյակում):

Համաձայն Աշխատանքի միջազգային կազմակերպության (ԱՄԿ) մեթոդաբանության, զբաղված են համարվում բոլոր այն անձինք, որոնք հետազոտվող շաբաթում ունեցել են վարձու կամ ոչ վարձու աշխատանք, անկախ այն հանգամանքից՝ աշխատանքը եղել է մշտական, ժամանակավոր, սեզոնային կամ՝ նույնիսկ եթե այդ աշխատանքը կազմել է մեկ ժամ: Իսկ գործազուրկ են համարվում 16-70 տարեկան անձինք, որոնք հետազոտվող ժամանակաշրջանում միաժամանակ բավարարել են հետևյալ երեք պայմաններին՝ չեն ունեցել աշխատանք կամ եկամտաբեր զբաղմունք, աշխատանք են փնտրել և պատրաստ են եղել անցնել աշխատանքի:

Տնային տնտեսություններում իրականացված աշխատուժի ընտրանքային հետազոտությունը հնարավորություն է ընձեռում փաստագրել զբաղվածների և գործազուրկների համամասնություններն ըստ սեռի, տարիքի և կրթական մակարդակի: Բավականին ցածր է զբաղվածության մակարդակը երիտասարդության շրջանում և հատկապես մտահոգիչ է այն փաստը, որ վերջին տարիներին գործազուրկների տեսակարար կշիռն այդ խմբում ավելացել է:

Հանրապետության աշխատանքի շուկայում լարված իրավիճակը պահպանվել է նաև 2007-2008 թվականներին, թեև պաշտոնապես գրանցված զբաղվածների թվաքանակը 2008 թ. առաջին կիսամյակում 2007 թ. առաջին կիսամյակի համեմատությամբ ավելացել է 26,5 հազ. մարդով (2,5 %-ով): Բանն այն է, որ աշխատանք փնտրողների թվաքանակը դեռևս շարունակում է 8-10 անգամ գերազանցել գործատուների ներկայացրած աշխատուժի պահանջարկը: Այսպես, 2007 թ. դեկտեմբերի վերջի դրությամբ աշխատանք են փնտրել 89,4 հազ. մարդ, որոնց՝ թվում կանայք կազմել են 68 %, սակայն աշխատանքով ապահովվել են 8,3 հազ. մարդ: Աշխատանք են որոնել 3 հազ. շրջանավարտ, բայց աշխատանքով ապահովվել են միայն 100-ը: 2008 թ. հունիսի վերջի դրությամբ աշխատանք որոնողների թիվը հասել է 91,3 հազարի, որոնցից միայն 4 հազար մարդ է տեղավորվել աշխատանքի:

Աշխատավարձի տատանումները

Աշխատավարձը շուկայական տնտեսության պայմաններում ևս մնում է բնակչության եկամուտների հիմնական աղբյուրը: Այսպես, ԱՄՆ-ում աշխատավարձի տեսակարար կշիռը բնակչության գործոնային եկամուտների մեջ կազմում է 73 %, այնինչ Հայաստանում 2006 թ. դրությամբ՝ մոտ 36 %: Հիշեցնենք, որ 1986 թ. հանրային տնտեսության մեջ զբաղված բանվորների, ծառայողների ու կոլտնտեսականների (1440,5 հազ.) մեջ բանվոր-ծառայողների թվաքանակը կազմել է 1365,7 հազ. մարդ (94,8 %), որոնց միջին աշխատավարձը կազմել է 185 ռուբ., իսկ հաշվի առնելով նաև սպառման հանրային ֆոնդերից ստացվող լրացուցիչ



վճարները և արտոնությունները՝ 252,6 ռուբլի:

Շուկայական տնտեսությանն անցման առաջին շրջանում ոչ միայն կտրուկ իջավ աշխատավարձով ապրողների թիվը, այլև աշխատավարձն արժեզրկվեց ավելի քան 15 անգամ (1991-1994 թթ.), փաստորեն դադարելով եկամուտի աղբյուր լինելուց: Եթե հիմք ընդունենք պաշտոնական վիճակագրական տվյալները, ապա մասնավոր հատված վարձու աշխատողների թվաքանակն անընդհատ իջնում է, կազմելով 2006 թ. 330,7 հազ. մարդ (առանց փոքր և գերփոքր կազմակերպությունների):

Միջին ամսական աշխատավարձը 2008 թ. հունվար-մարտ ամիսներին կազմել է 84092 դրամ կամ 273 ԱՄՆ-ի դոլար: Չնայած վերջին 10 տարիներին (1998-2007 թթ.) իրական միջին ամսական աշխատավարձն ավելացել է 4,1 անգամ, նույն 84092 դրամն իր գնողունակությամբ կազմում է 1986 թ. 185 ռուբլու 70 %-ը: Եթե հաշվի առնենք նաև սպառման հանրային ֆոնդերից ստացվող հավելավճարները, ապա մասնավոր ու պետական հատվածներում այսօրվա վարձու աշխատողը նախկին բանվոր-ծառայողի համեմատությամբ վաստակում է երկու անգամ պակաս դրամական եկամուտ:

Ուշագրավ է նաև այն փաստը, որ ազատ շուկայական տնտեսության պայմաններում միջին աշխատավարձը չի արտացոլում աշխատողի եկամտի իրական պատկերը: Նույն 1986 թ. դրությամբ ամենից բարձր աշխատավարձ էին ստանում շինարարները (մոտ 55 %-ով ավելի, քան կազմում էր միջին աշխատավարձը), իսկ ամենացածրը՝ մշակույթի աշխատողները (միջինից մոտ 44 %-ով պակաս): Միջին աշխատավարձի համեմատությամբ 2008 թ. հունվար-մարտ ամիսներին ֆինանսական գործունեությամբ զբաղվողները ստացել են 2,9 անգամ, իսկ շինարարները միայն 16 % -ով ավելի աշխատավարձ:

Անկախ Հայաստանում մենք ունենք ուռճացրած պետական ապարատ, որտեղ աշխատողների միջին աշխատավարձը 2 անգամ բարձր է, քան առողջապահության ու սոցիալական սպասարկման ոլորտներում աշխատողներինը (1986 թ. այդ տարբերությունը կազմել է 1,35:1):

Միջին աշխատավարձը մասնավոր հատվածում մոտ 2/3-ով բարձր է, քան պետական բյուջեից ֆինանսավորվող կազմակերպություններում, ինչը զգալիորեն տատանվում է նաև տարածքային կտրվածքով. Սյունիքի մարզում, որտեղ գտնվում է Քաջարանի լեռնամոլիբդենային գործարանը, միջին ամսական աշխատավարձը 2008 թ. հունվար-մարտին կազմել է 118550 դրամ, մինչդեռ Երևանում՝ 91872, Շիրակում՝ 62839, Տավուշում՝ 62749 դրամ: Տղամարդը միջին հաշվով մոտ 70 %-ով բարձր աշխատավարձ է ստանում, քան կինը:

Շուկայական տնտեսությանն անցման շրջանում հատկապես մեծ խզվածք առաջացավ աշխատավարձի ու կենսաթոշակի միջև: Միջին ամսական աշխատավարձը 1990 թ. կազմում էր 241, իսկ միջին կենսաթոշակը՝ 107,7 ռուբլի (տարբերությունը՝ 2,24:1): Այդ խզվածքը 1996 թ. կազմել է 3:1, 2000 թ.՝ 5:1, 2006 թ.՝ 5,7:1, իսկ 2008 թ. առաջին կիսամյակում՝ 4:1: (Բելառուսում այդ տարբերությունը 1990 թ. կազմել է 2,5:1, իսկ 2005 թ.՝ 2,22:1):

Կարելի է բերել բազմաթիվ այլ մտահոգիչ վիճակագրական թվեր, որոնք բացահայտում են շուկայական չկարգավորվող տնտեսության խոցելի կողմերը: Թե՛ աշխատանքի շուկայում և թե՛ աշխատավարձի բնագավառում տիրում է անորոշություն, ավելի ճիշտ՝ քաոս, բացակայում են հակազդող գործոնները: Արդյունքում տնտեսությունը զարգանում է տարերայնորեն, ազգային հարստությունը կուտակվում է մեկ, իսկ աղքատությունը՝ մի այլ բևեռում:



Եզրահանգումներ

1. Վիճակագրությունը չի բացահայտում անցումային շրջանի երկրների աշխատանքի շուկայի, զբաղվածության ու գործազրկության իրական պատկերը: Եթե դատենք վիճակագրական տվյալներով, ապա անցումային շրջանի 27 պետությունների մեջ զբաղվածության ամենաբարձր մակարդակ է արձանագրվել «մեկ միլիոն փախըստականներ» ունեցող Ադրբեջանում, որտեղ զբաղվածների թիվը 15-59 տարեկան բնակչության մեջ 1999 թ. կազմել է 78,4 %, այն դեպքում, երբ Սլովակիայում՝ 56,1, Խորվաթիայում՝ 40,9, Տաջիկստանում՝ 53,2, Հայաստանում՝ 56 %: Ադրբեջանում 2007 թ. դրությամբ զբաղվածների թիվը կազմել է 4,4 մլն., Վրաստանում՝ 1,7 մլն. (2005 թ.), իսկ Հայաստանում՝ 1,1 մլն. մարդ: Իրականում Ադրբեջանում նույնիսկ 5 մլն. մարդ չի բնակվում:

2. Վիճակագրական տվյալներով, Հայաստանում ոչ պետական հատվածում աշխատողների (878,1 հազ. մարդ, 2006 թ.) 42,6 %-ը (373,8 հազ. մարդ) զբաղված են եղել տնտեսության ոչ գյուղատնտեսական ոլորտներում: Մինչդեռ, ՀՀ ԱՎԾ տվյալներով, թաքնված զբաղվածության թվաքանակը հասնում է 300 հազարի (մեր հաշվարկներով՝ մոտ 400 հազարի): Պարտադիր սոցիալական ապահովագրության վճարների գումարը 2006 թ. կազմել է 76 մլրդ. դրամ կամ յուրաքանչյուր ոչ գյուղատնտեսական զբաղվածի հաշվով (ներառյալ պետական հատվածում 214,3 հազ. աշխատողները)՝ 130 հազ. դրամ: Հետևապես զբաղվածների թիվը դիտավորյալ թաքցնելու և հարկավճարից խուսափելու պատճառով պետությունը 2006 թ. ավելի քան 50 մլրդ. դրամի (ՀՆԱ-ի 2%) ֆինանսական կորուստ է կրել, որը կբավականացներ նույն թվականի 527,5 հազ. կենսաթոշակառուների միջին ամսական կենսաթոշակի չափը բարձրացնել ավելի քան 70 %-ով: Տարեցտարի այդ կորուստն էլ ավելի է ավելանում, բնակչության մի զգալի մասը դուրս է մնում սոցիալական ապահովագրությունից:

3. Զբաղվածության վերաբերյալ արժանահավատ տվյալների բացակայությունը տեղիք է տալիս ոչ միայն քաղաքական շահարկումների, այլև հաշվի չի առնվում կառավարական հեռանկարային ծրագրեր կազմելիս, ելակետ ընդունելով իրականությանը չհամապատասխանող այն վարկածը, ըստ որի Հայաստանում տնտեսական «հրաշքը» բացառապես տեղի է ունենում աշխատանքի արտադրողականության հաշվին: Մոտավոր հաշվարկներով, հանրապետության աշխատանքային ռեսուրսները 2008-2012 թթ. կավելանան ավելի քան 150 հազ. մարդով: Տնտեսության ոչ գյուղատնտեսական ոլորտներում 105 հազ. նոր աշխատատեղերի ստեղծման պարագայում, եթե անգամ ընդունենք, որ գյուղատնտեսության մեջ զբաղվածների թիվը (500 հազ. մարդ) կմնա անփոփոխ, հեռանկարում աշխատանքի շուկայում կստեղծվի ավելի լարված իրավիճակ: Հիշեցնենք, որ 1990 թ. հանրապետության աշխատանքային ռեսուրսների (2031,2 հազ. մարդ) ավելի քան 80 %-ը (1630,1 հազ. մարդ) զբաղված էին տընտեսության տարբեր ճյուղերում: Այդ ցուցանիշը 2012 թ. կկազմի 52 %, մինչդեռ օպտիմալ մակարդակը պետք է լինի 66-70 % (Բելառուսում նույն ցուցանիշը 2005 թ. կազմել է 70 %):

4. Ժամանակակից գիտատեխնիկական առաջընթացի պայմաններում պետությունն ակտիվ դեր է խաղում աշխատանքի շուկայի կարգավորման և բնակչության զբաղվածության մակարդակը բարձրացնելու գործում, նպաստավոր պայմաններ ստեղծելով տնտեսության աշխատատար ու գիտատար ճյուղերի զարգացման, համապատասխան ուսումնական համակարգի ձևավորման և աշխատուժի վերապատրաստման համար: Մեր հանրապետությունում աշխատանքի շուկայի կարգավորման, թաքնված զբաղվածության վերացման և աշխատավարձերի տարբերությունների մեղմացման բնագավառներում դրական տեղաշարժեր չեն նկատվում: Տնտեսությունը շարունակում է զարգանալ խիստ միակողմանի, հիմնականում ոչ արտադրական շինարարության հաշվին, որտեղ տնտեսության մեջ զբաղվածների 2,7 %-ը, վիճակագրա-

կան տվյալներով, իբր ստեղծում է ՀՆԱ-ի 28 %-ը: Մշակող արդյունաբերության բաժինը կապիտալ շինարարության մեջ 2007 թ. կազմել է ընդամենը 2,9 %, իսկ գյուղատնտեսության բաժինը (ներառյալ անտառտնտեսությունը և որսորդությունը)՝ 0,9 %: Նման հարաբերակցության պահպանման պարագայում զբաղվածության մակարդակի էական բարձրացման մասին խոսք չի կարող լինել:

5. Անցումային շրջանում փոխվել է բուհերում սովորողների մասնագիտական ուղղվածությունը: Ընդ որում վերջին տարիներին զգալիորեն ավելացել է պետական և ոչ պետական բուհերում ուսանողների թիվը, հասնելով գրեթե 100 հազարի: Վիճակագրական տվյալներով, միջին պետական մասնագիտական հաստատությունները տարեկան տալիս են 8 հազ., իսկ պետական բուհերը՝ շուրջ 10 հազ. շրջանավարտներ, որոնց աշխատանքի տեղավորման հարցը թողնված է աշխատանքի շուկայի քմահաճույքին: Ուստի երիտասարդ շրջանավարտների համար աշխատանքի շուկայում ինտեգրվելու ծրագրերի մշակումը դարձել է խիստ անհրաժեշտություն:

6. Անցումային շրջանում աշխատավարձի միջին մակարդակը դադարել է բնակչության կենսամակարդակը բնութագրող ցուցանիշ լինելուց: Նույն աշխատանքի համար շինարարը ներկայումս վաստակում է 3 անգամ պակաս իրական աշխատավարձ, քան 1990 թվականին՝ ներառյալ սպառման հանրային ֆոնդերի հաշվին հավելավճարները: Աշխատանքի վարձատրության ֆոնդը 1990 թ., 2005 թ. համադրելի գներով, կազմել է 2874 մլրդ. դրամ, որը 28 %-ով գերազանցում է 2005 թ. ՀՆԱ-ն (2244 մլրդ. դրամ): Անցումային 15 տարիների ընթացքում աշխատանքի վարձատրության ֆոնդը կրճատվել է 5,7, իսկ սոցիալական հատկացումները՝ 4,5 անգամ, մինչդեռ գործոնային այլ եկամուտները (շահույթ, տոկոս, ռենտա) ավելացել են առաջանցիկ տեմպերով, գերազանցելով աշխատանքի վարձատրության ֆոնդը 1,7 անգամ, իսկ եթե հաշվի առնենք նաև ստվերային տնտեսության եկամուտները՝ ավելի քան 3 անգամ: Դրանք մտահոգիչ, սոցիալական լարվածություն առաջացնող թվեր են: Այստեղից հետևում է, որ պետությունը պետք է բարձրացնի արհմիությունների դերը վարձու աշխատողների շահերը պաշտպանելու գործում և առավել արդյունավետ մեխանիզմներ մշակի բնակչության եկամուտներն արդարացի վերաբաշխելու համար:

7. ՀՀ կառավարության ծրագրում նշվում է, որ 1999 և 2006 թվականների միջև ընկած ժամանակահատվածում գրեթե երկու անգամ կրճատվել է աղքատության մակարդակը, այդ թվում ծայրահեղ աղքատությունը՝ մոտ 5 անգամ: Խնդիր է դրվում մինչև 2012 թ. աղքատության մակարդակը կրճատել և հասցնել 11,2 %-ի (2006 թ. 26,5 %-ի փոխարեն), իսկ ծայրահեղ աղքատությունը՝ 1,6 %-ի (4,1 %-ի փոխարեն):

Աղքատության կրճատման գործում որոշակի դեր է խաղացել արտասահմանում, հատկապես Ռուսաստանում աշխատող բարեկամներից ստացվող մասնավոր տրանսֆերտների կայուն աճը, իսկ որպես աղքատության գնահատման չափանիշ դարձել է տնային տնտեսու-





թյան սպառումը: Եթե հաշվարկման համար հիմք ընդունվեին եկամուտների վերաբերյալ ստացված տվյալները, ապա հանրապետության մշտական բնակչության (3,2 մլն.) 52,1 %-ը 2006 թ. պետք է համարվեր աղքատ, այդ թվում 28,1 %-ը՝ շատ աղքատ:

Տնային տնտեսությունների հետազոտությունների ընթացքում սպառման վերաբերյալ ստացված տվյալները ևս չեն համապատասխանում իրականությանը: Այսպես, ազգային հաշիվների կառուցվածքում տնային տնտեսությունների սպառումը 2006 թ. կազմել է ՀՆԱ-ի 70,1 %-ը կամ 1862,6 մլրդ. դրամ, մինչդեռ տնային տնտեսությունների հետազոտության տվյալներով՝ 894 մլրդ. դրամ՝ 2,1 անգամ պակաս:

Այստեղից էլ հետևում է, որ տնային տնտեսությունների սպառման գումարը քիչ թե շատ հավասարաչափ բաշխելու պարագայում կարելի է նաև վերանայել աղքատության գնահատման չափանիշները: Նվազագույն սպառողական զամբյուղի արժեքը պետք է կազմի առնվազն 50 հազ. դրամ (ամսական մեկ շնչի հաշվով): Դրա համար կան բոլոր նախապայմանները:

8. Հատկապես վստահություն չեն ներշնչում եկամուտների անհավասարության մեղմացման վերաբերյալ տվյալները, որոնք արտացոլվել են ՀՀ կառավարության ծրագրում. «Էականորեն կրճատվել է նաև անհավասարությունը (եկամուտների համակենտրոնացման Ջինիի գործակիցը). 2006 թ. կազմել է 0.369՝ 1999 թ. 0.597-ի համեմատ»: Բավական է ենթադրել,որ սեփականությունից ստացած եկամուտները 2007 թ. կազմել են տնային տնտեսությունների ամբողջական եկամուտների 0,2 %-ը, իսկ վարձու աշխատանքինը՝ 48,8 %-ը:

Եկամուտների անհավասարությունը կարող է մեղմանալ միայն հետևյալ պայմաններում.

- պետական բյուջեի եկամուտների հիմնական աղբյուր են դառնում ուղղակի պրոգրեսիվ հարկերը, մտցվում է հայտարարագրման համակարգ ոչ միայն անձնական եկամուտների, այլև ծախսերի վերաբերյալ, սահմանելով գույքային խիստ հսկողության,
- Հայաստանը դադարում է ռանտիե երկիր լինելուց, օլիգարխիան կորցնում է տնտեսության և քաղաքականության վրա ազդելու ներուժը, զրկվում գերշահույթներից,
- կոռուպցիայի դեմ պայքարը և ստվերային տնտեսության տեսակարար կշռի զգալի կրճատումը տալիս են որոշակի դրական արդյունք,
- իսպառ վերացվում է թաքնված զբաղվածությունը, աշխատողը, այդ թվում նաև գյուղացին, ստանում է իր աշխատանքի արդյունքը,
- անթույլատրելի է համարվում Սահմանադրությամբ հռչակված սոցիալական պետությունում աշխատավարձերի և կենսաթոշակների խիստ տատանումները, որոնք չպետք է գերազանցեն 10:1 հարաբերակցությունը: Եթէ նվազագույն աշխատավարձը սահմանվել է ամսական 30 հազար դրամ, ապա պետական ոչ մի չինովնիկ իրավունք չունի ստանալ ավելի քան 300 հազար դրամ:

(Շարունակելի)

ՀՅԴ ներկայացուցիչները մասնակցեցին Ընկերվար միջազգայնականի Խորհրդի նիստին

ՀՅԴ Բիւրոյի անդամ Մարիօ Նալպանտեանը ընտրուեց ԱՊՀ-ի Կովկասի եւ Սեւ Ծովի յանձնախմբի համանախագահ

17-18 նոյեմբերին, Մեխիկոյի Փուերտոյ Վայարտայ քաղաքում գումարուեց Ընկերվար միջազգայնականի Խորհրդի նիստը, նախագահութեամբ կազմակերպութեան նախագահ, Յունաստանի ՓԱՍՈՔ կուսակցութեան ղեկավար Ճորճ Փափանտրէուի եւ գլխաւոր քարտուղար՝ Լուիս Այալայի:

Խորհրդի նիստին մասնակցում էր ՀՅԴ պատուիրակութիւնը, գլխաւորութեամբ ՀՅԴ Բիւրոյի անդամ, Ընկերվար միջազգայնականում ՀՅԴ մշտական ներկայացուցիչ Մարիոյ Նալպանտեանի եւ մասնակցութեամբ Ընկերվար միջազգայնականի փոխ-նախագահ Մարիայ Թիթիզեանի (հայաստան) եւ Անահիտ Ստեփանեանի (արեւմտեան ԱՄՆ):

Խորհրդի գլխաւոր թեմաներն էին.
ա) Քաղաքականութեան վերադարձը. կառավարութեան եւ կարգաւորող շրջանակների կրիտիկական դերը՝ համաշխարհային կայուն եւ արդար տնտեսութիւն ապահովելու գործում:
բ) ԱՄՆ ընտրութիւններից յետոյ՝ միջազգային համագործակցութեան եւ բազմակողմանիութեան նոր հնարաւորութիւններ:
գ) Առաջացող եւ զարգացող տնտեսութիւնների մէջ աշխատանք՝ ընկերային արդարութեան, ներառման եւ համայնքի համար. առաջնահերթութիւններ եւ նոր մօտեցումներ:
դ) Անարդարութեան դէմ եւ շրջանային համագործակցութեան բարելաւում. Հայեացք՝ Լատին Ամերիկայից եւ Կարիպիանից:

Հաշուի առնելով, որ Խորհրդի այս նիստը առաջինն էր Յունիսին Յունաստանում կայացած կազմակերպութեան համագումարից յետո, որիուրդը զբաղուեց կազմակերպական հարցերով: Կազմուեցին կազմակերպութեան յանձնախմբերը եւ ընտրուեց նրանց ղեկավարութիւնը: Որոշուեց կազմել ԱՊՀ-ի, Կովկասի եւ Սեւ Ծովի յանձնախումբ՝ նախկին ԱՊՀ-ի եւ Կովկասի յանձնախմբի փոխարէն: Յանձնախմբի համանախագահներ ընտրուեցին Մարիոյ Նալպանտեանը (Հայաստան) եւ Ալեքսանդրա Դոբոլիին (Հունգարիա):

Նոյեմբերի 16-ին, Մարիայ Թիթիզեանը որպէս փոխ-նախագահ մասնակցեց կազմակերպութեան նախագահութեան նիստին:

Մասնակցութիւն՝ Կանանց ընկերվար միջազգայնականի Բիւրոյի նիստին

Նոյեմբերի 14-15-ին, տեղի ունեցաւ Կանանց ընկերվար միջազգայնականի Բիւրոյի նիստը, նախագահութեամբ կազմակերպութեան նախագահ Փիայ Լիկատելիի եւ գլխաւոր քարտուղար Մառլէն Հաասի:

Բիւրոյի նիստին ՀՅԴ-ի կողմից մասնակցում էին Մարիայ Թիթիզեանը (Հայաստան) եւ Անահիտ Ստեփանեանը (արեւմտեան ԱՄՆ):

Նիստի ընդհանուր բնաբանն էր Գիւղական շրջանների կանանց դերը համաշխարհային զարգացման մէջ:

Լևոն Շիրինյան

«Ամեն ինչ պատրաստ է, բախտի նախասահմանումը ցույց է տալիս մեզ ճանապարհը... մեզ ղեկավարում է Աստված... Ամերիկային վճռված է ցույց տալ ճշմարիտ ուղին»:

Վուդրո ՎԻԼՍՈՆ

ԱՐԵՎՄՈՒՏՔԻ ԱՆԿՈՒՄԸ

(Վուդրո Վիլսոնը և արդարացի աշխարհակարգի հաստատման ամերիկյան խոյանքը)

Ուրվագծվող (վիլսոնյան) աշխարհակարգը

Եվրոպան 20-րդ դար թևակոխեց սուր հակասությունների թնջուկով: Եռյակ միությունը (Գերմանիա, Ավստրո-Հունգարիա, Թուրքիա) Գերմանիայի գլխավորությամբ աշխարհի վերաբաժանման և համաշխարհային տիրապետության հայտ էր ներկայացրել՝ հակադրվելով Անգլիայի կողմից գլխավորվող Անտանտային (Անգլիա, Ֆրանսիա, Ռուսաստան, Ճապոնիա): Իրար հասկացողության լեզուն, դժբախտաբար, գտնվել էր պատերազմի սանձազերծման մեջ: Հին աշխարհը ընթանում էր պատմությունից իրեն քաջածանոթ արահետներով: Հակառակ «կայծակնային» (բլիցկրիգ) հաղթանակի ակնկալիքին, պատերազմն արագորեն ձեռք բերեց տևական ընթացք և համաշխարհային ընդգրկում: Պատերազմի հրձիգների վառած կրակին հրո ճարակ դարձավ քաղաքակիրթ աշխարհը, ինչպես և սպասելի էր՝ առաջին հերթին Հայաստանը:

Խոշոր տերություններից միայն ԱՄՆ-ն էր, որ Եվրոպայից հեռու և ապավինած «Մոնրոյի վարդապետությանը», ընդհուպ մինչև 1917 թվականի ապրիլի 6-ը, զերծ մնաց համաշխարհային սպանդից: Իսկ պատերազմի մեջ մտավ Անտանտայի կողմից ոչ որպես «դաշնակից», այլ նրան «հարող» («to beat, to churn») երկիր, որպես դաշնակիցներին «զուգորդված (ասոցիացված) տերություն»:

Մինչ երկու խմբավորումն էլ արնաքամ էին լինում, ռազմաճակատում արձանագրելով փոփոխական հաջողություններ, ԱՄՆ-ի նախագահ Thomas Woodrow Wilson-ը (1856.28.XII-1924.3.II) հանդես եկավ աշխարհի միջազգային-իրավական վերակազմավորման վիթխարի ծրագրով. Հին աշխարհի հակասությունները, հանուն նրա հիմնավոր ու տևական խաղաղության և ընդգրկուն անվտանգության, անհրաժեշտ էր լուծել նոր սկզբունքների հիմքի վրա ու աննախընթաց նախաձեռնություններով: Այդ մասին Վիլսոնն արտահայտվեց ԱՄՆ-ի Սենատին հղված 1917 թվականի հունվարի 22-ի ուղերձում: Այնտեղ շարադրվեցին Վիլսոնի հիմնական պատկերացումները հետպատերազմյան աշխարհակառույցի վերաբերյալ, որը պետք է ցնցեր առկա աշխարհակարգի հիմքերը հիմնավորապես:

Դատե՛ք ինքներդ:

Մեր հմայքն ու մեր հզորությունը, ազդարարում է նախագահը, պետք է միացվեն մյուս ժողովուրդների հմայքին ու հզորությանը՝ ողջ աշխարհում խաղաղությունն ու արդարությունը ապահովելու համար: Դրա համար, ակնարկում է նախագահը, անհրա-

ժեշտ է այն ապահովել ողջ մարդկության «կազմակերպված ուժի կողմից», որն է Ազգերի դաշնակցությունը: Ըստ Վիլսոնի, քաղաքական աշխարհը կանգնած է երկընտրանքի առաջ. այժմյան պատերազմը արդյո՞ք պատերազմ է արդար և կայուն խաղաղության համար, թե՞ պայքար է միայն հանուն տերությունների միջև նոր հավասարակշռության: Եթե դա պայքար է հանուն քաղաքական նոր հավասարակշռության նոր համակարգի, ապա այդ դեպքում ո՞վ կարող է երաշխավորել համակարգի նոր հավասարակշռությունը: Եվրոպան կարող է կայուն լինել, երբ նա հանգիստ է: «Այդտեղ,- ասում է նախագահը,- պետք է ոչ թե հավասարակշռություն, այլ ուժերի ընդհանրություն, ոչ թե մրցակցություն, այլ ընդհանուր խաղաղություն»: Արդի աշխարհում, բացատրում էր նախագահը, «չպետք է լինի ուժերի հաշվեկշիռ (բալանս), ազգերի մի հզոր խմբավորման հակադրություն մյուսին, այլ պետք է ձևավորվի ազգերի միասնական խումբ, որոնց ձեռքում պետք է լինի խնամակալությունն աշխարհի խաղաղության վրա»:

Ավելին: Վիլսոնի կարծիքով, հետպատերազմյան աշխարհը պետք չէ, որ ձևավորվի երկու խմբավորումներից որևէ մեկի հաղթանակի հիման վրա: Խաղաղությունը կլինի տևական («Peace Without Victory»), ամուր, եթե կնքվի հավասարների միջև, որն ամբողջությամբ հիմնված կլինի հավասարության սկզբունքի և ընդհանուր բարօրությանը հավասար մասնակցության վրա: Ճշմարտության զգացումը, համաշխարհային արդարության զգացումը այնքան է անհրաժեշտ կայուն խաղաղության հաստատման համար, որքան անհրաժեշտ է «տարածական, ցեղային, կամ ազգագրական բնույթի հրատապ հարցերի ճիշտ լուծումը»: Ազգերի հավասարությունը, որի վրա պետք է հանգչի կայուն խաղաղությունը, պետք է արտահայտվի նրանց իրավահավասարության մեջ: Իրավունքը պետք է հենվի բոլոր ազգերի ընդհանուր հզորության վրա, որոնց համաձայնությունից է կախված լինելու բոլոր ազգերի ընդհանուր հզորությունը, այլ ոչ թե նրանցից մեկի հզորությունից:

Իհարկե, դա չի նշանակում տարածքների և այլ պաշարների հավասարություն, և ընդհանրապես, բարիքների բաշխման հավասարություն, որքանով դրանք ժողովուրդների սովորական համաշխարհային զարգացման արդյունք չեն եղել: «Սակայն,- գտնում է նախագահը,- ոչ ոք չի սպասում և չի էլ պահանջում ոչինչ, բացի իրավունքների հավաստիությունից: Այժմ մարդկությունը ծարավ է գոյության ազատության, և ոչ թե ուժերի հավասարության»: Կազմակերպված ժողովուրդների միջև չի կարող և չպետք է լինի կայուն խաղաղություն, որը չի բխում այն սկզբունքից, *թե «կառավարությունն իր բոլոր արդարացի իրավասությունները փոխ է առնում միայն ժողովրդի կամքից, և ոչ մեկը իրավունք չունի ժողովուրդներին հանձնելու մի պետությունից մյուսին, կարծես թե նրանք իրեր լինեն»* (ընդգծումը իմն է.- Լ. Շ»): Իսկ այն ժողովուրդների համար, որոնք ապրել են այլ հավատ դավանող և նույնիսկ նրանց նկատմամբ թշնամական նպատակներ հետապնդող ժողովուրդների իշխանության տակ, առաջիկայում պետք է ապահովվի գոյության, հավատի, արդյունաբերության և հասարակական զարգացման ազատություն...

Ուշադրության է արժանի նախագահ Մոնրոյի վարդապետության «վիլսոնյան» ընթերցումը, որը «վիլսոնյան աշխարհակարգի» հաստատման ճանապարհին խոչընդոտից վերածվում էր իր հակադրությանը: Վիլսոնն առաջարկում էր, որ բոլոր ազգերը «ընդհանուր համաձայնությամբ» ընդունեն այն, որպեսզի «ոչ մի ազգ չձգտի իր գերիշխանությունը տարածել ուրիշների վրա, այլ որպեսզի յուրաքանչյուր ժողովրդի հնարավորություն տրվի ազատ ինքնորոշվելու, ինչպես նաև իրավունք՝ հետևելու իր ընտրած զարգացման ուղուն առանց արգելքների և առանց սպառնալիքի. թույլերին նույնպես, ինչպես և ուժեղներին»:

Միջազգային հարաբերությունների որակապես նոր համակարգի օգտին Վիլսոնը որոշակիությամբ արտահայտվում է Հռոմի պապ Բենեդիկտոս XV-ի խաղաղության առաջարկի պատասխան ուղերձում, 1917 թվականի օգոստոսի 29-ին: Դեմ լինելով պատերազմից հետո կայսրությունների տրոհմանը, Վիլսոնը միաժամանակ հռչակում է ժողովուրդների՝ «մեծ» ու «փոքր», ինքնակառավարման, անվտանգության ու աշխարհի գործերին իրավահավասար մասնակցության իրավունքը:

Այդուհանդերձ, գլոբալ մտածողության ճանապարհին և՛ տեսական-քաղաքական իմաստով, և՛ ընդհանուր ռազմավարության տեսանկյունից, և՛ գործնական քաղաքականության առումով վերափոխիչ նշանակություն ունեցան ԱՄՆ-ի Սենատի միացյալ նիստում Վիլսոնի հռչակած «14 կետերը», որոնք, ըստ էության, նախատեսում էին հետպատերազմյան աշխարհակառույցի հաստատում՝ համապատասխան «ազատականության սկզբունքների և հակաիմպերիալիզմի»

(Мальков В. Л., Вудро Вильсон и новая Россия, февраль 1917–март 1918 г. – "Новая и новейшая история", 1999, 6, стр. 124): Ուստիև միջազգային քաղաքականության տեսակետից, Վիլսոնի պլանը ոչ այլ ինչ էր, եթե ոչ «դաշնակցային (ֆեդերալիստական) ծրագիր համաշխարհային մասշտաբով, միաժամանակ՝ համաշխարհային ազատականության ամենաավարտուն ծրագիրը» (Ключников Ю. В., На великом историческом перепутье", Берлин, 1922, стр. 107):

Գլոբալ նախագծի վեց կետերը (1-5, 14; 1. բաց խաղաղ դաշնագրեր, 2. խաղաղ և պատերազմական ժամանակ լրիվ ազատություն առևտրական նավագնացությանը, 3. միջազգային առևտրին խանգարող խոչընդոտների վերացում, 4. զենքի կրճատումն ապահովող երաշխիքների հաստատում, 5. գաղութային հարցերի կարգավորում, 14. Ազգերի դաշնակցության ստեղծում) վերաբերում էին աշխարհակառույցի միջազգային իրավական վերակազմավորման գլխավոր տեսանկյուններին, իսկ ութը (6-13) հրատապ ու արմատական լուծում պահանջող, սակայն լոկալ (տեղական) հիմնախնդիրներին: Դրանով իսկ նախագահ Վիլսոնի ծրագիրը ձեռք էր բերում, հիրավի, «տիեզերական» ընդգրկում. արմատական փոփոխությունների գլխավոր ուղղությունները լրացվում էին ցնցումներից հոգեվարք ապրող աշխարհի տարածքային, ազգագրական, մշակութային-քաղաքակրթական անլուծելի թվացող կնճիռների հաղթահարումով: Հետպատերազմյան ռազմավարական աշխարհի առջև բացվում էին անվտանգ ու իրավահավասար զարգացման դռները:

Խաղաղության վեհաժողովի ԱՄՆ-ի պատվիրակությանը հաջողվեց «Վիլսոնի վարդապետությունը» դաշնակիցներին դիտել տալ որպես բանակցությունների հիմք: Նրանք ստացան գնդապետ Էդուարդ Հաուզի հանձնարարությամբ «Ուորլդ» թերթի խմբագիր Ֆրենկ Կոբի կողմից (Ուոլտեր Լիպմանի օգնությամբ) մշակված և նախագահի կողմից հաստատված 14 կետերի «պաշտոնական մեկնաբանությունները» (1918 թ., օգոստոս) որպես «խաղաղության պայմաններ»: Այստեղ ևս, աշխարհի լոկալ (արյունահոս) վերքեր էին դիտվում և հանուն աշխարհի խաղաղության ու քաղաքակրթության անվտանգության հրատապ լուծում պահանջում Ռուսաստանի (կետ 6), Բելգիայի ազատագրության (կետ 7), Գերմանիայի կողմից Ֆրանսիայից բռնազավթված տարածքների, Էլզաս-Լոթարինգիայի վերադարձի (կետ 8), Իտալիայի սահմանների ուղղման (կետ 9), Ավստրո-Հունգարիայի ժողովուրդների ինքնավար զարգացման (կետ 10), Բալկանյան թերակղզու երկրների ու ժողովուրդների կյանքի կարգավորման (կետ 11), լեհական անկախ պետության ստեղծման (կետ 13) և, վերջապես, Օսմանյան կայսրության ճակատագրի և «թրքական ջրուղիների» (կետ 12) թնջուկները:

Մերձավոր Արևելքի վերակազմման վիլսոնյան ծրագիրը. օսմանյան (թարախա) պալարը

Մեր հետաքրքրության կիզակետն, անշուշտ, 12-րդ կետն է: Նախ՝ որովհետև թուրքական թնջուկը արնածոր էր, իսկ Օսմանյան կայսրությունը վերածվել էր պատմական անախրոնիզմի, մահ ու ահաբեկչություն տարածելով աջ ու ձախ, երկրորդ՝ քրիստոնեական (արևմտյան) քաղաքակրթության հետ թյուրք-իսլամական ենթաքաղաքակրթության դիմաբախման դասական գոտի էր և, երրորդ, հաղթական Անտանտայի կրտսեր դաշնակից հռչակված Հայաստանի խնդիրը քննարկվում էր Օսմանյան կայսրության լուծարում-անդամահատման ենթատեքստում: Ուստի և մեզ թույլ ենք տալիս ամբողջությամբ մեջբերել ճակատագրական 12-րդ կետը, որն ասում էր. «Օսմանյան կայսրության թուրքական մասերը, իր ներկա կազմով, պետք է ստանան ապահովված և կայուն վեհապետություն, սակայն մյուս ազգությունները, որոնք այժմ գտնվում են թուրքերի իշխանության տակ, պետք է ստանան գոյության անվերկբա երաշխիքներ և ինքնավար զարգացման բացարձակապես անխախտ պայմաններ: Դարդանելը պետք է մշտապես բաց լինի նավերի ազատ անցումի և բոլոր ազգերի առևտրի համար՝ միջազգային երաշխիքներով»: Իսկ մեկնաբանություններում, որոնք ամենաշատն էին արտացոլում «պաշտոնական ամերիկյան ծրագիրը», թուրքական բուն տարածք էր դիտվում Անատոլիան (նույնն է և Սևրի դաշնագրում), «Հայաստանին պետք է տրամադրվեր նավահանգիստ Միջերկրական ծովում որևէ տերության հովանավորությամբ»: Նշվում էր, որ դրան կհավակնի, հավանաբար, Ֆրանսիան, «սակայն հայերը կգերադասեին Անգլիային»:

Չէին անտեսված, ի դեպ, Օսմանյան կայսրության այլ ժողովուրդների՝ հույների, արաբների և այլն, իրավունքները, դրանով, կարծես թե, տուրք էր տրվում քաղաքակրթական ու պատմական անհրաժեշտության պահանջներին: Վիլսոնյան ծրագրով առաջարկվում էր խաղաղության դաշնագրում «ներգրել» «երաշխիքների ընդհանուր կոդեքս»՝ իմպերատիվ հատկանի-

շով: Պարտադրվում էր կնքվելիք դաշնագրում ապահովել փոքրամասնությունների իրավունքներն ու բաց դռների սկզբունքը, իսկ գլխավոր երկաթուղագծերը պետք է միջազգայնացվեին: Նեղուցներն ու Կ. Պոլիսը, թեկուզև անվանապես, կարող էին մնալ թուրքական, սակայն պետք է ենթարկվեին կոլեկտիվ կամ Ազգերի դաշնակցության իրավարար որևէ տերության «միջազգային վերահսկողության»:

Հայաստանի կենսական շահերն առկա էին նաև «ռուսական հարցի» (կետ 6) «կովկասյան» առաջարկներում՝ «հավանաբար» «որպես Թուրքական կայսրության պրոբլեմի մաս»: Սկզբունքային նշանակություն ուներ Բրեստ-Լիտովսկի դաշնագրի չեղյալ հայտարարման պահանջը՝ որպես «ակնհայտորեն սրիկայական պայմանագրի»:

Հայտնի է, որ ամերիկյան պատվիրակությունը ներկայացավ Փարիզի խաղաղության վեհաժողով կատարելապես նախապատրաստված, ձեռքի տակ ունենալով բազմաթիվ տեղեկանքներ և փաստաթղթեր, խորհրդականների ու փորձագետների նշմարելի քանակ, պետքարտուղար Ռ. Լանսինգի կողմից մշակված հատուկ հրահանգ, որն, ըստ էության, իր մեջ պարունակում էր բոլոր հիմնական հարցերի լուծման նախագծերը: ԱՄՆ-ի ծրագիրն իր արտացոլումը գտավ նաև Պետական դեպարտամենտի կողմից 1919 թվականի հունվարի 21-ին կազմված քարտեզներում: Այդ քարտեզներով, որոնք արտացոլում էին «Վիլսոնի վարդապետությունը», Օսմանյան կայսրությունը բաժանվում էր երեք պետության՝ 1) Թուրքիա, 2) Հայաստան, 3) Կ. Պոլիս: Թուրքական պետությունը պետք է իր մեջ ընդգրկեր ողջ Անատոլիան, արևելքից՝ Անտի-Տավրոսյան լեռներից մինչև Բուրսա քաղաքով անցնող գիծը՝ զուգահեռաբար Բոսֆոր և Դարդանել նեղուցներին: Նախատեսվում էր Թուրքիայի մայրաքաղաքը դարձնել Կոնիա քաղաքը (Տե՛ս **Кунина А. Е., Провал американских планов завоевания мирового господства в 1917-1920 гг. Изд. 2-е. М., 1954, стр. 294**): «Կ. Պոլսի» պետության մեջ պետք է մտնեին եվրոպական տարածքները՝ Բոսֆոր և Դարդանել նեղուցներով, Մարմարա ծովի ողջ ծովափը, ինչպես նաև Անատոլիայի արևմտյան մասերը՝ Բուրսա և Բանդրմա քաղաքներով: Պոլսական պետության կազմում պետք է հետագայում ընդգրկվեին, ըստ քարտեզի մեկնաբանությունների, ինչպես ամբողջ Արևելյան, այնպես էլ Արևմտյան Թրակիան: Վերջինս կանխավ խոստացել էին Բուլղարիային:

Լանսինգի հրահանգի համաձայն, Կ. Պոլիսն ու նեղուցները պետք է որ առանձնացվեին որպես առանձին պետություն՝ միջազգային վերահսկողության տակ, կամ Ազգերի դաշնակցության անունից տրվեին որևէ տերության որպես ենթահոգատար տարածք: Եվրոպայից թուրքերը պետք է վերաբնակեցվեին Անատոլիա: Անատոլիայի մերձափնյա տարածքներում, որը բնակեցված էր հույներով, պետք է հաստատվեր միջազգային վերահսկողություն և դրվեր Հունաստանի տրամադրության տակ որպես ենթահոգատար տարածք: Պաղեստինի, Միջագետքի և Արաբիայի համար հոգատար էր դիտվում Անգլիան, Սիրիայի համար՝ Ֆրանսիան: Հայաստանի, Կ. Պոլսի ու նեղուցների, Անատոլիայի հոգատար երկիրը չէր նշվում (Տե՛ս Lansing R., The Peace Negotiations. A Personal Narrative, London, 1921, էջ 172-175):

1919 թվականին ամերիկյան կառավարությունը մանրակրկիտ քննության ենթարկեց Օսմանյան կայսրությունը (Քինգ-Քրեյնի հանձնաժողով, Հարբորդի առաքելություն և այլն)՝ նրա հանդեպ մանդատ հաստատելու նպատակահարմարության և հնարավորության հարցը պարզելու համար: Այսպիսով, 1919 թվականի ամռանն ու աշնանը հետազոտվեցին Սիրիան, Անատոլիան, Հայաստանը, Անդրկովկասը (Տե՛ս Howard H. N., The King-Crane Commission. An American Inquire in the Middle East, Beirut, 1963; «The King-Crane Riport on the Near East. A suppressed official document of the US government». Editor and Publisher, LV. 27 (December 2.1922), I-XVII, նաև «Papers relating to the Foreign Relations of the US. The Paris Peace Confereance, 1919». 13 vols. Vol. XII, էջ 747-848: «Report of the American Military Mission to Armenia. 16/X-1919. International Conciliation». June 1920. N 151, էջ 275-312, «Foreign Relations», 1919, Vol. II, էջ 841-879; Խաչատրյան Հ. Հ., Ամերիկյան զինվորական առաքելությունը դեպի Հայաստան.- «Հայրենիք», 1940, N 1-3, 1941, N 4-7):

Ակնհայտ է, որ Վիլսոնի ծրագրերը հակասում էին եվրոպական գլխավոր դաշնակից երկրների՝ Անգլիայի, Ֆրանսիայի, Ռուսաստանի և Իտալիայի Օսմանյան կայսրության տրոհման (գաղտնի) պայմանագրերին: Ուստի և նախագահը հաստատեց տվյալ պայմանագրերը անիրական համարող ամերիկյան դիվանագիտական թեզիսը (Howard H. N., The Partition of Turkey, a Diplomatic History 1913-1923. Oklahoma, 1931, էջ 231): Եվ հանդես եկավ Միջին Արևելքի արմատական վերակազմման հիմնավոր ու հեռատես ծրագրով:

Վիլսոնը հետևողական էր:

Ամերիկյան կողմի ճնշման տակ անգլիական պատվիրակությունը 1919 թվականի մայիսի 13-ին «Երեքի խորհրդի» (Վ. Վիլսոն, Դ. Լլոյդ Ջորջ, Ժ. Կլեմանսո) քննարկմանը ներկայացրեց Օսմանյան կայսրության տրոհման սխեման, որը նախատեսում էր Միացյալ Նահանգներին հանձնել Հայաստանի, Կ. Պոլսի և նեղուցների (Բոսֆոր և Դարդանել), Մարմարա ծովի ու մերձափնյա ոչ մեծ տարածքի հոգատարությունը (մանդատը) («Papers Relating to the Foreign Relations of the US. The Paris Peace Confereance, 1919». Vol. V, էջ 622): Միաժամանակ, սխեմայի մեջ առաջարկվում էր Անատոլիայի բաժանումը Ֆրանսիայի, Իտալիայի ու Հունաստանի միջև: Վիլսոնն իր պաշտոնական պատրաստակամությունը հայտնեց ԱՄՆ-ի անունից ընդունել նեղուցների հետ միասին Կ. Պոլսի և Հայաստանի հոգատարությունը, պայմանով, եթե ստացվի ԱՄՆ-ի Սենատի համաձայնությունը (Նույն տեղը, էջ 614): Ընդսմին, նախագահը դեմ արտահայտվեց Անատոլիայի բաժանմանը...

Լլոյդ Ջորջի նոր առաջարկում, որը ներկայացվեց «Երեքի խորհրդի» քննությանը, մայիսի 21-ին, հաշվի առնվեցին ամերիկյան պահանջները՝ «թեթև հոգատարությունը» Անատոլիային և նույնիսկ «ժամանակավոր հոգատարությունը» ռուսական Հայաստանին, Ադրբեջանին և Կովկասի ամբողջ շրջանին ընդհուպ խնդրի լրիվ լուծում (Նույն տեղը, էջ 770-771): Այսպիսով, քաղաքակրթությունների այս խառնարանում հայ ժողովուրդը, թվում է, դուրս էր պրծնում թուրքական գեհենից և կարող էր, ի վերջո, վերականգնել իր հայրենիքը՝ աշխարհի առաջին քրիստոնյա պետությունը (301 թ.), տևականորեն վայելելով ամերիկյան երիտասարդ ու կենսունակ ժողովրդավարության պաշտպանությունը: Սակայն, ուրիշ էին եվրոպական մեծերի հաշիվները: Մասնավորապես, Ֆրանսիան պնդեց Անատոլիայի հանդեպ ֆրանսիական հոգատարության նախագծի վրա, չէր թաքցնում Կիլիկիայի հանդեպ իր երկրի բացառիկ հետաքրքրությունները:

Ինչևէ: Դեռևս 1919 թվականի մարտի 7-ին Լլոյդ Ջորջի հետ ոչ պաշտոնական հանդիպման ժամանակ նախագահ Վիլսոնի ընկեր ու հավատարմատար, հայտնի գնդապետ Էդուարդ Հաուզը Հայաստանի ու Կ. Պոլսի հոգատարության հարցի առընչությամբ հայտնել էր, որ ԱՄՆ-ը պատրաստ էր իր վրա վերցնել Անատոլիայի «հսկողությունը» (Lloyd George D., The Truth About the Peace Treaties, 2 vols. London, 1938, vol. I, էջ 228): Իսկ 1919 թ. մայիսի 20-ին «Չորսի խորհրդի» (Վուդրո Վիլսոն, Դեյվիդ Լլոյդ Ջորջ, Ժորժ Կլեմանսո, Վիտտորիո Օռլանդո) նիստում նախագահ Վիլսոնը շարադրեց ԱՄՆ-ի պլանները Հայաստանի վերաբերյալ: Նա հայտարարեց. քանի որ Ռուսաստանը ջախջախվել է, ապա փոխվում է 1916 թ. պայմանագրերի հիմքը (Վիլսոնը նկատի ուներ Սայքս-Պիկո համաձայնագիրը.- Լ. Շ.) և դա թույլ է տալիս «հայկական հարցը» դիտել ավելի լայն պլանով: Վիլսոնը պահանջում էր Հայաստանի կազմի մեջ ընդգրկել նաև Կիլիկիան, քանզի այլ կերպ «Հայաստանը կկտրվի Միջերկրական ծովից» (Նույն տեղը, էջ 9):

Քաղաքակրթական առումով ողջախոհ և հեռանկարային դիրքորոշումը չէր կարող ոգևորել 1916 թ. պայմանագրերը երկնած ֆրանսիական և անգլիական կողմերին: Սակայն, Գերմանիայի հետ «խաղաղության պայմանագիրը» դեռևս չէր կնքված և, խորքի մեջ, վիլսոնյան տեսակետը մերժող գլխավոր դաշնակիցները դեռևս պետք է հաշվի նստեին ամերիկյան դիրքորոշման հետ:

Ինչքան էլ տարօրինակ թվա, «14 կետերի» սեփական մեկնաբանությունն ունեին խոշոր եվրոպական տերությունների տարածայնությունների ու խուլ հակասությունների վրա հավերժորեն դրեյֆող թուրքերը: Նկատի ունենալով կայսրությունները չտրոհելու վիլսոնյան տեսակետը, հայ կանանց և անհաշիվ որբերի դահիճ, «արևմտականացած» Հալիդե Էդիպը հանդես է գալիս Թուրքիայի նկատմամբ ամերիկյան հոգատարության օգտին (Տե՛ս Halide Edib, The Turkish Ordial. London, 1928, էջ 10-11): Սույն ճիզվիտը այն հույսն է հայտնում, որ Վիլսոնի «14 կետերը» թույլ են տալիս հուսալու, որ «թուրքերին կթողնվեն այն հողերը, *որտեղ նրանք կազմում են անվիճելի մեծամասնություն* (ընդգծումն իմն է.- Լ. Շ.)», ընդսմին նկատի ունենալով, որ այդ հողերը հենց վերջերս ցեղային մաքրագործման («epuration ethnique») հետևանքով ամայացած Հայաստանն են, ուստի և դաշնակիցները չեն գնա «Հայաստանի ստեղծմանը Թուրքիայի արևելքում և հարավում» (Նույն տեղը, էջ 3): Նշանակում է, կդառնան լուռ հանցակիցը թուրքական հանճարի ստեղծագործության՝ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ակտի կիրառմանը՝ որպես ՀԱՅՐԵՆԻՔ և ՄՇԱԿՈՒՅԹ կողոպտելու ու սեփականելու միջոցի: Սկսված էր, ինչպես և հասկանալի է, Մեծ ոճիրի արդյունքների իրացման և ուրացման դժվարին ու հաճելի շրջանը: Օրինակ, այսպես, «հայկական

տարրից» 1915 թվականի մայիսին մաքրագործված հայկական Երզնկա քաղաքի կառավարական շենքի «սանդուխքներու վրա», Հարբորդի առաքելությունը դիմավորելիս (1919 թ. սեպտեմբերի 23), «խոշոր գիրերով «Viva L´Art. 12 des Principes de Wilson» գրված լաթը կցուցադրվեր» (Տե՛ս Խաչատրյան Հ. Հ., Ամերիկյան զինվորական առաքելությունը դեպի Հայաստան.- «Հայրենիք», 1940, N 3, էջ 130):

Ուշագրավ է Կ. Պոլսի ամերիկյան կոմիսար Լ. Հեկի (Lewis Heck) 1919 թվականի հունվարի 4-ի հաղորդումը Ֆրանսիայում ամերիկյան դեսպանին առ այն, թե թուրքերը շատ են վախենում խաղաղության վեհաժողովում դաշնակից գլխավոր տերությունների, բացառությամբ ԱՄՆ-ի, իրենց հանդեպ սպասվելիք չափազանց խիստ վերաբերմունքից և իրենք ապավինում են բացառապես Վիլսոնի ու նրա «14 կետերի» վրա (Տե'ս «Papers Relating to the Foreign Relations of the US. The Paris Peace Confereance, 1919». Vol. II, էջ 282): Անշուշտ, թուրքերը վախենալու հիմք ունեին. անդամահատման սեղանի վրա էր ոճիրների մեջ թաղված ենիչերիների «վաթանը», իսկ վերնախավ կոչված թուրք կառավարիչների, զինվորականների ու մտավորականների գլխին կախված էր Անտանտայի գլխավոր երկրների՝ Անգլիայի, Ֆրանսիայի և Ռուսաստանի 1915 թվականի մայիսի 24-ի հայտարարության սպառնալիքը, որով կոտորածների համար գլխավոր դաշնակից երկրները հրապարակավ պատասխանատու էին հռչակում օսմանյան պետությունն ու անձնապես կառավարության բոլոր անդամներին և տեղական այն պաշտոնյաներին, որոնք մասնակցել էին ոճրագործություններին, գործոդու- թյուններ, որոնք որակվել էին որպես «ոճիր մարդկության և քաղաքակրթության դեմ»: Պարզ է, որ թուրքերը նպատակ էին դրել օգտվել XX դարի խոշորագույն քաղաքական գործչի ահռելի հեղինակությունից, ապականել մեծ մարդասեր-քրիստոնյայի անունն ու աշխարհի վերակազմման հուսատու ծրագիրը՝ բովանդակա-զրկելով այն սեփական մեկնաբանությամբ: Ու ամերիկյան հովանոցի տակ թաքնվելու նպատակով, ստեղծում են այսպես կոչված «Ազգային կոնգրես» և համանման այլ կազմակերպություններ, որոնք, այդուհանդերձ, մեծ ազդեցություն չեն կարողանում ձեռք բերել: Սակայն, այս կազմակերպությունների առկայու-թյունը Վիլսոնին թույլ է տալիս ապացուցելու, որ թուրքերը գերադասում են ամերիկյան հոգատարու- թյունը: Այդպիսով, թերևս «Վիլսոնի վարդապետությունը», իր ամբողջության մեջ, բացում էր հակասու- թյուններից բզկտվող Մերձավոր ու Միջին Արևելքի առջև իրավահավասար, անվտանգ և ներդաշնակ զարգացման հեռանկար, ստեղծում էր քաղաքակրթությունների սինխրոն երկխոսության նախադեպ: Իրոք որ «հարատև» խաղաղությունն այստեղ դառնում էր շոշափելի ներկայություն:

Բայց, սկսած 1919 թվականի երկրորդ կեսից, եվրոպական գլխավոր դաշնակից երկրները, երբ արդեն կնքված էր հաշտության դաշնագիրը Գերմանիայի հետ (28 հունիսի, Վերսալ), այլևս չվերադարձան մայիս-հունիսին քննարկված Թուրքիայի հանդեպ ամերիկյան հոգատարության նախագծին: Եվ վերցրեցին Կ. Պոլսի ու Անատոլիայի հանդեպ ամերիկյան հոգատարության վերաքննության հաստատուն ուղղություն: Այժմ խոսք կարող էր լինել միայն Հայաստանի հոգատարության մասին: Հայաստանն այսպես առանձնացվեց և, բնականաբար, մեկուսացվեց Օսմանյան ընդհանուր թնջուկից, որն, ըստ էության, ամբողջության մեջ իրենով ծածկում էր Մերձավոր Արևելքը: Վատթարն այն էր, որ նույն շրջանում էր (1919 թ. նոյեմբեր), որ ծայրակետին հասավ խզումը Վիլսոնի և հանրապետականների ղեկավարության միջև, երբ Սենատը հրաժարվեց վավերացնել Վերսալյան դաշնագիրն ու թույլ տալ Միացյալ Նահանգներին դառնալ Ազգերի դաշնակցության անդամ: [Վավերացման հասնելու երկրորդ փորձը, ձայների 2/3-ի գերազանցության պահանջով, անհաջողության մատնվեց 1920 թվականի մարտին] **(Ованнисян Р., США и Армения: мандат и границы, 1920 г.** - «Պատմա-բանասիրական հանդես», 1995, N 2, էջ 120): Առաջիկայում տապալվելու էր, ներքին, թե արտաքին ազդակների ճընշման տակ, վիլսոնյան խոյանքը դեպի համաշխարհային հզորության շողացող բարձունքներ, երևակայությունից զուրկ քաղքենուն անընմբռնելի էր մնալու նախագահի մտքի թռիչքը, որը թերևս սեփական անձի ներքին ծալքերի հակասությունների մեջ խճճված Զիգմունդ Ֆրոյդին առիթ էր տալու նախագահի անձը և մտային ոստյունները հետագայում տեղավորելու «հոգեվերլուծության» (պսիխոանալիզ) կասկածելի եզրահանգումների շրջանակներում: Մինչդեռ, Վիլսոնի մահից ինը տարի հետո ԱՄՆ-ի նոր նախագահ Ֆրանկլին Դ. Ռուզվելտը «հպվելու» էր Վիլսոնի ժառանգությանը, ցավոք առանց Թոմաս Վուդրո Վիլսոնի և առանց «Վիլսոնյան Հայաստանի»:

(Շարունակելի)

Կոստյումի, ճաղոնական հագուստի և... «Սարդարապատի» մասին



Երբ մի որևէ ֆիլմ կամ ցանկացած գեղարվեստական գործ, հանրության ուշադրությանը չներկայացած, այսքան աղմուկ է հանում, ակամա մտածում ես, որ դրա հեղինակը, հավանաբար, ինչ-որ նորարարություն է արել, ու ֆենադաստները, ովքեր տվյալ հեղինակի նման չեն մտածում, ուղղակի արգելափակում են նրա գործը: Նման մի իրավիճակ է ստեղծվել նաև Տիգրան Խզմալյանի «Սարդարապատ» փաստավավերագրական կինոնկարի շուրջ, որի սկավառակները, չնայած պետական արտոնագրի բացակայությանը, արդեն շրջում են հասարակության մեջ՝ ձեռից-ձեռն անցնելով:

Ի՞նչն է պատճառը, որ երիտասարդ և շնորհաշատ կինոռեժիսորի ստեղծագործությունը «Հայկ» կինոստուդիայի կողմից, որտեղ այն նկարահանվել է, չի երաշխավորվում հանրային ցուցադրության: Արդյոք մենք գործ չունե՞նք այլախոհությունը մերժող հերթական փորձի հետ: Այս հարցերի պատասխանը փորձեցինք ստանալ «Հայկ» կինոստուդիայի տնօրեն, ՀՀ կինեմատոգրաֆիստների միության նախագահ Ռուբեն Գևորգյանցից:

- Պարոն Գևորգյանց, նախ մի քանի խոսքով ներկայացրեք, խնդրեմ, մեր նոր պատմության շրջանի կարևորագույն իրադարձություններից մեկի՝ Սարդարապատի հերոսամարտի մասին վավերագրական ֆիլմ նկարելու նախաձեռնությունը:

- Կարծում եմ՝ կարիք չկա մի ավելորդ անգամ ևս նշել, որ Տիգրան Խզմալյանին հանձնարարելով պետպատվերի շրջանակներում ֆիլմ նկարել Սարդարապատի հերոսամարտի մասին, առաջին հերթին հաշվի ենք առել նրա՝ որպես արվեստագետի կշիռն ու կարողությունները: Վերջապես մենք ծանոթ ենք նրա մի քանի վավերագրական աշխատանքներին, որոնք, չնայած որոշ թերություններին, (այդպիսի թերություններ ամենահաջողված ֆիլմերն էլ ունենում են), բավականին բարձրաճաշակ գործեր են: Նույնը թերևս կարելի է ասել նաև «Սարդարապատի» մասին, որն արված է բարձր վարպետությամբ ու ճաշակով: Սակայն, Տիգրանը, ով առաջին օրը չէ կինեմատոգրաֆում, արհամարհել է պետական ընդունված աշխատաձևը: Բանն այն է, որ պետպատվերի

շրջանակներում ֆիլմ նկարելուց առաջ նախապես ներկայացվում են սցենարը, նկարահանման նյութը և, որ ամենակարևորն է, տեքստը: Չէ՞ որ սա առաջին հերթին տեքստային ֆիլմ է, և այստեղ ամենակարևորն այն է, թե կադրի հետևում ինչի մասին է խոսվում: Տեքստը հաստատելուց հետո միայն սկսվում են նկարահանումները: Այդ բոլոր պրոցեդուրաներն իրականացնելուց հետո Տիգրանը մեր ստուդիայում փաստորեն աշխատեց մոտ երեք ամիս՝ նկարահանումների համար ծախսելով (աշխատավարձեր, գործուղումներ և այլն) նախատեսված 3,5 միլիոնից ընդամենը մեկ միլիոն հարյուր հիսունյոթ հազար դրամ: Արդյունքում նա ներկայացրեց մի ֆիլմ, որը դիտելուց հետո մեր առաջին զգացումը, որ ապրեցինք, տարակուսանքն էր: Տարակուսեցինք, որովհետև այնտեղ ոչ թե նոր բան էր ասվում հայտնի պատմական իրադարձության մասին, այլ այդ իրադարձության մասին ասվում էր այն, ինչ մենք կարդում էինք վաթսունական թվականներին՝ կոմունիստական պրոպագանդայի թույլատրած սահմաններում, այն է՝ Սարդարապատում քաղաքական ղեկավարությունն ու զինվորական վերնախավը որևէ էական դեր չեն կատարել, և հաղթանակն էլ ապահովել է ինքնաբուխ ոտքի ելած ժողովուրդը՝ մի քանի եկեղեցական այրերի առաջնորդությամբ: Փաստորեն հենց այս կոնցեպցիայով էլ կառուցվել է ողջ տեքստը, որ ընդամենը պատառիկներ է պարունակում Արամի, Ռուբենի, այդ գոյամարտի մյուս ոգեկոչողների ու զինվորական հրամանատարների դերակատարության մասին: Պատկերացրեք, օրինակ, Նազարբեկովի ու նրա նման մարդկանց մասին ընդհանրապես խոսք չկա այս ֆիլմում: Կարճ ասած՝ խեղաթյուրված է Սարդարապատի հերոսամարտի ողջ պատմությունը:

- Իսկ մեր պատմաբանները դիտե՞լ են ֆիլմը, ի՞նչ կարծիքի են նրանք:

- Գուցե չհավատաք, բայց ես իրավիճակը շտկելու համար Տիգրանին առաջարկել եմ, իմ կարծիքով, շատ հետաքրքիր մի քայլ: Հրավիրենք պատմաբաններին, թող նրանք համատեղ դիտեն ֆիլմը, իսկ հետո քննարկեն այն, վիճեն, և այդ վեճը նույնպես նկարահանվի: Սա ես կարևորում եմ այն իմաստով, որ խնդրո առարկա ժամանակաշրջանը հիրավի բարդ ու հակասություններով առլեցուն մի ժամանակաշրջան էր՝ մի կողմից ցեղասպանությունից հրաշքով փրկված և հայրենիքի մի փոքրիկ հատվածին ապավինած գաղթականներ, անկազմակերպ ներքին կյանք, զանազան քաղաքական հոսանքներ, դեպի երկրի սիրտը սողացող թշնամի, իսկ մյուս կողմից՝ այս ամենի վրա պետականություն ձևավորելու աննկուն կամք ու համառություն, բանակ ստեղծելու, թշնամու դեմն առնելու գերմարդկային ջանքեր: Սխալներն էլ, իհարկե, անխուսափելի էին, և կարելի է քննադատել, բայց պետք է այս ամենը հաշվի առնելով քննադատել, և ոչ թե դա անել, որովհետև դու այդպես ես ուզում: Տիգրանը, սակայն, հրաժարվեց իմ առաջարկից:

Ինչ վերաբերում է պատմաբանների կարծիքին, ասեմ, որ մենք ֆիլմը տվեցինք դիտելու երեք պատմաբանների, ովքեր, ինչպես և սպասվում էր, իրենց անհամաձայնությունը հայտնեցին Սարդարապատի ճակատամարտի ու նրա նշանակության մասին Տիգրան Խզմալյանի մեկնաբանություններին:

- Դրանից հետո՞ էլ Տիգրան Խզմալյանը չի ընդունում իր կողմից պատմական իրադարձության, մեղմ ասած, սխալ ընկալումն ու մեկնաբանությունը:

- Իմ կարծիքով՝ Տիգրանը դժվարանում է ընդունել սուր ու տեղին քննադատությունը: Այդ պատճառով էլ, կարծում եմ, նա անընդհատ մատնանշում է պրոֆ. Մ. Կարապետյանի հայտնած կարծիքի այն մասերը միայն, որտեղ հարգարժան գիտնականը խոսում է ֆիլմի դրական կողմերի մասին: Ես նույնպես, ինչպես արդեն վերևում ասացի, բարձր եմ գնահատում այն պրոֆեսիոնալիզմը, որով նկարահանվել է այս ֆիլմը, բայց ի՞նչ է իրականում նկարահանվել: Պատմական նյութը, ես հատկապես երիտասարդության մասին եմ մտածում, սխալ է

հրամցվում. սա է խնդիրը, որով մտահոգ են նաև գիտնականները:

- Այդ դեպքում ինչպե՞ս է երիտասարդ կինոռեժիսորը բացատրում պետպատվերի պահանջների անտեսումն ու պետական միջոցներով իր կամայական մոտեցումները հասարակությանը պարտադրելու այս երևույթը:

- Այս հարցը, բնական է, մեր կողմից նույնպես դրվել է ֆիլմի հեղինակի առջև: Պատասխանն առավել քան արտառոց էր: Նա փորձում է մեզ համոզել, որ մեր պատվիրածն ընդամենը 30-40 րոպեանոց ֆիլմ է, իսկ ինքը պատրաստել է մեկ ժամ ութ րոպե տևողությամբ մի նկար, որը պետական միջոցների հետ որևէ կապ չունի և ֆինանսավորվել է բոլորովին այլ հովանավորների միջոցներով: Նա նաև հավաստիացնում է, որ այլ արխիվներ ևս ուսումնասիրելու նպատակով ստիպված է եղել գնալ Մոսկվա և Ստամբուլ, ինչը, մեր կարծիքով, այնքան էլ նպատակահարմար չէր, քանզի անհրաժեշտ բոլոր արխիվներն էլ կան Երևանում: Այնուամենայնիվ, եթե դա իրոք այդպես է, ապա Տ. Խզմալյանը պարտավոր էր նաև նշել իր ուսումնասիրած աղբյուրները, որովհետև վաղը կարող է հեղինակային իրավունքի անտեսման հարց առաջանալ: Մի կարևոր հանգամանք ևս. որպես իր խորհրդատու՝ Խզմալյանը նշում է ոմն Տիգրան Հակոբյանի (չշփոթել ՀՀ հեռուստառադիոպետկոմի նախկին նախագահ Տիգրան Հակոբյանի հետ,- Ա. Ս.), որի ով լինելն այդպես էլ չի պարզվել:

Չնայած մեր հարցադրումներին՝ Տիգրան Խզմալյանը շարունակում է իր ֆիլմը ցուցադրել և մեղադրում է մեզ, թե իբր մենք արգելում ենք այն ցուցադրել կինոթատրոններում և հեռուստատեսությամբ: Իրականում մենք որևէ իրավունք չունենք ֆիլմի ցուցադրությունն արգելելու: Կա օրենք՝ եթե դու պետպատվերի շրջանակներում ես ֆիլմ նկարահանել, ուրեմն պետք է ներկայացնես նաև պետական լիցենզիա: Բայց, քանի որ հեղինակը պնդում է, որ դա այն ֆիլմը չէ, մենք չենք կարող կինոթատրոններին արգելել ցուցադրել: Իրենց որոշելիքն է, եթե ցանկանում են ցուցադրել, թող ցուցադրեն, իսկ թե դրան ինչ վերաբերմունք ցույց կտա հանրությունը, դժվարանում եմ ասել:

Մեկ անգամ ևս ընդգծեմ, որ մեր խնդիրը ֆիլմի ցուցադրությունն արգելելը չէ, այլ այն, որ մենք Տ. Խզմալյանին պատվիրել ենք մի բան, իսկ նա մեզ ներկայացրել է բոլորովին այլ բան: Պատկերավոր ասած՝ պատվիրել ենք կոստյում, իսկ նա կարել է ճապոնական անհասկանալի հագուստ:

- Իսկ ծախսված գումա՞րը...

- Իհարկե ցանկալի է, և մենք էլ պահանջում ենք, որ նա այդ գումարը ետ վերադարձնի, սակայն այս դեպքում կարևորը գումարը չէ: Ես գտնում եմ, որ այս ֆիլմն ուղղակի դիվերսիա է պատմական իրողությունների հանդեպ: Ճիշտ հասկացեք, ես չեմ պնդում, որ այս կամ այն ժամանակաշրջանի, այս կամ այն քաղաքական գործչի, այս կամ այն կոնկրետ իրադարձության հանդեպ բոլորը պետք է նույն կարծիքը ունենան, բայց նաև չեմ կարող համաձայնել, որ այլակարծության անվան տակ կեղծիք, բացահայտ կեղծիք հրամցվի, ինչպես դա անում է Տիգրան Խզմալյանը: Նա կարծում է, թե այս ֆիլմով դեղահաբեր է տալիս հանրությանը, որպեսզի վերջինս ընդունի դառը ճշմարտությունը: Այո, ճշմարտությունը երբեմն նաև դառն է լինում, իսկ ո՞ւր է Տիգրան Խզմալյանի ճշմարտությունը, որ մեր պատմաբաններից և ոչ ոք չի ընդունում: Այսօր մենք նրան առաջարկում ենք նույնիսկ շտկումներ կատարել, սրբագրել ֆիլմում տեղ գտած անձնանուններն ու տեղանունները, որոնք խայտառակ սխալներ են պարունակում, չի ընդունում: Ի՞նչ կարող ես անել, մարդը համաձայն չէ, և վերջ: Դեռ ավելին, մեզ մեղադրում է 37 թվականի մեթոդներ կիրառելու մեջ:

Զրույցը վարեց

ԱՇՈՏ ՍԱՀԱԿՅԱՆԸ



«Հայկ» կինոստուդիան նկարահանել է «Սարդարապատ» վավերագրական անհաջող ֆիլմը, որում հիմնավորապես աղավաղված է պատմական ճշմարտությունը:

Հեղինակ Տիգրան Խզմալյանի հիմնական «սկզբնաղբյուրները» եղել են այդ դեպքերին նվիրված, սուբյեկտիվ դիրքերից գրված և բազմաթիվ սուտ ու սխալ տեղեկություններով ծանրաբեռնված Հարություն Թուրշյանի «Սարդարապատի հերոսամարտը» գիրքը, ինչպես նաև այդ գրքի համար ակադ. Աշոտ Հովհաննիսյանի գրած առաջաբանը:

Լիովին անտեսելով ՀՅԴ ծավալած վիթխարի գործունեությունը՝ ճակատամարտը կազմակերպելու և հաղթական ավարտի հասցնելու գործում՝ նրանք գտնում են, որ ճակատամարտը սկսվել է տարերայնորեն, որ դա ժողովրդական պատերազմ էր: Հակագիտական այդ թեզը հիմնավորելու համար համարյա զրոյի է հասցված ճակատամարտի հրամանատար գեներալ Սիլիկյանի, զինվորական շտաբի և այդ ծանր ժամանակներում ժողովրդի կողմից դիկտատոր հռչակված Հայաստանի Հանրապետության հիմնադիր Արամ Մանուկյանի դերը:

«Սարդարապատ» ֆիլմը սուբյեկտիվ դիրքերից նկարահանված ֆիլմ է, որը կոչված է թյուրիմացության մեջ գցելու անտեղյակ դիտողներին: Նրա հիմնական նպատակն է ևս մեկ անգամ անտեսել ՀՅԴ դերը մեր ժողովրդի պատմության մեջ:

Ֆիլմը այս կերպ չի կարելի ցուցադրել:

Վարդան ԳՐԻԳՈՐՅԱՆ
Պատմական գիտությունների դոկտոր, Մատենադարանի փոխտնօրեն

Տիգրան Խզմալյանի կողմից ներկայացված «Սարդարապատ» վավերագրական ֆիլմն անդրադառնում է Սարդարապատի հերոսամարտին նախորդած իրադարձություններին և 1918 թ. մայիսին Սարդարապատում, Բաշ-Ապարանում և Ղարաքիլիսայում տեղի ունեցած հերոսամարտերին:

Բարձր գնահատելով նման ֆիլմ ստեղծելու գաղափարը, այդուհանդերձ, ցավով պետք է արձանագրեմ, որ ֆիլմի սցենարը, իրագործման մեթոդը և հեղինակային մոտեցումը չեն ապահովել ֆիլմի պատմականության սկզբունքն ու վավերագրական ժանրին հատուկ մոտեցումները:

Առանձնապես աչքի է ընկնում հեղինակի ձգտումը XX դարի սկզբի իրադարձությունները մեր իրականության պրիզմայով նայելու խիստ անհաջող փորձն ու տրամադրվածությունը:

Ֆիլմում առկա են պատմական դեպքերի ու դեմքերի նկարագրության և դրանց հաջորդականությանն առնչվող սխալներ կամ խիստ վիճելի պնդումներ ու ձևակերպումներ: Օրինակ՝ «Գալուբոլա (պետք է լինի Գալիբոլու)՝ այսինքն Դարդանել», «ազերիներ», «Ֆևիկ փաշա՝ այսինքն մարշալ», «10 միլիոնանոց թուրք ազգություն» և այլ ձևակերպումներ:

Կարծում եմ ֆիլմը հեղինակի կողմից լուրջ վերանայման ու խմբագրման կարիք ունի, քանզի նման վիճակում ֆիլմի մասսայական թողարկումը համարում եմ անցանկալի:

Հայկ ԴԵՄՈՅԱՆ
Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտի տնօրեն

Համակ ուշադրությամբ, գիտական փորձագետի նախատրամադրվածությամբ ու մեծագույն բավականությամբ դիտեցի Տիգրան Խզմալյանի «Սարդարապատ» փաստավավերագրական ֆիլմը:

Ֆիլմում ճշմարտացիորեն է ներկայացված հետպատերազմյան խառնակ իրավիճակը և Սարդարապատի հերոսամարտի ընթացքն ու արդյունքները: Ընդհանուր առմամբ պահպանված է պատմական օբյեկտիվությունը: Այն համեմված է հեղինակի բավական ինքնատիպ դատողություններով ու մտահոգություններով, որոնց մի զգալի մասի հետ կարելի է անվերապահորեն հա-

մաձայնել: Ազդու և պատկերավոր է ներկայացված հերոսամարտի համաժողովրդական բնույթը: Դա շատ լավ է ու շատ ճիշտ: Սակայն, ցավոք, դրանից տուժել է պատմական օբյեկտիվությունը: Եթե չասենք անտեսված, ապա որոշակիորեն թերագնահատված է հայ հայրենասեր զորահրամանատարներ Թովմաս Նազարբեկյանի և Մովսես Սիլիկյանի դերակատարումը, որոնց է պատկանում ճակատամարտում թուրքական հորդաներին ջախջախելու ռազմավարական պլանի մշակման ու իրականացման պատիվը: Մեր կարծիքով չափազանցված են նաև հայ ազգային-քաղաքական որոշ գործիչների ապաշնորհության և անտեղյակության վերաբերյալ պնդումները:

Հարկ է նկատի ունենալ, սակայն, մեկ հանգամանք. պատմաբանների շրջանում Սարդարապատի հերոսամարտի շատ հարցերի վերաբերյալ կարծիքներն ու գնահատականներն առ այսօր միասնական չեն. դրանք շատ հաճախ հակասական են ու իրարամերժ, ինչը, հավանաբար, ազդել է ֆիլմի վրա: Ֆիլմում նոր վարկած է առաջ քաշված Անդրանիկի զորաբաժնի՝ Ղարաքիլիսայի ճակատամարտին չմասնակցելու վերաբերյալ. մեր կարծիքով միանգամայն անհիմն կերպով այն ներկայացված է իբրև գեներալ Թովմաս Նազարբեկյանի հերթական ապաշնորհության արդյունք: Չենք կարող համաձայնել նաև հեղինակի այն պնդմանը, թե մենք հաջողություններ ենք ունեցել միայն այնտեղ, որտեղ բացակայել է զինվորական և քաղաքական ղեկավարությունը:

Կարելի է հիշատակել նաև այլ փաստական ոչ էական մեղանչումներ:

Նշված թերությունները, սակայն, հեշտ ուղղելի են: Կարևորն այն է, որ Սարդարապատի հերոսամարտի վերաբերյալ ստեղծված է չափազանց հետաքրքիր ու ինքնատիպ մի գործ, որի էկրան բարձրանալը միայն ու միայն ողջունելի է:

Մ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ
Պրոֆեսոր



Վավերագրական ֆիլմի հեղինակը փորձել է պատմական հանրահայտ իրադարձությունների և փաստերի վերաբերյալ իր կարծիքով «օբյեկտիվ և հեղինակային» խոսք ասել, նոր մոտեցում ցուցաբերել, բայց չստանալով պատշաճ գիտական խորհրդատվություն, հիմնականում, հանգել է ոչ ճիշտ եզրակացությունների: Ավելի շուտ կրկնվում են 20-րդ դարի 60-ական թվականների տեսակետները (Հ. Թուրշյանի գիրքը և այլն), երբ մեղադրվում էին ռազմական վերնախավն ու դաշնակցական գործիչները և դրան անհիմն կերպով հակադրվում էր հաճախ ցանկալի համաժողովրդական, նույնիսկ պարտիզանական պայքարի մեկնակետը: Այս նույն թեզը մի քանի նորարարություններով ընկած է հեղինակի եզրակացությունների հիմքում: Ստացվում է, որ հայ ազգաբնակչությունը տարերային կերպով ոտքի է կանգնել և առանց ղեկավարության մասնակցության հաղթանակներ տարել: Այստեղից էլ հեղինակի մարտահրավեր հիշեցնող եզրակացությունը՝ «Հայերը հաղթում էին այնտեղ, որտեղ չկար զինվորական և քաղաքական ղեկավարու- թյուն»: Այս համատեքստում Գևորգ Ե Ամենայն Հայոց կաթողիկոսի և հոգևորականության դերը դարձյալ հակադրվում է մյուս գործիչներին: Խնդիրն այն է, որ հարցերը կարելի է ավելի սուր և անկեղծ մեկնաբանել, եթե դրանք հիմնված են պատմական փաստերի վրա և ընդգրկում են ողջ ռազմաքաղաքական, բարոյահոգեբանական ստեղծված պատկերը:

Ստեղծագործական խմբի, հեղինակի հետ մենք կարող ենք երկար զրուցել, վիճել, ճշգրտումներ կատարել, սակայն այստեղ հարկ ենք համարում կանգ առնել մի քանի հարցերի վրա:

1. Գոնե Սարդարապատում համաժողովրդական պայքար որպես այդպիսին չի եղել, քանի որ 1918 թ. մարտ-ապրիլ ամիսներից սկսած Արարատյան դաշտի, Երևանի նահանգի հայ ազգաբնակչության մեծ մասը խուճապահար փախչում էր Սևան-Դիլիջան-Թիֆլիս ճանապարհով: Այդ խուճապը համակել էր նաև հայ ռազմաքաղաքական վերնախավի մի մասին: Միևնույն ժամանակ, այդ խուճապին վերջ դնողը Սարդարապատում Արամն էր, Ղարաքիլիսայում՝ Նժդեհը, որոնց դերը ֆիլմում գրեթե չի երևում:

«Սարդարապատի հրաշքը» Արամի և նրա համախոհների 1917 թ. աշնանից սկսած աշխատանքի արդյունքն է: Ինչ վերաբերում է բուն ճակատամարտին,

ապա Սարդարապատում կռվել են հենց կանոնավոր հայկական զորամասերը և արևմտահայ կամավորական ջոկատների մնացորդները. աշխարհազոր-ժողովրդի մասնակցությունն այստեղ չնչին է: Այս չսպասված հաղթանակն է ոգևորում նույնիսկ Արամին, Սիլիկյանին, որոնք դրանից հետո միայն ձևավորում են Բաշ-Ապարանի և Ղարաքիլիսայի ճակատները, հեղինակի կողմից պիտակավորված «ապաշնորհ» Սիլիկովն ու Նազարբեկովն էին, որ հանձնարարականով ճակատ են ուղարկում և՛ Անդրանիկին, և՛ Դրոյին, և՛ Նժդեհին, և՛ մյուսներին:

2. Մայիսյան հերոսամարտերի խնդրում խիստ կարևորվում է անդրկովկասյան միացյալ կառավարությունների, դրանց անդամների հակասությունների, այդ բարդ իրավիճակում Դաշնակցության վարքագիծը, քաղաքական կողմնորոշման հարցը, որով էլ պայմանավորվում են թե՛ օբյեկտիվ և թե՛ սուբյեկտիվ բազմաթիվ ենթահարցեր, ինչպես, օրինակ, Անդրանիկի վարքը Ղարաքիլիսայում և այլն:

Ցավոք, հեղինակի մոտ սթափ գիտական համակողմանի վերլուծության փոխարեն, գերիշխում է հնացած մեղադրանքների և անվստահության կեցվածքը:

3. Դիտողությունների հաջորդ խումբը վերաբերում է նկատված անձնանունների, անվանումների աղավաղումներին.

Քյազիմ Ղարաբեքիր - Կարաբեքիր

Գալուբոլու - Գելիբոլու

Թուշյան - Տոշյան

Յանկևսկի - Յանկովսկի

Նազարբեկով, Սիլիկով, Փիրումով - Վաղուց -յան ենք ասում:

Ալեքսանդրո՛պոլ - Ալեքսանդրապո՛լ

ադրբեջանցի - Կովկասի թաթարներ և այլն:

4. Ֆիլմում կան տասնյակ փաստական սխալներ.

ա) Ճիշտ չեն մեկնաբանվել էրզրումի անկման պատճառները, չի խոսվում Անդրանիկի, Մորելի և մյուսների մասին: Միայն Լեռ Կամսարի վկայությունը քիչ է հեռուստադիտողի համար:

բ) Գերապատվություն է տրվում Ստ. Շահումյանի հետ Արամ-Ռուբեն համագործակցությանը, անտեսելով հիմնականը՝ Շահումյան-Ռոստոմ-Անդրանիկ կապը:

գ) Ճիշտ չեն ներկայացված հայ հասարակության պառակտման պատճառները:

դ) Թուրքերը Անդրկովկաս են արշավել ոչ թե 1918 թ. գարնանը, այլ փետրվարին:

ե) Բաթումի բանակցությունները 1918 թ. ամռանը չեն, այլ ապրիլ-մայիսին:

զ) Միջազգային իրադրությունը պատշաճ կերպով չի լուսաբանված:

է) Մ. Սիլիկյանը չի մեկնել Գևորգ Ե-ի մոտ:

ը) Չի երևում Արամի, Շահխաթունու, Փիրումյանների վճռական դերը:

թ) Սարդարապատի հատվածում անցնում է Անդրանիկի նկարը - չի մասնակցել:

ժ) Շնեուրը գերմանացի չէ, այլ էլզաս-լոթարինգիացի:

ժա) Սարդարապատի ճակատի ուժերը չեն ներկայացված, այստեղից էլ գլխավոր թյուրիմացությունը:

ժբ) Նժդեհը ամենևին կապ չունի Բաշ-Ապարանի ճակատամարտի հետ:

ժգ) Սխալմամբ նշվում է, որ Ղարաքիլիսայում «մերոնք ունեին 15.000 զինվոր», կռվում է 7000 հայ:

ժդ) Սխալ է ներկայացվել Նազարբեկյան-Անդրանիկ խնդիրը:

Ցավ եմ հայտնում, որ ֆիլմի համար ընտրված վավերագրական արխիվային կադրերը հիմնականում չեն ծառայել իրենց նպատակին:

Օգտագործելով առիթը ուզում եմ «Հայկ» կինոստուդիայի ղեկավարությանը դիմել խնդրանքով, որպեսզի հեղինակային խոսքին զուգահեռ հնչող երաժշտական ձևավորումը ցածր լինի: Թեև Տ. Խզմալյանի կողմից Առնո Բաբաջանյանի և էդ. Միրզոյանի ստեղծագործությունները տեղին են ընտրված, սակայն, ինչպես վերջին տարիներին ընդունված է, ձայնը խեղդում է տեքստին, և կարծես ձևական պլանային սյուժեներ են ստացվում:

Ցանկալի կլիներ նաև, որպեսզի մինչև ֆիլմի նկարահանումը հեղինակային խումբը ստանար գիտական համեստ խորհրդատվություն:

Վահան ՄԵԼԻՔՅԱՆ
ՀՀ ԳԱԱ Պատմության ինստիտուտի ավագ գիտաշխատող, Հայ-ռուսական (Սլավոնական) պետական համալսարանի Համաշխարհային պատմության և միջազգային հարաբերությունների ամբիոնի վարիչ



Սարդարապատի հերոսամարտի պատմաշինության «փաստավավերագրական» փորձը

Կարեն Խանլարյան

Սարդարապատի հերոսամարտի 90-ամյակի առիթով, կինոռեժիսոր Տիգրան Խզմալյանը վերջերս պատրաստել է մի «փաստավավերագրական» ֆիլմ, որը, մեղմ ասած, ոչ միայն չի ներկայացնում իրականության ծալքերը, այլեւ պարունակում է պատմագիտական բազմաթիվ անճշտություններ:

Ես չեմ պատրաստվում պատմական փաստարկներով հանդես գալ այդ պատմաշինական նոր փորձի դեմ, ինչպես ցարդ վարվել են Արշալույս Աստվածատրյանը, Կարո Սասունին եւ ուրիշները պատմագիտական շատ լուրջ քննարկումների, առանձին աշխատությունների միջոցով (տես Արշալույս Աստվածատրյանի «Սարդարապատի պատմաշինությունը» աշխատությունը, որը լույս է տեսել Բեյրութում 1966 թ. եւ վերահրատարակվել Երեւանում 2007 թ.):

Մտադիր եմ միայն ուշադրություն հրավիրել պատմական մի շատ կարեւոր հանգամանքի վրա: 1962 թ. մարտի 14-ին հատկանշական մի հանդիպում է տեղի ունեցել Անաստաս Միկոյանի եւ հայ գրողների միջեւ Երեւանում[1], որի ընթացքում, ի շարս բազմաթիվ հարցերի, քննարկվել է նաեւ Սարդարապատի հերոսամարտի պատմագիտական արգելափակման եւ այդ արգելափակման վերացման հնարավորությունների հարցը: Հիշեցնեմ, որ մինչ այդ Սարդարապատի հերոսամարտը հանդիսացել է սովետական պատմագիտության տաբուներից, արգելափակված թեմաներից մեկը:

Գրող Հրաչյա Քոչարը գիտակցելով, որ հայ սերունդների համար այլեւս հնարավոր չէ փակ պահել այդ թեման, այդ հանդիպման ժամանակ դիմել է Միկոյանին. «*Անաստաս Իվանովիչ, կուզենայի Ձեր կարծիքը իմանալ հատկապես 1918-1920 թթ. հայ ժողովրդի մղած կռիվների մասին, թուրքական ներխուժման դեմ,*- ապա՝ ավելացրել,- *ճիշտ է, Դաշնակցությունն էր քաղաքական տիրող կուսակցությունը, բայց չէ՞ որ ժողովուրդն էր կռվում: Շատ ճակատամարտեր նույնիսկ տարերային են եղել, առանց դաշնակների ղեկավարության, ինչպես Սարդարապատի ճակատամարտը... Ինչո՞ւ լռենք եւ դաշնակները այդ ճակատամարտի փառքն իրենցը համարեն*»[2]: Թերեւս Քոչարը մտածում էր, որ «տարերային» ներկայացնելով Սարդարապատի հերոսամարտը, գոնե հնարավոր կլինի համոզել Կոմկուսի վերնախավին արգելափակումից հանելու պատմական այդ դրվագը: Պարագան թերեւս հասկանալի է Հ.

Քոչարի դեպքում, սակայն միանգամայն անբացատրելի են Խզմալյանի անհիմն պնդումները հերոսամարտի տարերային լինելու մասին: Այդ ինչպես պատահեց, որ ժողովուրդը միանգամից, մի երեք-չորս քահանայի գլխավորությամբ, մարտադաշտ հանեց բազմաթիվ հայ գյուղացիների, զինվորների՝ բահերով, զենք-զինամթերքով, թնդանոթներով, եզդիների զինված խմբերի, հույն, ռուս, անգլիացի կամավորների հետ միասին…

Քոչարը տեսնում էր հիմնական պարադոքսը. ինչպե՞ս կարող էին «հակահեղափոխական», «հակասովետական» դաշնակները փրկել Հայաստանը, որի տարածքում, դրանից հետո, հաստատվել էին սովետական կարգեր: «*Ես եղել եմ արտասահմանում*,- վերը հիշատակված հանդիպման ժամանակ ասել է Քոչարը,- *դաշնակցականները այնտեղ ասում էին, որ եթե չլիներ Սարդարապատի ճակատամարտը, թուրքերը Հայաստանը կգրավեին եւ այսօր Սովետական Հայաստան չէր լինի*»: Քոչարը փորձել է պարադոքսը մի կերպ լուծել իր էմոցիոնալ, հրապարակախոսական մոտեցումներով. «*Ես պատասխանեցի, թե այո, այդպես է, բայց Սարդարապատի ճակատամարտը մղեց հայ ժողովուրդը եւ ինքն էլ սովետական կարգեր հաստատեց ու դուրս արեց ձեզ*»[3]:

Միկոյանը՝ համամիութենական մակարդակի այդ փորձառու ղեկավարը, որ երիտասարդ տարիքում հաճախ էր գտնվել կովկասյան քաղաքական թնջուկներում, ըստ էության, չէր էլ կարող հավատալ Քոչարի «տարերայնության» մասին էմոցիոնալ հեքիաթներին: Նա շատ տրամաբանորեն է փորձել պարադոքսը լուծել Քոչարի համար. «*Պետք է լուսաբանել, գնահատել հայ ժողովրդի պայքարը թուրքական տիրապետության դեմ*,- ասել է Միկոյանը,- *որը եղել է ազատագրական պայքար… Դա եւ՛ ազգային-ազատագրական կռիվ էր, եւ թե՛ դրական հետեւանքներով պաշտպանություն էր հեղափոխությանը: Դաշնակցությունը իր իդեոլոգիայով հակահեղափոխական կուսակցություն էր, բայց այդ կոնկրետ շրջանում դաշնակցականներն իրենց պայքարով թուրքական ներխուժման դեմ օբյեկտիվորեն հանդիսանում էին հեղափոխության դաշնակիցները, քանի որ ձգտում էին կանգնեցնել թուրքական ներխուժումը՝ թե՛ Հայաստան եւ թե՛ Անդրկովկաս: Այդ շրջանում շահերը օբյեկտիվորեն զուգադիպում էին*»[4]:

Միկոյանը իր այդ պարզաբանությամբ, փաստորեն, եւ՛ Սարդարապատի վրա դրված արգելափակումը վերացրեց, եւ՛ հանձնարարեց հայ մտավորականներին օբյեկտիվ քննարկումներ անցկացնել այդ պատմական իրադարձության շուրջ: Սակայն, ցավոք, սովետահայ պատմաբանները այդպես էլ անաչառ մոտեցումներ չցուցաբերեցին: Հ. Թուրշյանը հենց այն պատմաբանն էր, որ իր «Սարդարապատի հերոսամարտ»-ով հիմք դրեց այդ խոշոր իրադարձության «տարերային» լինելու տեսությանը, որի ազդեցությունից, ցարդ, չի ձերբազատվել Տիգրան Խզմալյանը:

Սիմոն Վրացյանը, ժամանակին արտահայտելով իր կարծիքը Հ. Թուրշյանի «Սարդարապատի հերոսամարտը» գրքի հրատարակման առթիվ, գրել է. «*Շինարարությունը Հայաստանում շարունակվում է անընդհատ: Ճարտարապետները տներ են շինում: Լրագրողները ստեր են հնարում: Գիտաշխատողները պատմություն են ստեղծում: Վերջերս մանավանդ զարգացած է պատմաշինարարությունը: Պատմական եւ ոչ-պատմական շինում ու վերաշինում են Հայոց պատմությունը «ըստ պատկերի յուրյանց»… Վերջին տարիներին Հայպետհրատը իրար հետեւից հրապարակ է շպրտում պատմաշինական հատորներ, որոնց նպատակը ոչ թե «առարկայական ճշմարտություն» փնտրելն է Հայոց պատմության մեջ, այլ Հայոց պատմությունը չափելն ու ձեւելը ըստ համայնավարական կաղապարի*»[5]:

Հարց է առաջանում. եթե այն օրերում թուրշյանները պատմություն էին շինում ի նպաստ համայնավարության, ապա այսօր ո՞ւմ շահերին են ծառայում խզմալյանները:

Ցավալի է, որ 90 տարի անց, վերանկախացած Հայաստանի Հանրապետության մտավորականության մի մասը, այդ թվում եւ «փաստավավերագրող» ռեժիսորը, դեռ ձգտում է նվաստացնել ՀՅ Դաշնակցության եւ Արամ Մանուկյանների, Ռուբեն Տեր Մինասյանների, Զորավար Նազարբեգյանների հիմնարար դերակատարությունը, ու դեռ շարունակում է դեգերել սովետական պատմաշինության բավիղներում:

Ծանոթագրություններ

1 Մկրտչյան Լ., Հայրենական վկայություններ, Բեյրութ, 1986, էջ 103-136:
2 Նույնը, էջ 111:
3 Նույնը, էջ 112:
4 Նույնը, էջ 113:
5 Աստվածատրյան Ա., Սարդարապատի պատմաշինությունը, Երեւան, 2007 թ., էջ 17:

Թշնամու և հերոսի կերպարը

հայ և թուրք ինքնությունների հարաբերման կիզակետում

ԱՐԵԳ ՍԱՎԳՈՒԼՅԱՆ

Պաշտոնական քարոզչության մեջ թշնամու կերպարի կերտման գործընթացը մշտական բնույթ է կրում: Այն հասարակական գիտակցության մեջ ձևավորում է թե՛ արտաքին և թե՛ ներքին թշնամու կարծրատիպը: Թշնամու կերպարի կերտումը ստեղծում է արտաքին կամ ներքին վտանգի պատրանք, որի սերմանումը հասարակական գիտակցության մեջ նրան դարձնում է կառավարելի ու վերահսկելի: Սա, միաժամանակ, ոչ միայն զգոն է պահում հասարակության պաշտպանական բնազդները, այլև հասարակությանը պահում է ագրեսիվ վիճակում իր պոտենցիալ հակառակորդի նկատմամբ: Իբրև թշնամու հակակերպար՝ գործում է ազգային հերոսների ինստիտուտը: Հերոսը ազգային արժեհամակարգում գրավում է հասարակական իդեալի դերը, որի օրինակով պետք է դաստիարակվի նոր սերունդը: Հակահերոսը թշնամին է, որին ոչնչացնելուն կամ որից պաշտպանվելուն է նպատակաուղղվում տվյալ հասարակության գիտակցական կամ ենթագիտակցական գործունեությունը: Հերոսը հասարակության մինիմոդելն է, և այն մշտական հակադրության մեջ պետք է լինի հակառակորդ-թշնամու հետ: Հերոսի և թշնամու հակամարտությունը արտահայտվում է ազգային մշակույթի բոլոր ոլորտներում: Նման կերպարների արարման գործառույթ իրականացնում են նաև կրոնական հաստատությունները:

«Մենք»-ի և «նրանք»-ի պատմաավանդական հակադրումը ունի բնական հիմքեր և խոր արմատներ

հայ և թուրք ինքնությունների հարաբերման համատեքստում:

Թյուրքական տարրն առաջին անգամ Հայկական լեռնաշխարհ թափանցում է 11-րդ դարում: 1299 թ. Օսմանի գլխավորությամբ հիմք է դրվում ապագա Օսմանյան կայսրությանը: Այն հետագայում պետք է ճակատագրական դերակատարում ունենար մեր պետականության ապագայի համար՝ սպառնալով նրա անվտանգությանը, տարածքային ամբողջականությանը և էթնիկ գոյությանը:

Հայկական լեռնային կղզին հայրենամայկներ շարունակ ենթարկվել է ասպատակությունների, և մեզանում թշնամու կերպարի կերտման գործընթացն անցել է մի շարք պատմական փուլեր:

7-րդ դարի արաբական արշավանքներից սկսած Հայաստանի հիմնական հակառակորդ են դառնում իսլամ ընդունած ցեղերը և մեզանում սկսում է աստիճանաբար ձևավորվել թշնամու մահմեդական կարծրատիպը: Թյուրքական ցեղերը (սելջուկ թուրքեր, ակ-կոյունլուներ, կարակոյունլուներ), քրդերը, արաբները, պարսիկները տարբեր ազգություններ էին ներկայացնում, բայց իբրև թշնամի-հակառակորդ ընդհանրացվում էին՝ պատկանելով մի կրոնի՝ իսլամի: Թշնամու մահմեդական կերպարի ձևավորմանը նպաստում էր և՛ նրանց կողմից բռնի ձուլման քաղաքականությունը, և՛ դրան ի հակադրում մեր եկեղեցու կողմից քրիստոնեական հայապահպանությամբ պատնեշումը: Ըստ այդմ, Հայաստանը նմանվում է քրիստոնեական կղզյակի, որի շուրջբոլորը (բացառությամբ Վրաստանի) ողողված էր մահմեդական օվկիանով: Տասներեք դար շարունակ հայերը ունեցել են սուր բախումներ մահմեդական հարևանների հետ՝ ընդհուպ Կիլիկյան Հայաստանը: Իհարկե, տարածաշրջանային զարգացումների դիտարկումը միայն կրոնական դիտանկյունից բավարար չէ:

Ոչ պետականության ժամանակաշրջանում մեր ազգի կենսագրությունը շարադրվում է իբրև գոյապայքարի և ինքնության պահպանման պատմություն:

Մեր ազգային ինքնության պահպանման օրակարգում իրենց արդիականությունը երբևէ չկորցրին թշնամուն դիմակայելու և հակադարձելու, ձուլման քաղաքականությունից խուսափելու, ազգային մշակույթը պահպանելու հիմնախնդիրները:

Թշնամու կերպարի մեջ առանձնացնում ենք և՛ կրոնական, և՛ ազգային երանգը: Կրոնականը տիրապետող է եղել մինչև 18-19-րդ դարերը, որից հետո առաջին պլան է մղվել թշնամու ազգային դիմագիծը՝ ի դեմս թուրքերի:

Թշնամու կերպարը 18-19-րդ դարերում. Զինյալ դայֆարի սերունդ. 18-րդ դարի 1-ին քառորդում հայկական ինքնության լեռնային կղզյակը ապրում էր թուրք-պարսկական և ռուսական ալեկոծումների փոթորկահույզ ժամանակաշրջան: Ազգային ազատագրական շարժման ալիքը ծնունդ տվեց այնպիսի հերոսների և գործիչների, ինչպիսին էին Դավիթ Բեկը, կաթողիկոս Եսայի Հասան Ջալալյանը, Մխիթար Սպարապետը, Տեր Ավետիսը, Թորոսը և ուրիշներ:

Ինչո՞վ է պայմանավորված այս ժամանակաշրջանի կարևորությունը հայ-թուրքական հարաբերությունների դիտանկյունից: Այս շրջանից ևեթ ավելի է ընդգծվում հայ ազգային ազատագրական շարժման հակաթուրքական ուղղվածությունը, և եթե մինչ այդ թուրքական լծի դեմ պայքարում էին հիմնականում արևմտահայերը, ապա թուրքական առաջխաղացումը նպաստեց այն բանին, որ նրա դեմ դուրս գա նաև արևելահայությունը, և, ըստ այդմ, թշնամու կերպարը մեզանում ավելի ամբողջական դարձավ: Դավիթ Բեկի շրջանում Ռուսաստանն ու Պարսկաստանը, չնայած ոչ էական օգնությանը, որակվեցին իբրև դաշնակիցներ, իսկ Օսմանյան Թուրքիան ստանձնեց հիմնական հակառակորդ լինելու դերակատարումը: Պարսկաստանի թուլացումը ժամանակի ընթացքում նրան պետք է դարձներ համակերպվող, իսկ հետզհետե աճող թուրքական վտանգը նրան պետք է ավելի ընդգծեր իբրև թշնամի պետություն:

Երբ Դավիթ Բեկը եկավ Հայաստան, ուխտեց «իսպառ ջնջել երկրամասի բոլոր մահմեդականներին»[1]: Հայերի և պարսիկների միջև ձեռք բերվեց համաձայնություն՝ գործելու թուրքական ուժերի դեմ: Այս պարագայում կրոնական գործոնը ետին պլան մղվեց, և գերակշռողն արդեն ազգային-պետական շահն էր: Եվ չնայած պարսիկ խաները հայկական ուժերին մարտադաշտում թողեցին մեն-մենակ թուրքերի դեմ՝ հայերը մի կերպ դիմագրավեցին օրհասական վտանգը:

Դավիթ Բեկի օրոք հայերը տարան հաղթանակներ պարսիկների, քրդերի և թուրքերի դեմ: Դրանով իսկ հայոց պատմաքաղաքական կյանքում, թեկուզև կարճ ժամանակով, դրվեցին ինքնիշխան պետական միավորման հիմքերը:

Դավիթ Բեկը թռիչք էր մեր ազգային հոգեկերտվածքում: Նրա համար հայրենիքի փրկության գաղափարը վեր էր ամեն ինչից: Նա խստորեն էր վերաբերվում

նույնիսկ իր մերձավոր շրջապատին[2]: Զինյալ պայքարի բնաբանն էր նա, որի շնորհիվ բացվեցին պայքարի նոր հորիզոններ հաջորդ հարյուրամյակում:

19-րդ դարում ռուս-թուրքական և ռուս-պարսկական պատերազմներում հայերի դրսևորած կեցվածքը վերջնականապես բացահայտում է հայերի քրիստոնեառուսական կողմնորոշումը: Ռուսական կայսրությունն իր դիրքերն ավելի է ամրապնդում Կովկասում, Պարսկաստանը դուրս է մղվում, իսկ Թուրքիան շարունակում է համառ պայքարը հանուն Կովկասի՝ առաջնորդվելով թուրանական համաշխարհային տիրապետություն հիմնելու անշեջ երազանքներով:

Միաժամանակ, Պարսկաստանը դառնում է զինյալ խմբերի պատրաստման և էրգիր ճանապարհելու կայանատեղի. «Պարսկաստանը դուռ Վասպուրականի,- գրում է Մ. Վարանդյանը:- Իտալացի յեղափոխականները ունէին Ֆրանսիան, մակեդոնացիք Բոլղարիան, լեհերը Գալիցիան, հայ յեղափոխականները ունեցան Պարսկաստանը»[3]:

Օսմանյան կայսրությունում հայերը շարունակում են մնալ ոչ միայն ռայա, զիմի կամ գյավուր, այլև որպես անվստահելի և քաղաքակրթորեն ավելի բարձր մշակույթ ունեցող տարր: Սա տարեցտարի կրկնապատկում է ատելությունը դեպի արևմտահայությունը, սաստկացնում է ճնշումները նրանց վրա, ինչն իր հերթին հանգեցնում է հայերի զինված դիմադրությանը:

19-րդ դարի երկրորդ կեսից սկսում են ձևավորվել հայ ազատագրական առաջին խմբակները: Ասպարեզ է գալիս ֆիդայական շարժումը, որի նպատակը Տաճկահայաստանի ազատագրումն էր թուրքական լծից, ապա և Ռուսահայաստանի ազատագրումը ցարական լծից: Թշնամու կերպարի փոփոխությունը և նրա ուղղորդումը դեպի թուրքական էթնիկ հանրություն ծնում է հերոսների մի ամբողջ համաստեղություն՝ Արաբո, Սերոբ Աղբյուր, Չավուշ, Չաթո և Շերո, Հրայր Դժոխք, Խանասորի Վարդան: Ֆիդայիներն ունեին իրենց օրենքները և աչքի էին ընկնում խիստ կարգապահությամբ:

Հայության ազատագրման դատի գործին ձեռնամուխ են լինում նաև հայ առաջին քաղաքական կազմակերպությունները, որոնցից առանձնահատուկ առաքելություն է ստանձնում Հայ յեղափոխականների դաշնակցությունը: Խրիմյան Հայրիկի խոսքերով՝ «ՀՅ Դաշնակցութիւնը հայկական նոր ասպետութիւնն է: Ելէ՛ք, ելէ՛ք ժողովուրդ հայոց, արձանագրուեցէք հայկական նոր ասպետութեան, թև-թիկունք տուէք անոր, զի խաչին և մաճին հետ՝ փրկարար է նաև ասպետին սուրը»[4]:

Համաժողովրդական ապստամբության կազմակերպումը համարելով անհնարին՝ ՀՅԴ Ընդհանուր ժողովում (1892 թ.) Աշոտ-Թաթուլն առաջարկում է «Անհատական տերրոր թուրք կառավարական պաշտօնեաներու և հայութեան ամէն կարգի թշնամիներու դէմ... Տերրորը կատարելէ յետոյ երբեք փախուստ չտալ, այլ կանգնիլ տեղն ու տեղը և յայտարարել, որ ինքն է կատարողը առանց ուրիշներու մասնակցութեան և դրդման»[5]:

Հայերի դրությունը Օսմանյան կայսրությունում կտրուկ բարդացավ Աբդուլ Համիդ II-ի (1842-1918 թթ.) օրոք: Նա առաջինն էր, որ համարձակ և բացահայտ եղանակով դիմեց ոչ մահմեդական տարրերից երկիրը մաքրազարդելու ցեղասպան քաղաքականությանը. «Երկրի հին, միլիոնավոր բնակիչները՝ հույներ, հայեր, նեստորականներ, հակոբականներ, հրեաներ ու սիրիացիներ, օտարական են համարվում: Իրենց իրավական դրությամբ նրանք ռազմագերիներ են համապատասխան իրավունքներով ու պարտականություններով»,- գրում է Ֆր. Դ. Գրինը»[6]:

1894-1896 թթ. համիդյան ջարդերը առաջին ծրագրավորված և հեռահար նպատակներ հետապնդող զանգվածային ցեղասպան ակտերն էին, որ իրականացվեցին հայության նկատմամբ: Այս ժամանակաշրջանից նեթ հստակորեն առանձնացվում է թուրքերի՝ իբրև թշնամի ազգի կերպարը, որը հաջորդ հարյուրամյակի ընթացքում շարունակում է մնալ գերակշռող:

Սուլթան Աբդուլ Համիդի դեմ ՀՅ Դաշնակցությունը կազմակերպում է մահափորձ, սակայն պատահականությամբ նա փրկվում է: Վիտոշ լեռան բարձունքին սուլթանին սպանելու նպատակով ռումբի փորձարկման ժամանակ մեռնում է ՀՅ Դաշնակցության հիմնադիրներից Քրիստափոր Միքայելյանը[7]:

Թշնամու կերպարը 20-րդ դարում, Սփյուռք և Խորհրդային Հայաստան. Թյուրքիզմ և ֆաշիզմ. Ի լրումն համիդյան քաղաքականությանը՝ Իթթիհատի կոմիտեն՝ ի դեմս իր վերնախավի (Թալեաթ, Էնվեր, Ջեմալ, Նազըմ), ավարտին հասցրեց սուլթանի գործը: Գյավուրներից ազատված երկիրը «հանձնվեց» Աթաթուրքին, ով իր նախորդների նման ուսերին չզգաց հայկական հարցի ծանրությունը:

1915-1922 թթ. իրադարձությունները ամբողջացրին «թուրք վայրագի» կերպարը հայ ժո-

ղովրդի հասարակական-քաղաքական գիտակցության մեջ: Թուրք ազգը դարձավ հայության ամենաոխերիմ թշնամին: Եվրոպական տերությունները ոչինչ չձեռնարկեցին թուրք ջարդարարներին զսպելու համար: Նրանց կեցվածքը, ինչպես նաև հայերի և թուրքերի պատմաքաղաքական ջրբաժանը լավագույնս արտացոլվում է Ս. Թեհլիրյանի խորհրդանշական արտահայտության մեջ. «Ի՞նչ եք ուզում. ես՝ հայ, նա՝ թուրք, ձե՞զ ինչ...»[8]:

Արևմտահայությունից մնացին փշրանքներ, որոնք ապաստան գտան պատմական հայրենիքից դուրս՝ հաստատվելով հին հայկական գաղթօջախներում կամ օտար հողերի վրա ձևավորելով նոր գաղթօջախներ:

Սփյուռքում նոր սերունդը ստացավ ազգային-հայրենասիրական դաստիարակություն: Հայությունը Սփյուռքում կերտեց մի տեսլական, որը կապեց արևմտահայությանը և արևելահայությանը Արաքս գետի կամրջով, որտեղից տեսարան էր բացվում դեպի Արարատն ու Նեմրութը, դեպի Վանա ծովն ու Մշո դաշտը, դեպի Սասունի և Զեյթունի անմատչելի բարձունքները, դեպի պատմական Կարսն ու Անիի ավերակները: Այդ պետություններից շատերը Թուրքիայի հետ չունեին ընդհանուր սահմաններ, չունեին ընդհանուր ոչինչ, բայց այդտեղ ապրում էին հայկական համայնքները, որոնք ունեին իրենց հիշողության սահմանագիծը Թուրքիայի հետ՝ եղերական ճանապարհի երկայնքով ձգվող:

Թշնամու կերպարը 20-րդ դարում ստանում է հստակ ազգային դիմագիծ: Թուրքերը աստիճանաբար հետ են կանգնում պանիսլամիզմի և օսմանիզմի գաղափարներից և առաջ քաշում թյուրքիզմը[9]: Ինչպես Զարևանդն է դիպուկ նկատում՝ «Թուրքիան թուրքերի համար», ահա թուրքիզմի և՛ նշանաբանը, և՛ ծրագիրը»[10]:

Թուրքիզմը ուներ հստակ ազգային-աշխարհիկ ուղղվածություն: Այն զտում է նախորդած գաղափարախոսությունները և հող նախապատրաստում քեմալիզմի և քեմալական բարեփոխումների համար:

«Թուրքական կառավարությունը պետք է կատարի վճռական շրջադարձ իր քաղաքականության մեջ, նա պետք է դադարեցնի իր օսմանիզմի քաղաքականությունը... Մնացյալ ժողովուրդները չպետք է գոյություն ունենան իբրև ինքնուրույն ազգություն... Նրանց այլընտրանքը պետք է լինի կա՛մ թուրքերի հետ միախառնումը, կա՛մ լքումը Թուրքիան: Չկա «օսմանների ազգություն», այլ կա և պետք է լինի մեկ եզակի ազգություն՝ թուրքականը: Ահա թե ինչ է թուրքիզմը»[11]:

Թուրքիզմի էությունը իր աշխարհիկ ռասիստական բովանդակությամբ բավական հոգեհարազատ և արյունակից է ֆաշիզմին. «Ինչպես նախապատմական ժամանակաշրջանի կենդանիները պետք է անհայտանային՝ իրենց տեղը զիջելով ուրիշներին, այնպես էլ մարդը պետք է անհայտանա, եթե նրան չեն բավարարում հոգևոր ուժերը, որոնք միակն են, որ մարդուն ապահովում են ինքնապահպանման անհրաժեշտ զենքով»[12]:

Թյուրքիզմի և ֆաշիզմի մեջ զգալի նմանություններ կան: Թյուրքիզմի կիրառման դաշտն ավելի սահմանափակ էր, քան ֆաշիզմինը. եթե վերջինս նախատեսում էր հաստատվել ողջ երկրագնդում, ապա թուրքերը ձգտում էին հասնել մինչև Ալթայ: Երկուսն էլ ռասիստական նկրտումներ ունեին, չէին ընդունում այլազգիներին կամ նրանց իրավունքները և իրենց վեր էին դասում մնացյալ բոլոր ազգերից:

Թուրքերը գերմանացիներին դիտում էին պոտենցիալ դաշնակից, որովհետև նրանց շահերը համընկնում էին (մեկը մյուսի նկատմամբ տարածքային հավակնություն չուներ): 1-ին աշխարհամարտի շրջանում գերմանական սպաներն էին վերապատրաստում թուրքական բանակը: Անգամ լուրեր էին տարածում, որ «կայսր Վիլհելմը ընդունել է մահմեդականություն և այսուհետև պիտի կոչվի Հաջի-Վիլհելմ- ան-Քերմանի»[13]:

Թուրքիայի և Գերմանիայի ակտիվ համագործակցությունը առաջին և երկրորդ աշխարհամարտերին, թյուրքիզմի և ֆաշիզմի ցեղասպան էությունները չէին կարող անհետևանք մնալ և իրենց ազդեցությունը չթողնել Խորհրդային Հայաստանի նոր սերնդի վրա: Թյուրքիզմը ասես կերպարանափոխվել էր ֆաշիզմի և իրենից ներկայացնում էր ոչ պակաս վտանգ, քան 1-ին աշխարհամարտի ընթացքում:

Պատահական չէ, որ Հայրենական մեծ պատերազմի ժամանակ շրջանառվում է այն փաստը, որ վիլհելմյան Գերմանիան անմասն չի մնացել 1915 թ. Մեծ եղեռնից: Ավելին, այդ գործում հիմնական չարագործի դերը վերապահվում է Կայզերական Գերմանիային[14]:

Ակնհայտ էր, որ ֆաշիստական Գերմանիայի հաղթանակի պարագայում Խորհրդային Հայաստանը կիսելու էր Արևմտահայաստանի ճակատագիրը՝ կուլ գնալով Թուրքիային: Սա գիտակցում էր նաև սփյուռքահայությունը իր գործնական աջակցությամբ[15]:

Երկրորդ աշխարհամար-

տում հայերը տվեցին բազմաթիվ զոհեր: Բավական է նշել, որ գրեթե չկար մի ընտանիք, որը կորուստ տված չլիներ կամ նրա անդամներից որևէ մեկը պատերազմին մասնակից չլիներ: Նրանցից շատերն արժանացան հերոսի կոչման:

Չորս հայորդի արժանացան Խորհրդային Միության մարշալի կոչման: Խորհրդային շրջանի հերոսների փաղանգում առանձնանում է «Ստալինյան բազե» մականունը կրող Նելսոն Ստեփանյանը[16]:

«Հանցագործության փիլիսոփայությունը»[17] կամ նույն ինքը ադոլֆյան վարդապետությունը դարձավ գերմանական ազգի «զարթոնքի», երկրորդ աշխարհամարտի սանձազերծման և տասնյակ միլիոնավոր անմեղ մարդկանց կործանման պատճառ: Ֆաշիզմը յուրովի շարունակեց թյուրքիզմի քաղաքականությունը և կունենար նույն հետևանքները հայ ազգի համար, եթե չլիներ համազգային վերելք, եթե չլինեին այն անձնուրացները, ովքեր իրենց կյանքի գնով կանգնեցրին գաղափարախոսական սև ժանտախտի տարածումն ամբողջ երկրագնդում: Հայերի հիշողության մեջ դեռևս թարմ էին Կովկասյան թուրքական բանակի հրամանատար Ֆերիկ Վեհիբ Մոհամեդի՝ հայկական պատվիրակությանն ուղղված խոսքերը[18]:

Խորհրդային Ռուսաստանը, լինելով բազմազգ կայսրություն, բնականաբար, իր կազմում ապրող ժողովուրդներին պետք է ոտքի հաներ՝ հաշվի առնելով նաև նրանց ազգային ձգտումներն ու խառնվածքը:

Պատահական չէ, որ պատերազմի շրջանի մամուլում հայ մարտիկներին ոգևորում էին ոչ միայն «Հանուն Ստալինի, հանուն Սովետական Միության» կարգախոսներով, այլև՝ «Գիտակցյալ մահն անմահություն է» («Մահ չիմացյալ մահ է, մահ իմացյալ՝ անմահություն») կամ Սասունցի Դավթի օրինակով[19]:

Հայաստանի պարագայում դա հաջողվեց, որովհետև դարասկզբից պահպանվում էր թշնամական վերաբերմունքը Թուրքիայի նկատմամբ: Թուրքիայի և Գերմանիայի շահերի խաչաձևումը փոխադարձաբար համընկնում էր Խորհրդային Հայաստանի և ԽՍՀՄ-ի շահերին: Անկախ այն բանից, որ Հայաստանը պատանդ էր խորհրդային բանտում, նա պայքարում էր Հայրենիքը իսպառ ոչնչացումից փրկելու համար: Առաջին աշխարհամարտից հետո պատմական Հայաստանի բեկորների վրա ծնվեց Առաջին հանրապետությունը, սակայն այն վերածնվեց 1945 թ. առանցքային հաղթանակի հիման վրա: Երկու դեպքում էլ թուրքական վտանգը դամոկլյան սրի նման կախված էր մեր գլխավերևում: Հայերը պայքարում էին ֆաշիստների դեմ, բայց նրանց դեմ թուրքերն էին: Նրանք ձերբազատվեցին ֆաշիզմից, բայց վերջինիս թիկունքում թյուրքիզմն էր:

Թշնամու թուրք-թաթարական կերպարը. Արցախյան սերունդ. Նորանկախ հանրապետությունը կերտվեց պատերազմի և նրա արհավիրքների լաբիրինթոսով անցած հերոսների հետնորդ սերնդի անձնազոհության շնորհիվ: Արցախյան հակամարտության մեջ ներքաշվեցին Հայաստանը և Ադրբեջանը: Թուրքիայի կրտսեր եղբայր Ադրբեջանը փորձում էր հիմնվել 1921 թ. հուլիսի 5-ի կամայական որոշման վրա, որով Արցախը բռնակցվել էր իրեն:

Չնայած Ադրբեջանի հետ Հայաստանի ունեցած տարածքային վեճերին՝ խորհրդային շրջանում ազգային հարցը լուծվել էր, և երկու երկրները համարվում էին եղբայրական ժողովուրդներ, կովկասցիներ: Դեռևս 20-րդ դարի սկզբներին տեղի էին ունեցել հայ-թաթարական բախումներ (այդ կռիվներում նշանավորվեցին Նիկոլ Դումանը, Դրոն...), և ադրբեջանցու կերպարը մեր ազգային ենթագիտակցության մեջ շարունակում էր մնալ իբրև հակառակորդ-թշնամի: Այնուհանդերձ, 1988 թ. սկիզբ առած ազգային զարթոնքի և պայքարի թիրախում կրկին սավառնում էր թշնամու՝ թյուրք կերպարը: Արցախյան պատերազմում մեր դեմ կանգնած հակառակորդը ադրբեջանաթաթարական տարրն էր, բայց մենք նրան անվանեցինք «թուրք»: Եթե ուշադրություն դարձնենք արցախյան հերոսամարտերին նվիրված պատմափաստագրական և վավերագրական նյութերին, ապա դրանցում ավելի շատ հանդիպում ենք «թուրք», քան «ադրբեջանցի» էթնոանվանմանը: Այդպես է, օրինակ, Ս. Նանագուլյանի «Շահեն»[20], Գ. Հ. Կարապետյանի «Արթուրը»[21], Ա. Պետրոսյանի «Արցախյան հաղթականչեր»[22], Ս. Գրիգորյանի «Հավերժախոս պանթեոնում»[23] և այլ աշխատություններում ու հրապարակումներում:

Նույն մոտեցումը հանդիպում ենք Արցախյան ազատամարտի ժամանակ հերոսների մասին գրված ազգային երգերում: Օրինակ՝ Արցախի ազգային հերոս Աշոտ Ղուլյանին նվիրված երգում[24]:

Եթե թշնամու կերպարը վերստին հառնում էր թուրքի կեր-

պարանքով, ապա նրա դեմ պայքարող արցախյան ազատամարտիկները ինքնըստինքյան կոչվեցին ֆիդայիներ:

Թշնամու թուրք-ազերի կերպարի կերտումը հուշում էր, որ արցախյան մարտադաշտում մենք գործ ունենք ոչ թե մեկ, այլ երկու թշնամու հետ:

Հերոսների նոր սերունդը եկել էր շարունակելու իր նախորդների թողած անավարտ գործը: Ասես Աղբյուր Սերոբի, Հրայր Դժոխքի, Նժդեհի, Դումանի, Դրոյի ոգին վերածնվել էր նորօրյա հերոսների՝ Թաթուլի, Վիտյայի, Մոնթեի, Բախշյան ու Դուշման Վարդանների, Բեկորի, Պետոյի, Շահենի և այլոց մեջ:

Ինչո՞ւ մեզանում այդքան սահուն կերպով նույնացվեցին ադրբեջանցի և թուրք տարրերը՝ միահյուսվելով մեկ թշնամու կերպարի մեջ: Դրան նպաստեցին ոչ միայն ավագ եղբոր կողմից կրտսերի սատարումը կամ նրանց պատմամշակութային անբաժանելի անցյալը, այլև թուրքիզմի կամ պանթուրանական ծրագրերը, որոնք շարունակում էին մնալ արդիական Թուրքիայի արտաքին քաղաքականության մեջ: Դա փայլուն կերպով արտահայտվեց 1993 թ. հոկտեմբերի 9-ին Թուրքիայի և ԽՍՀՄ նախկին հինգ թուրքալեզու պետությունների միջև կայացած հանդիպման ժամանակ[25]: Դրա վրա իր խոշոր անդրադարձը ունեցավ նաև սումգայիթյան ողբերգությունը և բռնագաղթի կազմակերպումը: Սա Ադրբեջանին նույնացրեց Թուրքիայի հետ, որովհետև երկու եղբայրն էլ իրենց ազգային շահի համար դիմեցին ցեղասպանության, ավագն իր չափով, կրտսերն՝ իր:

Վերջաբան

21-րդ դարում հայ-թուրքական հարաբերություններում առանցքային շրջադարձ տեղի ունեցավ: Ո՛չ, Թուրքիան չընդունեց Հայոց ցեղասպանությունը և չփոխհատուցեց: Նրա նախագահ Աբդուլլահ Գյուլը ընդունեց ՀՀ նախագահ Սերժ Սարգսյանի հրավերը, որով սկիզբ դրվեց «ֆուտբոլային դիվանագիտությանը»: Հնարավո՞ր է, արդյոք, որ մեր հասարակությունը մոռանա իր անցյալը և գնա ընդառաջ Թուրքիային: Մի երկիր, որը շարունակում է կոծկել իր նախնիների արարքները և դրանով իսկ դառնում նրանց վարած քաղաքականության իրավահաջորդը, որի վառ օրինակը «Ակոս» պարբերականի խմբագրապետ Հրանտ Դինքի սպանությունն էր:

Մեր առօրյա խոսակցականում «թուրք» տերմինը դեռ կրում է բացասական երանգ և համարժեք է վիրավորական արտահայտության: Մոտ մեկուկես դար մենք լեգենդներ ենք հյուսել այն հերոսների մասին, ովքեր պայքարել են սուլթանահանրապետական Թուրքիայի դեմ: Ի՞նչ է փոխվել Աբդուլ Համիդից մինչև Աբդուլլահ Գյուլն ընկած ժամանակաշրջանում: Թուրքիան մնացել է նո՞ւյնը, թե՞ ոչ: Եթե մենք գտնենք այս հարցի իրական պատասխանը, կգտնենք նաև այն շավիղը, որը կտանի հայ-թուրքական կնճռի հանգուցալուծմանը: Եվ գուցե մի օր թշնամու թյուրքական կերպարը մեզանում տարրալուծվի և մատնվի մոռացության: Այդ պարագայում մենք կկարողանանք լիարժեք հարաբերություններ հաստատել մեր հարևան թուրքալեզու պետությունների հետ:

Ավարայրից մինչև Սարդարապատ, Բեռլինից մինչև Եռաբլուր ձգվում են մեր ազգային հերոսների լեգեոնները: Եթե Բելին վիճակված էր ընկնել հայկյան նետից, ապա Մսրա Մելիքը պիտի կիսվեր Թուր կեծակիից, եթե Սասնա Դավիթը պիտի կռվեր արաբների դեմ, ապա Դավիթ Բեկը՝ թուրքերի ու քրդերի, եթե Վարդանը Ավարայրում պետք է ճակատ ճակատի բախվեր պարսիկների հետ, ապա Դուշման ու Բախշյան Վարդանները Արցախում՝ ադրբեջանցիների, եթե քաջ Թաթուլը պետք է խիզախորեն մարտնչեր թուրք-սելջուկների դեմ, Թաթուլ Կրպեյանը Գետաշենում պիտի ջարդեր թյուրք-թաթարներին: Լինի Գևորգ Մարզպետունի թե Գևորգ Չավուշ, լինեն երևակայական թե իրական հերոսներ, ազգային-դաստիարակչական դիտանկյունից նրանք մեզ համար նույն արժեքն են ներկայացնում: Նրանք իրենց տեսակի մեջ եզակի են: Զինվորագրում ու պայքար, նահատակում ու անմահություն՝ ահա մեր հերոսների նշանաբանը: Մեր ազգը դասվում է այն ազգերի շարքը, որոնց հերոսները երբեք չեն հանգստանում: Ուստի դատապարտված են այն ազգերը, որոնք իրենց օրհասական պահին չեն ծնում կամ վիժում են իրենց հերոսներին:

ՃԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Դաւիթ Բէկ. Ընտիր պատմութիւն (1722-1729 թթ.), Լոս Անճելըս, 1988 թ., էջ 77:
2. Հայ ժողովրդի պատմություն, հ. IV, Ե., 1972, էջ 165. «Անողոք էր Դավիթ-Բեկը մելիքական դասի այն ներկայացուցիչների նկատմամբ, որոնք գերադասելով իրենց անձնական շահերը՝ մեկուսի դիրք էին գրավում կամ գործակցում էին հակառակորդի հետ: Անպատիժ չէր թողնում նաև իր հավատարիմ զորականներին, եթե նրանք սխալներ կամ զանցանքներ

էին թույլ տալիս: Այսպես նա հարկադրված եղավ կալանքի տակ առնել Մելիք-Փարսադանին և Տեր-Ավետիսին, բախվեց Զավնդուրի հրամանատար Թորոսի, Կալերի հրամանատար Պապի և անգամ իր մերձավոր զինակից Մխիթար բեկի հետ»:

3. Համլետ Գևորգյան, Ազատագրական պայքարի հերոսապատումից, Ե., 2006 թ., էջ 11:

4. Յուշամատեան Հայ Յեղափոխական Դաշնակցութեան, հ. Ա, Լոս Անճելէս, 1992, էջ 2:

5. Մ. Վարանդեան, Հ.Յ.Դաշնակցութեան պատմութիւն, Ե., 1992 թ., էջ 96:

6. Լևոն Մկրտչյան, Զեյթունի ապըստամբությունը 1895-1896 թթ., Ե., 1995, էջ 39-40:

7. Յուշամատեան Հայ Յեղափոխական Դաշնակցութեան, հ. Ա, Լոս Անճելէս, 1992, էջ 7:

8. Թեհլիրեան. Արդարահատոյցը Համազգային, 1981 թ., էջ 74: Բեռլինում, երբ Ս. Թեհլիրյանը սպանեց ոճրագործ Թալեաթին, փողոցում կանգնած ամբոխը հարձակվեց նրա վրա և ոտուձեռքով սկսեց նրան հարվածել, Թեհլիրյանը բացականչեց վերոնշյալը:

9. Искандер Гилязов, Тюркизм: становление и развитие, Казань, 2002, с. 5. «Թյուրքիզմը կամ պանթյուրքիզմը մեկնաբանվել է իբրև թյուրք ժողովուրդների նվաճողական քաղաքականություն ուղղված այլ ժողովուրդների և պետությունների դեմ վերջնական նպատակ ունենալով Եվրասիայի ընդարձակ տարածքի վրա ստեղծելու համաթյուրքական պետություն Թուրան»:

10. Зареванд, Турция и Пантуранизм, Е., 1991, с. 93.

11. Նույն տեղում, էջ 94:

12. Адольф Гитлер, Моя борьба, с. 235.

13. Ծ. Պ. Աղայան, Հայ ժողովրդի ազատագրական պայքարի պատմությունից, Ե., 1976, էջ 390: Դրա համար հիմք էր հանդիսանում այն, որ «գերմանական ժողովուրդը իրականում ծագում է պարսկական Քերման շրջանից, որտեղից էլ իր անվանումն է ստացել»:

14. Ս. Նալբանդյան, Հայ թամանցիներ, Ե., 1947 թ., էջ 37: Հայ ժողովրդի անունից պատերազմի դաշտում գտնվող մարտիկներին ուղղված նամակում ասվում է. «Մեր ժողովրդի ազատության վրա նորից իր արյունաթաթախ թաթն է բարձրացրել հայերի հին ու ոխերիմ թշնամին: Մենք երբեք չպետք է մոռանանք, որ միլիոնավոր հայերի ֆիզիկական բնաջնջումը կազմակերպողները եղել են գերմանական արյունարբու իմպերիալիստները... Նրանք էին, որ 1914-18 թվականներին կազմակերպեցին մեկ միլիոն հայերի կոտորածը... Դեռևս հընչում է մեր ականջին հայ ժողովրդի խոշտանգված զավակների... աղիողորմ կանչը, երբ ահա կրկին լկտի բարբարոսությամբ իրենց արյունոտ ճիրանները մեկնում են դեպի մեր երկիրը Վիլհելմի արյունախում հետնորդները - հիտլերականները...»:

15.Խոսքը վերաբերում է «Սասունցի Դավիթ» տանկային շարասյանը, որի անձնակազմին հանդերձավորեց սփյուռքահայությունը:

16. Ար. Մնացականյան, Հայ ռազմիկների հերոսության տարեգրությունները, Ե., 1947, էջ 321: Ն. Ստեփանյանը իր կատարած 100 մարտական թռիչքի ընթացքում «ոչնչացրել է մոտ 600 ֆաշիստական ավտոմեքենա, ավելի քան 100 տանկ ու զրահապատ մեքենա, մոտ 300 զենիթային թնդանոթ, 5000 ֆաշիստական զինվոր ու սպա, 6 ֆաշիստական նավ»:

17. Б. Бессонов, Фашизм: идеология, политика, М., 1985, с. 120. Ֆաշիզմը Թ. Մաննի բնութագրմամբ:

18. Հ. Գ. Թուրշյան, Սարդարապատի հերոսամարտը, Ե., 1969 թ., էջ 193: «Ճակատագիրը կը քշե Թուրքիան արևմուտքեն արևելք. մենք հեռացանք Բալկաններեն, կը հեռանանք նաև Ափրիկեեն, բայց մենք պետք է տարածվենք դեպի արևելք, հոն է մեր արյունը, մեր կրոնքը և լեզուն... Պահանջելով Վանը դուք կը փակեք մեր ճամփան դեպի Պարսկաստան: Պահանջելով Նախիջևանը ու Զանգեզուրը դուք արգելք կը դառնաք մեզ իջնելու Քուրի հովիտը և երթալու Պաքու: Կարսն ու Ախալքալակը կը փակեն մեր ճամբան դեպի Ղազախ ու Գանձակ: Դուք պետք է մեկ կողմ քաշվեք և մեզ ճամբա տաք: Ահա թե ուր է մեր հիմնական վեճը»:

19. Ար. Մնացականյան, նույն տեղում, էջ 49, 201: «Հիշենք հերոս Սասնա Դավթին, / Հիշենք նրա Թուրկայծակին, / Զարկենք Դավթի պես անխնա, / Որ թշնամին փոշիանա», «Զարկե՛ք ուժգին, դյուցազնաբար, / Առյուծ Դավթի զարկի թափով»:

20. Սեդրակ Նանագուլյան, «Շահեն», Ե., 1993, էջ 118-119. «...հունվարին թուրքերը հարձակվեցին Կրասնոսելսկի շրջանի վրա... Շահենը իր ջոկատով հասավ Կրասնոսելսկ: Առաջին լուրջ ընդհարումներից հետո թուրքերը հետ շպրտվեցին»:

21. Գ. Հ. Կարապետյան, «Արթուրը», Ե., 2001, էջ 176. «Երկու օր ուժեղ մարտեր էին գնում Զարիսլուի մոտ, և թուրքերը չկարողացան դիմադրել... Այդ ընթացքում թուրքերը որևէ անգամ չփորձեցին նորից դեպի Շուշի առաջանալ»:

22. Աշոտ Պետրոսյան, «Արցախյան հաղթականչեր», Ե., 2006, էջ 11, 87: «Ամենատպավորիչ դրվագներից մեկը Հակոբ Կամարիի ժայռի տակ թուրքերի տանկային գրոհի հետ մղումն էր»: «Խումբն ընկավ ծուղակ, աննկարագրելի ծանր կռիվ մղեց թուրք մեծաթիվ զորքի դեմ, և Վաչեն զոհվեց Վարդան Բախշյանի ու Գագիկ Գրիգորյանի հետ»:

23. Սասուն Գրիգորյան, «Հավերժախոս պանթեոնում», էջ 5. «...Ընթերցողիս եմ հանձնում 1988-1995 թթ. ազերի թուրքի կողմից սպանված, գերված, անհայտ կորած մերօրյա քաջորդաց այբբենական համառոտ հուշատեղեկատուն...»:

24. «Արցախյան լեռների արծիվ փառապանծ, / Դաժան թշնամու դեմ վրեժով լցված, / Փշրիր-խորտակեցիր թուրք զինյալ շղթան, / Եղար Ղարաբաղի անվեհեր հսկան, / Օմարի լեռնանցքում հրաշք գործեցիր, / Բազում թուրք զինվորներ գետին փռեցիր»:

25. Էդուարդ Հովհաննեսյան, Տեսակետ. հոդվածների ժողովածու, Ե., 2006 թ., էջ 16:

Մերօրեայ «Սահ Իմացեալ»-ի 25-ամեակը

Այս տարի յուլիսի 27-ին լրացաւ Լիսաբոնեան սխրագործութեան, հինգ տղաների նահատակութեան 25-ամեակը:



Կ. ԲԱՍԵՆՑԻ

Քսանհինգ տարի առաջ, երբ դեռ չկար սփիւռքեան ցուրտ մայթերը ջերմացնող հայրենի անկախութեան արեգակը, երբ Հայոց Ցեղասպանութեան փաստը, մի երկու երկրից բացի, դեռ չէին ճանաչել բազմաթիւ պետութիւնների օրէնսդիր կամ գործադիր իշխանութիւնները, երբ մեր ազգային սուգն ու աղերսանքը չէր ազդում աշխարհի խղճի վրայ, երբ Թուրքիայի մերժողական քաղաքականութիւնը մոգոնում էր ամեն խաղ մեր ազգի ու պատմութեան գլխին, ահա այդ ժամանակ հայ նուիրեալ երիտասարդների մի հոյլ որոշում ընդունեց այդ օրուայ աշխարհում իրականացնել աննախադէպ արարք:

Մինչ այդ ահաբեկչական գործողութիւններ շատ էին կատարուել աշխարհում, սպանութիւններ, պայթիւններ, որոնց ընթացքում ահաբեկիչը, արդար կամ անարդար, խլել էր բազմաթիւ կեանքեր կամ պատանդ վերցրել մեղաւոր-անմեղ, կամ ինքն էր թիրախ դարձել անվտանգութեան ուժերի հետ բախման ժամանակ...

Ի՞նչ պիտի արուէր, որ չնմանուէր ահաբեկչութեանը, չնմանուէր նախորդներից եւ ոչ մէկին, բայց լինէր ազդեցիկ, լինէր լռութեան պատեր տապալող, լինէր ազնիւ, լինէր հայկականութեանը յատուկ:

Յուսահատական այդ օրերին, վերջապէս, գտնուեց ձեւը...

Լիսաբոնեան սխրանքի 25-ամեակը





Գործողութիւնը վիճակուեց հինգ «առանց ի վիճակ, անկեղծ զինուոր»-ների, հինգ անվեհեր վեհերի, որոնք պատրաստակամ էին իրենց կեանքը անսակարկ նուիրել ազատագրութեան գործին, որոնք իրենց երիտասարդական ապրումները, յոյզերն ու խանդավառութիւնը գիտակցաբար յետեւում թողնելով, որոշեցին կատարել այդ աննախադէպ արարքը:

Վճռականութեամբ մեկնեցին Պորտուգալիա: Լիսաբոնի թուրքական դեսպանատան մուտքի առջեւ մի կարճ, շատ կարճ բախում տեղի ունեցաւ ու զոհուեց տղաներից մէկը: Յետոյ շէնք ներխուժեցին ու գրաւեցին շէնքը: Այնուհետեւ ուժգին պայթիւնի ձայնը լսուեց ու թանձր ծխով ողողուեց դեսպանատան շրջակայքը:

Քիչ անց հրապարակուեց «Հայ Յեղափոխական Բանակ»-ի հաղորդագրութիւնը, ուր ասւում էր. *«Զինեալ պայքարը մնում է միակ ուղին՝ ձեռք բերելու համար հայ ժողովրդի ինքնորոշման իրաւունքը: Պարզ ինքնասպանութիւն չէ մեր գործողութիւնը, այլ՝ մեր զոհաբերումն է ազատութեան բագինին: Բռնամիջոցներին դիմելու մեր որոշման պատճառը Թուրքիայի եւ նրան նեցուկ կանգնող ուժերի կողմից հայ ժողովրդի արդար պահանջների մերժումն է, որոնք ներկայացւում էին խաղաղ միջոցներով... Թող միջազգային կարծիքը մեզ կոչի արկածախնդիր, ոճրագործ կամ ահաբեկիչ, մենք միայն քմծիծաղով ենք դիմաւորում նման որակումները...»*:

Նրանց քմծիծաղը շատ թանկարժէք է հայութեան համար:

Նրանք իրենց քմծիծաղով ապացուցեցին իրենց նուիրուածութեան չափն ու սահմանը՝ մեր դատին:

Սրտի խոր կսկիծով համակուեց հայութիւնը: Նրա ցաւոտ սրտի վրայ, ասես էլեկտրական արագութեամբ, ասեղնագործուեց եւս հինգ անուն՝ Սարգիս, Արա, Սեդրակ, Սիմոն, Վաչէ...

Ապացուցուեց, որ հայ երիտասարդը իր արդար դատի արդար լուծման համար ի զօրու է վերջակէտ դնել սեփա-

Պորտուգալիայի վարչապետ
Մարիո Սօարէշ



կան կեանքին:

Կարելի՞ է պատկերացնել դրանից աւելի բարձր նուիրում...

Այդ սխրանքի օրերին Պորտուգալիայի վարչապետ Մարիո Սօարէշը, երբ մի քանի ամիս յետոյ գտնուում էր Բուէնոս Այրեսում, հայ երիտասարդների հետ ունեցած մի հանդիպման ժամանակ, արարողակարգային վիճակներից հեռու, մտերմիկ զրոյցի ընթացքում, անկեղծօրէն ասել էր, որ մինչեւ լիսաբոնեան դէպքը Հայկական Հարցից գրեթէ անտեղեակ է եղել, բայց այնուհետեւ ուսումնասիրել է հայ ժողովրդին վիճակուած ողբերգութիւնը եւ յայտնում է իր համոզումը, որ Հայ Դատը «արդար եւ ազնիւ դատ է»:

Կարելի՞ է պատկերացնել այդ սխրանքից աւելի ազդեցիկը...

Խորհում եմ նրանց քմծիծաղի մասին...

Ու խորհում եմ, որ յատկապէս այսօր անհրաժեշտ է նշել մեր նահատակ մարտիկների յիշատակը: Բայց նշել այնպէս.

- որ տեղից վեր թռչողը, իր քաղաքական այլեւայլ ելակէտներից մեկնելով, յանկարծ նրանց չանւանի ահաբեկիչ,

- որ «հայաստանցի-ղարաբաղցի» ասողը, մեր քաղաքական դաշտին բնորոշ այսօրեայ տգիտութեամբ, այս առիթով չասի. «դրա՞նք ովքեր են...»,

- որ Միացեալ Հայաստանի, Միացեալ Հայութեան գաղափարները չընկալող ու դրանք ընդամէնը ռոմանտիզմ համարող «մեծարգոյ» վերլուծաբանը, «հանճարեղ» թղթակիցը, կամ «փայլուն» գործիչը, իր «գրանտ»աբարոյ մօտեցումներով, մի փշուր մուր անգամ շաղ չտայ մեր այդ տիտանական տղաների լուսապսակ յիշատակի վրայ:

Վերջապէս պէտք է, չէ՞, որ մի կերպ հասկացնենք նրանց.

- որ դա ոճրագործութիւն չէր, այլ՝ գիտակցուած սխրանք, «մահ իմացեալ»,

- որ դա արկածախնդրութիւն չէր, այլ՝ ինքնանուիրման գերագոյն կերպ,

- որ դա ահաբեկչութիւն չէր, այլ անհարկի լռութեան պատը տապալելու բնական իրաւունք:

Խառն մտքեր են պտտւում գլխումս: Ինքնաբերաբար խորհում եմ «հակաահաբեկչական պատերազմի» մասին: Դրա ալիքները ո՞ւր հասան: Թէեւ սահմանազատուել են «զաւթողական» եւ «դեմոկրատական» պատերազմների ձեւակերպումները, բայց դեռ ջրբաժան չի գծուել ազատագրական պայքարի եւ ահաբեկչութեան միջեւ: «Դեմոկրատական» պատերազմը թոյլատրելի՛ է, լա՛ւ է, «զաւթողականը»՝ ի հարկէ՝ ո՛չ: Իսկ ազատագրական պայքարն ի՞նչ, դեռ նոյնանում է ահաբեկչութեա՞նը: Ազգային ազատա-

գրական պայքարի եւ «միջազգային տեռորիզմի», Համբիկ Սասունեանի եւ Սաֆարովի, Բաբի Սանդզի եւ Բեն Լադենի միջեւ ոչ մի տարբերութիւն չկա՞յ:

Հէնց խորհում եմ Բաբի Սանդզի, այդ իռլանդացի հերոսի մասին, որն ահաբեկչական գործունէութեան մասնակցելու ամբաստանութեամբ ձերբակալուել էր բրիտանական իրաւապահների կողմից, եւ որը իբրեւ բողոք դիմեց հացադուլի եւ զոհուեց դրա հետեւանքով: Նրա անուամբ այսօր մի քանի պողոտաներ են անուանակոչուած Ֆրանսիայում, Բրազիլիայում եւ Իրանում:

Խորհում եմ. հապա Իռլանդիայի Հանրապետութեան քաղաքական ուժերը, մտաւորականները անյարմար չէի՞ն զգում, երբ 2006 թ. մայիսին նշում էին այդ «ահաբեկչի» մահուան 25-ամեակը: Նրանց չէի՞ն պիտակաւորում որպէս «տեռորիզմի հովանաւորողներ»: Իրանն ու Բրազիլիան դեռ ոչինչ... բայց Ֆրանսիան, ազատութեան, եղբայրութեան ու արդարութեան առաջատար այդ երկիրը, հապա անյարմար չի՞ զգում, որ իր մի քանի քաղաքներում (օրինակ՝ Նանտս, Ս. էթիէնն, Ս. Դենիս, Լը Մանս, Վիէրզոն եւ այլն) պողոտաներ է անուանակոչել իռլանդացի «ահաբեկչի» պատուին: «Հակաահաբեկչական պատերազմը» հապա չի՞ սարսափեցնում նրանց...

Իռլանդացի հերոսին մեծարում է իռլանդացի ժողովուրդը, այնպէս, ինչպէս Լիսաբոնի տղաներին էլ՝ հայ ժողովուրդը: Խորհում եմ, որ հէնց դա է էականը, որ ազգային ազատագրական ճշմարիտ պայքարի եւ ահաբեկչութեան սահմանը ճշտելու բուն իրաւունքը պատկանում է, յամենայն դէպս, ոչ մեծապետական համակարգերին:

Տառապանքս երկար չտեւեց եւ սփոփուեցի Շիլլէրի հետեւեալ տողերով, որոնք տպուել են «Դրօշակի» 1983 թ. համարներից մէկում, Լիսաբոնի սխրանքի առիթով.

Երբ հարստահարուածն այստեղ աշխարհում
Դատ ու իրաւունք բնաւ չի գտնում,
Երբ որ բռնութեան լուծը գարշելի
Դառնում է ստրկին անհանդուրժելի,
Նա իր ձեռքերը երկինք է մեկնում
Եւ վստահօրէն այնտեղից խլում
Իր իրաւունքները յաւիտենական,
Որոնք երկնքի աստղերի նման
Անշարժ, անվախճան անհունին փարած՝
Մնում են այնտեղ յաւիտեան կախուած:
...
Երբ էլ ճար չունենք, սրի ենք դիմում,
Մենք մեր հայրենի հողն ենք պաշտպանում...

Հ. Գ.- Ու չեմ կարողանում չխորհել Լիսաբոնի մեր նահատակ մարտիկների վեհութեան, նրանց սխրանքի մեծութեան, բացառիկութեան

ԱՐԱ ՊՈՒԼՈՒՋՅԱՆ

1968 թ. շարժումը. դրդապատճառներն ու ձեռքբերումները



Եվրոպայի ուսանողական շարժման 40-ամյակը

1960-ական թվականների երկրորդ կեսը Արևմուտքում՝ սկսած ԱՄՆ-ից մինչև Եվրոպա, զանգվածային շարժումների զանազան արտացոլանքների տարածման շրջան էր: Թեև շարժումը զանազան երկրներում երևութապես տարաբնույթ ձևերով դրսևորվեց՝ ուսանողական խաղաղ ցույցերից մինչև համաժողովրդական ամբոխային ընդվզումներ, սակայն շարժումների հիմնական սլաքն ուղղված էր այն ժամանակվա արդի դրամատիրական կարգերում ձևավորված բռնապետական համակարգի զանազան դրսևորումների դեմ:

Երիտասարդության ընդվզումները արմատական լոզունգներով էին զուգակցվում՝ դրամատիրական համակարգի վերացում, հասարակության արմատական բարեփոխում, բռնատիրական համակարգերի գահավիժում, պայքար հասարակական բոլոր տեսակի անհավասարությունների ու խտրականությունների դեմ և մշակութային վերափոխումներ: Շարժումը ընդհանրապես ցանկանում էր հասարակական փոխհարաբերություններում «հեղափոխական» փոփոխություններ և հիմնավորվում էր չափավոր ձախից մինչև ծայրահեղ ձախ գաղափարական լիցքերով:

Շարժման գագաթնակետը հանդիսացավ 1968 թվականի մայիսը: Մայիսի 6-ից 27-ը Փարիզը նմանվում էր քաղաքացիական պատերազմի բեմահարթակի: 20-րդ դարի ամենամեծ գործադուլի ալիքը երկրի բնականոն կյանքն անդամալուծել էր: Այդ ընթացքում 7 հոգի զոհվեցին:

Այս ամենով հանդերձ չի կարելի շարժումը սահմանափակել միայն Ֆրանսիայում տեղի ունեցած մայիսյան դեպքերով: Պատմաբանները և վերլուծաբանները ընդհանրապես շարժումը դիտարկում են 1962 թ. Ալժիրի պատերազմի ավարտի և 1981 թ. Ֆրանսիայի նախագահական ընտրությունների համայնապատկերում, որն ավարտվեց ընկերվարական կուսակցության թեկնածու Ֆրանսուա Միտերանի հաղթանակով:

Քաղաքական և հասարակական դրդապատճառները և նպատակները

Շարժման գաղափարախոսության հիմքը, անկասկած, եվրոմարքսիզմն էր, իր բազմերանգ դրսևորումներով, որն առաջադիմական բնույթ էր կրում «ավանդական կոմունիզմի» կամ ռուսական մարքսիզմի համեմատ: Այդ պատճառով Եվրոպայի կոմունիստական կուսակցությունները հարկ եղածի չափ չկարողացան դերակատարություն ունենալ շարժման մեջ:

Այնուամենայնիվ մարքսիստները չկարողացան շարժման պատճառները վերլուծել մարքսիստական «դասակարգային պայքարի» տեսությամբ: Շարժման առաջատարները ոչ թե «հեղափոխական պրոլետարիատի» դասակարգին պատկանողներն էին, այլ քաղաքական միջին դասակարգի (բուրժուազիայի) բարեկեցիկ պայմաններում ապրող երիտասարդներ:

Շարժումը, հիմնականում, քաղաքացիական ընդվզում էր բռնատիրական համակարգերի դեմ: Շարժմանը միացողները, ի մասնավորի՝ ուսանողները կամ երիտասարդությունը, տնտեսական պահանջներից, օրինակ՝ աշխատավարձի բարձրացումից կամ կենցաղային տնտեսական պայմանների բարելավումից առավել պահանջում էին համամարդկային և քաղաքացիական բարեփոխումներ:

Հին համակարգերի դիմակայությունը

20-րդ դարասկզբի տեխնոլոգիական զարգացումը տնտեսության և արդյունաբերության ասպարեզներում դեմ հանդիման էր կանգնել հասարակական պահպանողականության և ավանդապաշտության ալիքին, որի հետևանքով հասարակության մեջ սերմանվում էր հակադրությունների և պայքարի մթնոլորտ:

Աշխատավոր դասակարգը վերածվել էր հասարակության ամենամեծ դասակարգի և աշխատավորը համարվում էր շահագործվող «սև աշխատանքի» առարկա, որը զուրկ էր իր հանդեպ մարդկային վերաբերմունքից:

Հասարակության զանազան խավերում նկատելի էին խտրականության ու անհավասարության բացահայտ երեւույթներ:

Երկրորդ համաշխարհային պատերազմից առաջ տիրող ավանդական մշակույթի և 1960-ականների մշակութային զարթոնքի հակադրությունն էլ իր հերթին հիմնական պատճառ հանդիսացավ քաղաքացիական այդ խոշոր շարժման:

Այս առումով 1960-ականների երիտասարդ սերնդին յուրահատուկ կարելի է համարել, որը արևմտյան գրեթե բոլոր երկրներում միատեսակ հատկություններով էր օժտված: Այս երիտասարդությունը մեծացել էր հետպատերազմյան տնտեսության արագ աճի և հասարակական բարեկեցության պայմաններում: Նյութական առատության մեջ ձեւավորված այս սերունդը այժմ ցանկանում էր ապրել մարդկային նոր արժեքների վրա հիմնված գաղափարական համակարգում:

Թաքուն ցասումը, որ երկար տարիներ կուտակվել, խտացել էր, սպասում էր հարմար պահի՝ պոռթկալու համար: Ցասումը ժայթքեց մի խումբ երիտասարդների կոկորդից, որոնք «բավական է» կոչերով ողողեցին փարիզյան հրապարակները: Նրանք բռնատիրական ճնշումների նկատմամբ ավելի զգայուն էին, առավել արթուն խիղճ ունեին և ձերբազատված էին իրենց հայրերին կապանքի տակ պահող ավանդական արժեքների համակարգից:

Բողոք իմպերալիստական թալանի դեմ

Շարժման ընթացքում ներքին բուրժուազիայի դեմ պայքարը զուգորդվում էր նաև նորագույն գաղութարարության, միջազգային իմպերիալիզմի դեմ պայքարին:

Այդ դիտանկյունից կարելի է ասել, որ շարժման սաղմը դրվել է ԱՄՆ-ում Վիետնամական պատերազմի դեմ պայքարի օրերում: Կարճ ժամանակամիջոցում վերջինիս ալիքները հասան Եվրոպա և շաղախվեցին քաղաքական և հասարակական պահանջներով: Վիետնամի պատերազմը դիտվում էր որպես զարգացած աշխարհի արշավանք երրորդ աշխարհը թալանելու նպատակով:

1960-ական թվականներին ազգային ազատագրական պայքարների մթնոլորտը միջազգային մակարդակով տիրական էր: Դա ևս լիցք հաղորդեց շարժմանը:

Սակայն շարժումը հաճախ էր սաստիկ բախվում հակադիր ուժերին միջազգային գետնի վրա: Շարժումը ձևավորվեց նախկին ԽՍՀՄ և Չինաստանի հակադրության ամենաթեժ ժամանակահատվածում: Հակադիր այդ գերտերություններից յուրաքանչյուրը իրեն համարում էր «իրական սոցիալիզմի» հեղինակ և հետևաբար մյուսին անվանում էր դավաճան և շեղված:

Շարժումը մարքսիստական և տրոցկիական հակումներ ունենալով հանդերձ առավելապես հակախորհրդային գունավորում ուներ, և հենց այդ պատճառով իր ուղին զատեց «ավանդական» կոմունիստական կուսակցությունների ուղուց: Հետևաբար զարմանալի չէր, որ կոմունիստական կուսակցությունները 1968-ի շարժումը համարում էին շեղված, արկածախնդրական և «մանր բուրժուական»:

Բնականաբար, գաղափարախոսական տարակարծությունները քաղաքական հետևանքներ ունեցան: Շարժման ղեկավարության մի մասը երկմտում էր Վիետնամին պաշտպանելու հարցում, պարզ այն պատճառով, որ Վիետ Կոնգի ղեկավար Հուշի Մինեն աստիճանաբար հակվում էր դեպի Խորհրդային Միություն և հեռանում Չինաստանից:

ԱՄՆ-ում Վիետնամի պատերազմին ընդդիմությունը գրեթե զուրկ էր գաղափարախոսական բնույթից և համարվում էր քաղաքացիական սոսկ ընդվզում, այն դեպքում, երբ, օրինակ, Գերմանիայում, սառը պատերազմի մթնոլորտում, ձախ ուժերն էին հակադրվում պատերազմին: Իսկ Ֆրանսիայում Վիետնամի պատերազմին հակադրվելը չէր համարվում արմատական քայլ, քանի որ գեներալ Դը Գոլն էլ դեմ էր Վիետմանի դեմ ուղղված ԱՄՆ-ի նոր հարձակման ծրագրերին...

Շարժման դիրքորոշումը Կուբայի հեղափոխության հարցում ևս երկակի էր, քանի որ Կուբան գտնվում էր ԽՍՀՄ ազդեցության

տակ: Կուբային զորակցելու հարցը ընդամենը դրսևորվում էր Չե Գեվարայի գովաբանությամբ, որն էլ շնորհիվ իր անձնուրաց զինյալ պայքարի, հիմնականում, զերծ մնաց ռեվիզիոնիստական մեղադրանքից:

Բռնատիրության և գերիշխման բացառում

Ասվում է, որ 1968 թ. շարժումը եթե պարտվեց քաղաքական ասպարեզում, ապա հաղթանակեց մշակութային ասպարեզում: Շարժումը չհասցրեց վերածել «հասարակական հեղափոխության» և բարեփոխել հասարակա-քաղաքական համակարգը:

Քաղաքական գործնական նկատառումներով և հատկապես պետական բռնությանը դեմ դնելու նպատակով, առաջ քաշվեց «բիրտ հեղափոխության» բնաբանը, և այդպիսով բարոյական մեծ հարվածի ենթարկվեց շարժումը:

Շարժումը, նախնական փուլում, հանդես եկավ մշակութային արդիական, հարուստ և բաց հասարակական պայմանների ստեղծման հավակնությամբ և հետագայում հաջողեց ստեղծել և առաջադրել նոր արժեքային համակարգ և կենդանի մոդելներ՝ ընդդեմ գործող կարգերի և ավանդական արժեքային համակարգերի: Շարժումը զարգացրեց անհատական ինքնուրույն դրսևորման և անկաշկանդ ինքնարծարծման ոլորտը:

Այս իմաստով 1968-ի շարժման հիմնական բնութագիրը բռնատիրական և մեծապետական համակարգերի դեմ արմատական ընդդիմության կեցվածքն էր: Շարժման գաղափարական նստվածքում ուրվագծելի է նախկին արժեքային համակարգում տիրող դասակարգային, ցեղային և սեռական անհավասարությունների և խտրականությունների դեմ պայքարի ոգին:

Շարժումը վիթխարի ազդեցություն ունեցավ երիտասարդության կենցաղում՝ առօրյա կյանքում, և տարածվեց հասարակության զանազան շերտերում:

Քաղաքացիական հասարակության հզորացում

Շարժումը քննադատեց գործող համակարգում տիրող կրթադաստիարակչական գաղափարախոսությունը:

Դաստիարակչական մեթոդներն են, որ ազատախոհ մարդուն վերածում են հետևորդի և հլու հնազանդ էակի:

Առկա կրթադաստիարակչական համակարգի իրական էության բացահայտմամբ, արմատապես փոխվեցին եվրոպական բազմաթիվ երկրների դաստիարակչական համակարգերը: Շարժումը մեծապես նպաստեց անհատական ինքնուրույնության և դիմադրողականության հոգեկերտվածքի զարգացմանը և արժևորեց քաղաքացու «քաղաքացիական քաջությունը»:

Շարժումը սկիզբ դրեց հասարակական ընդվզումների նոր տեսակի և որակի, որոնք փոխարինեցին բողոքի ավանդական ձևերին:

Շարժումը միաժամանակ ամրապնդեց քաղաքացիների հավատքը եվրոհասարակության ինքնիշխանության և ժողովրդավարության նկատմամբ:

1968-ի ժառանգությունը

Եվրոպայում այսօր արդարության համար պայքարող գործիչներից շատերը մաս են կազմել 68-ի շարժման: Անշուշտ նրանցից շատերը ամբողջապես հավատարիմ չեն մնացել շարժման ուտոպիական երազներին... Այն ժամանակաշրջանի ծայրահեղական լոզունգները երիտասարդական ավյունի դրսևորումներ էին: Կյանքը ցույց տվեց, որ հասարակական զարգացումները միայն «ըմբոստ» ուսանողության միջոցով չի կարելի իրականացնել, կան արմատական բարեփոխումների անհրաժեշտություններ:

Վերջերս Գերմանիայի հեռուստատեսությամբ սփռվող բանավեճի ընթացքում շարժման մասնակիցներից մեկը նշեց. «Մենք գնացինք, սակայն այս հասարակությանը ապահովեցինք գալիք սերունդների արժանավայել ապրելու երաշխիք»:

68-ի սերունդն ապացուցեց, որ ներկա հասարակական հարաբերությունները այլևս չեն կարող մնալ անփոփոխ: Ներկա հասարակական փոխհարաբերությունները առավել քան երբեք հիմնված են հավաքական մտածողության վրա, օժտված են մարդկային արժեքներով, քաղաքական համակարգերը դարձել են առավել թափանցիկ: Եվ ամենակարևոր ձեռքբերումներից մեկն այն է, որ իշխանավորները սովորեցին ունկնդրել հասարակական կարծիքները, քննադատությունները և հաշվի նստել դրանց հետ:

«Անկարելի է հայ չլալ...»

«Յառաջ»-ի հավաքածուն... Արևմտահայ մտավորականների այն փաղանգը, որը ցեղասպանության արհավիրքը վերապրեց, Ֆրանսիա տարագրվեց ու չնայած զուրկ էր կեցության, ապրուստի տարրական հնարավորություններից, որոշեց թերթ հրատարակել: Դա մեծամտություն, փառամտություն չէր: Արևմտահայ մտավորականները գիտեին, որ լրագիրը, հատկապես արտերկրում, նույնպիսի հայապահպանման ազդակ է, ինչպես դպրոցն ու եկեղեցին: Եթե այդպես չլիներ, Հակոբ Պարոնյանի, Դանիել Վարուժանի, Երվանդ Օտյանի նման հանճարները Պոլսում, վերջինս նաև Եգիպտոսում, իրենց ստեղծագործությունները մեկ կողմ չէին դնի, լրագիր չէին հրատարակի: «Մենք տաշեղներ ենք այն զարհուրելի յորձանքին մէջ, որ եւրոպական քաղաքակրթութիւն կը կոչուի,- գրում է երջանկահիշատակ Շավարշ Միսաքյանը անդրանիկ թիվի առաջնորդողում,- որուն ալիքները կը քշեն կը տանին, կը տարրալուծեն ամէն բան:

Երէկ՝ ֆիզիքական գոյութեան պայքարը ունէինք, ուրի՜շ երկրի մը մէջ, այսօր նոյնքան ծանր է մղձաւանջը, այս ակնախտիպ եւ լպրծուն պողոտաներուն վրայ, որոնք բանուկ ճամբաներ են օտարացման եւ այլասերման համար»:

Բախտավոր խմբագիր էր Շավարշ Միսաքյանը: Կարճ ժամանակում լրագրի շուրջը խմբվեցին արևմտահայ գրականության վերջին մոհիկանները, որոնք և ստիյուռքահայ (այդպես կոչենք) գրականության ռահվիրաները դարձան: Խոսքը նախ, իհարկե, Շահան Շահնուրի, ապա նաև Վազգեն Շուշանյանի, Շավարշ Նարդունու, Նշան Պեշիկթաշլյանի, Զարեհ Որբունու, Հրաչ Զարդարյանի, Նիկողոս Սարաֆյանի մասին է:

«Յառաջ»-ը միայն ստիյուռքահայ գրականությունը չսկզբնավորեց ու չնավորեց: Լրագրի էջերում Ֆրանսիայի ակադեմիայի ապագա անդամ Անրի Թրուայան իր անդրանիկ հոդվածը տպագրեց հայկական պատարագի, Անրի Վերնոյը՝ շարժանկարի ստեղծման 50-ամյակի, Օհան Դուրյանը՝ դասական ու ազգային երաժշտության մասին: Եվ դեռ ովքեր, ովքեր...

Հեղինակային նման միջավայրում խմբագրապետը՝ Շավարշ Միսաքյանը, իրեն ավելի քան համեստ դեր էր վերապահել՝ «Օրը օրին» վերտառությամբ սեղմ հաղորդագրություններ էր հրապարակում, որտեղ անդրադառնում էր առօրյա ուշագրավ իրադարձություններին:

1939 թվականի հուլիսի 6-ին նա հաղորդում է Վիլյամ Սարոյանի Փարիզ կատարած այցելության և այն մասին, որ Ալեքսանդր Խատիսյանին «...ժամերով հարցումներ ուղղած եւ գրի առած է հայկական հանրապետութեան պատմութիւնը»:

«Դրօշակ»-ի ընթերցողներին ենք ներկայացնում այդ ուշագրավ հրապարակումը:

Հավելենք, որ բացառիկ համեստությամբ օժտված Շավարշ Միսաքյանն իր հոդվածները հանախ գրչանուններով, այս դեպքում՝ «Վահէ» է ստորագրել:

Գր. ՉԱՆԻԿՅԱՆ

Ուիլեամ Սարոյեան



Գալն ու երթալը մէկ եղաւ: Շաբաթ երեւցաւ, կիրակի մեկնեցաւ:

Հեռաձայն մը՝ շաբաթ առտու, ժամադրութիւն ստանալու համար «Յառաջ»էն: Աճապարանքի մէջ ըլլալով, համաձայնեցանք հանդիպիլ Ռաֆֆի լսարանի երեկոյթին մէջ:

Երեկոյթը տեւեց երեք ժամ, բայց որովհետեւ շատեր կ'ուզէին խօսիլ իրեն հետ, գոնէ բան մը հարցնել, ամէն մէկուն երեք վայրկեան ալ չինկաւ:

Երբ ներս մտաւ սրահէն, ընկերակցութեամբ Ա. Խատիսեանի, կարծես մեր տղաքներէն մէկն էր: Բարեւ մը բոլորին, առանց սեթեւեթի, եւ գնաց նստաւ իր տեղը:

Հայ տղայ մը, բառին հարազատ առումով: Ճակատը լայն, աչքերը սուր, շարժուձեւերը աշխոյժ: Ոչինչ ամերիկեան կամ սալոնական:

Դիմագիծն ալ հայկական, տաք եւ պայծառ:

Առաջին հարցումս հայերէն էր արդէն, իբրեւ փորձ: Որոշեր էի անգլերէնը օգնութեան կանչել կարելի եղածին չափ ուշ: (Քաղաքականութեան մէջ ալ այդպէս չե՞նք ըներ):

Երբեք պէտք չմնաց այդ օգնութեան, եւ Սարոյեան բոլորին ալ պատասխանեց հայերէն: Մինչեւ անգամ իր ճառը խօսեցաւ հայերէն, անշուշտ ինքնուրոյն շեշտով մը:

Շրջապատին ծանօթանալէ վերջ, ուզեց յուշատետրին մէջ արձանագրել կարգ մը անուններ: Մա՛րդ չէր ճանչնար, բայց կ'ենթադրէր թէ յայտնի դէմքեր են այս եւ այն:

Եւ ահա կը թնդայ երգչախումբը, ափյափոյ կազմուած՝ Սիփան-Կոմիտասի ներկայ անդամներէն:

Սարոյեան աչք եւ ականջ կտրած է:

Երկու խօսք ալ, եւ այս անգամ մեներգ մը,- «Երկինքն ամպել ա»...:

Սարոյեան կը խանդաղատի եւ կը ծափահարէ:

- Կը հասկնա՞ք երգերուն բառերը:

- Ոչ ամէնը, բայց սրտովս, հոգիովս՝ ամբողջապէս (եւ կը ցուցնէ սիրտը):

Եւ երբ անգլերէնի կը թարգմանեմ «Երկինքն ամպել ա»ն,- աչքերը կը շողան: Կ'ըսես՝ խորհուրդ մը կը ծաղկի դէմքին վրայ:

- Իսկ ճառե՞րը:

- Այո, կ'ըմբռնեմ իմաստը, բայց ոչ ամբողջ խորութիւնը:

- Ուրկէ՞ սորվեցաք հայերէնը: Կարդալ-գրել ալ գիտէ՞ք:

- Կարդալ-գրելը չեմ գիտեր: Խօսիլը սորված եմ մայրիկէս:

Խատիսեան պատմեց թէ ժամերով հարցումներ ուղղած եւ գրի առած է հայկական հանրապետութեան պատմութիւնը:

Այս տողերը գրողը ճառ մը խօսած էր, յիշելով Ֆրանց Վերֆելի խօսքը,- «Հայ ըլլալը անկարելիութիւն մըն է»:

Երբ կարգը իրեն եկաւ ճառելու, Սարոյեանի առաջին խօսքն եղաւ.

- «Անկարելի է Հայ չըլլալ...»:

Եւ խնդրեց որ նորէն երգեն: Նոյն իսկ մատով կը ցուցնէր այս ու այն երգիչը:

Կէս գիշերը անցած էր արդէն: Սրահին լոյսերը կը մարէին: Ու մինչ ներկաները Սարոյեանը կը փնտռէին հրաժեշտ առնելու համար, տեսանք որ երգիչներու խումբի մը հետ առանձնացած, ինքն ալ կ'երգէ.

- **Սարը սարի նման չէ...**

Անտէ՛ր ժողովուրդ: Քու պատմութիւնդ ալ նման չէ որեւէ պատմութեան...

ՎԱՀԷ

6 Յուլիս 1939, «Յառաջ»


ՀԱՅԵՐԵՆ — ԴԵԿՏԵՄԲԵՐ 1908
XVIII ՏԱՐԻ
ԴՐՈՇԱԿ
ՀԱՅ ՅԵՂԱՓՈԽԱԿԱՆ ԴԱՇՆԱԿՑՈՒԹԻՒՆԱՆ ՕՐԳԱՆ
Adresse:
„Droschak"
GENÈVE (Suisse)
-12 (198)
oschak"
organe
e la Fédération

ՍԱՔՕՆ

Հայ ռազմիկը դադար չունի, եթէ նա գիտէ հնազանդել իր խղճի ու դատողութեան հրահանգներին: Նրա համար չեն անդորր կեանքի գեղածիծաղ «իդիլլիաները», նրա համար չէ և «մանր, անարիւն աշխատանքի», «մանր գործերի» այն սակաւապետ հաւատամքը, որ բնորոշում է մեր երկրի մի կարգ ձախակողմեան կուսակցութիւններին... Նա պէտք է միշտ արիւն փնտռէ, նա պէտք է միշտ տանջանքի ու հերոսական մարզանքների աղբիւրից խմէ, որովհետեւ նրա հարազատ ժողովրդի մարտիրոսութիւնը վախճան չունի, որովհետեւ այդ ժողովուրդը, ի դէմս իր բոլոր հատուածների, դրուած քաղաքական ու ցեղագրական անօրինակ պայմանների մէջ՝ ստիպուած է մղել գոյութեան ամենատարրական պատերազմը, մարդկային ամենապարզ, ամենանախնական իրաւունքների գոռ ու արհաւրոտ ճակատամարտը...

Սաքօն վաղուց արժանացել էր խաղաղ կենցաղի իդիլլիային... Ժամանակն էր, որ ռազմիկի բազմատանջ մարմինը և նրա մեծ սիրտը հանգիստ առնէին իր նուաճած դափնիների վրայ... բայց ահա մի ձայն նորէն կոչեց նրան... Մայր Արաքսի միւս եզերքից... Նոյն հայրենի ձայնն էր դա, աղերսագին ու սրտայոյզ, նոյն հարազատ ժողովուրդն էր, նրա երրորդ, ամենափոքրիկ բեկորը, որ պատմական մի հանդիսաւոր ու փոթորկոտ վայրկեանում կանգնած է անզօր ու անապաւէն, ենթակայ նոյն բարբարոս, վանդէական խաժամուժի յորձանքներին...

Սաքօն նորէն կապեց գարիբալդիական պայուսակը, նորէն արբեց վառօդի պաղ բուրմունքով և ճանապարհ ընկաւ... ձայնի ուղղութեամբ: Բայց այս անգամ նրան չը վիճակուեց օգնութեան գալ իր սիրած ժողովրդին,- նզովելի պատահարը շանթեց նրան կէս-ճանապարհին:

Խե՜ղճ Սաքօ... խօլերային ահռելի տանջանքների, հոգեվարքի երկարատև գալարումների մէջ զգա՞ց արդեօք, թէ որքան անողորմ է ճակատագիրը, «նախախնամութիւնը», «աստուածը»... դէպի մի կեանք, որ եղել է ծայրէծայր մարմնացումն բարութեան ու ազնըւութեան...

Անարգ բացիլները միացած ռուսական բռնակալութեան ճիրաններին՝ սպանեցին մեր անմոռանալի Սաքօին, նոյնիսկ մահւան հանգըրւանում նրանք թոյլ չը տուին, որ այն ժողովուրդը, որ գուրգուրել ու յաւերժացրել էր նրան իր երգերի ու առասպելների մէջ, համախմբուէր պաշտելի դիակի շուրջը և հսկայական թափօրներով կատարէր նրա վերջին սգաշունչ ապօթէոզը...



Ալեքսանդր Թոփչյան

Բանկ Օտոման

Երևան, 2008, 227 էջ

«Բանկ Օտոման» գործողությունը, որ ծրագրվեց ու իրականացվեց 1896թ. Կոստանդնուպոլսում, ՀՅ Դաշնակցության՝ Երկրում ծավալած դիմադրության շարժման ամենացայտուն դրվագներից մեկն է և օրգանական շարունակությունը այն գործողությունների շղթայի, որոնք միտված էին օտար պետությունների հայացքը գամված պահելու տասնիններորդ դարավերջի հայկական կոտորածների և առհասարակ Հայկական հարցի վրա: Թուրքիայի տիրապետության տակ հայտնված հայկական գավառներում այդ տարիներին, էթնիկ զտումների արդյունքում, մոտ կես միլիոն հայ էր սպանվել այն պարզ պատճառով, որ նրանք հավատացել էին Աբդուլ Համիդի բարենորոգումների ծրագրին ու չէին լքել իրենց հայրենի տները: Անհետաձգելի պահանջ էր առաջացել կազմակերպել ռուս-թուրքական աքցանի մեջ հայտնված հայության ինքնապաշտպանությունը: 1895-1896թթ. ՀՅԴ Բյուրոն մեկը մյուսից ավելի աղմկահարույց ծրագրեր է մշակում, որոնք, սակայն, նրան բախտ չի վիճակվում իրականացնել մի շարք օբյեկտիվ ու սուբյեկտիվ պատճառներով: Դաշնակցական գործիչները, ճիշտ գնահատելով իրենց ուժերն ու հնարավորությունները, նաև հաշվի առնելով գերտերությունների կողմից սպասվելիք ոչ նպաստավոր արձագանքները, նախ՝ հրաժարվում են Սուլթան Համիդի ահաբեկման գործողությունից, ապա՝ օտար երկրներում թուրք դեսպաններին տեռորի ենթարկելու գաղափարից: Սուլթան Համիդի ահաբեկումը, պետք է նկատել, հանդիսանում էր Պոլսում իրականացվելիք երեք գործողություններից երկրորդը: Առաջինը Արևմտյան Հայաստանի տարածքում հայկական կոտորածների դադարեցման և բարենորոգումների արագացման պահանջներով հզոր ցույցի կազմակերպումն էր Պոլսում, որի նպատակն էր այս խնդիրների վրա հրավիրել օտարերկրյա դիվանագիտական հաստատությունների ուշադրությունը և ստիպել սուլթանին ձեռնպահ մնալ հայահալած քաղաքականությունից: Չնայած Դաշնակցության գաղափարին միանալու իրենց խոստումներին՝ Հնչակյան կուսակցության ղեկավարները փորձում են միայնակ լուծել այդ խնդիրը և գաղտնի, 1895թ. սեպտեմբերի 18-ին կազմակերպում են Բաբը Ալիի տխրահռչակ ցույցը՝ հայության համար իր ողբերգական հետևանքներով:

Էդիկ ԱՆԴՐԵԱՍՅԱՆ

1895 թ. հոկտեմբեր-նոյեմբեր ամիսներին կոտորածների նոր ալիք է բարձրանում: Այլևս չէր կարելի հետաձգել սուլթանի կառավարությունը հուժկու հարվածով ցնցելու և եվրոպական դիվանագիտությունը տեղից շարժելու գործողությունը: Այդ ժամանակ Պոլսի Կենտրոնական Կոմիտեի մի շարք ընկերներ, Բաբկեն Սյունիի գլխավորությամբ, առաջարկում են ահաբեկել Աբդուլ Համիդին: Այդ գաղափարը որքան գայթակղիչ (պատրաստ էին բոլոր միջոցները, ԿԿ-ն ուներ բավարար քանակությամբ ուժանակ և ռումբեր, հրացանների, ատրճանակների և դրամի պակասություն չկար), նույնքան էլ վտանգավոր էր այն առումով, որ դա կարող էր Եվրոպայի առջև հայկական կոտորածները արդարացնելու համար թուրք կառավարության ձեռքը նոր պատրվակ տալ: Անսալով ՀՅԴ Բյուրոյի և դրսի մի շարք այլ ընկերների հորդորներին՝ Պոլսի Կենտրոնական Կոմիտեն, ի վերջո, հրաժարվում է նաև այս ձեռնարկից: Բայց այն միտքը, որ բարենորոգումների գործը հնարավոր է մեռյալ կետից շարժել միայն մի ուժեղ ցնցումով , հանգիստ չէր տալիս Պոլսի ընկերներին, և նրանք, համախորհուրդ Բյուրոյի և մյուս մարմինների հետ, ի վերջո կանգ են առնում ծրագրի երրորդ կետի՝ Բանկ Օտոմանը գրավելու վրա, որից հետո պետք է իրենց գրավոր պահանջները ներկայացնեին կառավարությանն ու եվրոպական տերությունների՝ Թուրքիայում գտնվող դիվանագիտական հաստատություններին:

Այս փոքրիկ պատմական շրջայցը, որ նպատակահարմար գտանք կատարել Ա. Թոփչյանի «Բանկ Օտոման» գիրքը ներկայացնելուց առաջ, հուսով ենք, ընթերցողի հետաքրքրասիրությունը խթանելու լրացուցիչ ազդակ կհանդիսանա և, անշուշտ, կնպաստի ըմբռնելու այն հսկայական նշանակությունը, որ Բանկ Օտոման գործողությունն ունեցավ Հայկական հարցի համամարդկային ընկալման մեջ և որպես այդպիսին մնաց անգամ մեծ ժողովրդականություն վայելող երգերում («Մենք անկեղծ զինվոր ենք...»):

Ա. Թոփչյանի վեպը, պատմական իրադարձությունը գեղարվեստական երկի միջոցով վերարտադրելու փորձ է և, պետք է ասել, բավական հաջողված մի փորձ: Հենց միայն հեղինակի ձգտումը՝ այս ըմբոստ ձեռնարկը ներկայացնել բազմանկյուն հակասությունների ու ինտրիգների կենտրոնում, պատումին նոր գույներ ու մանրամասներ է հաղորդում, որն էլ ավելի ամբողջական է դարձնում պատկերը: Բանկ Օտոմանը, լինելով Թուրքիայի առաջատար բանկերից մեկը, նաև նշանավոր էր այն առումով, որ գտնվում էր օտարերկրյա խնամակալության ներքո, և այստեղ խաչաձևվում էին բազմաթիվ շահեր ու խնդիրներ: Բանկ Օտոմանի շուրջն էին պտտվում զանազան ապահովագրական ընկերություններ, տարբեր երկրներից Պոլիս եկած դրամանենգներ, սնանկացած, բայց դեռ փրկվելու հույս ունեցող վաշխառուներ ու առևտրականներ, սենսացիայի սիրահար լրագրողներ, անգամ՝ կեղծ չեկերով դրամ ստանալու նպատակով Փարիզից ժամանած պոռնիկներ: Վերջապես բոլորին հայտնի էր, որ այս «անառիկ ամրոցում» էր պահվում Աբդուլ Համիդի թանկարժեք քարերի զարդը՝ «Hop Diamond»-ը, քառասունհինգ կարատանոց երկնագույն ադամանդը, որը թռցնելու ծրագիր ունեին անգլիական գաղտնի ծառայությունները: «1896թ. օգոստոսի 26-ին, փադիշահի գահակալության տարելիցի հանդիսություններից չորս օր առաջ, միևնույն ժամին Բանկ Օտոմանում են հայտնվում իդեալիստ հեղափոխականներն ու օդեսացի դրամանենգները, բարձրաշխարհիկ պոռնիկը, զեղծարար առևտրականը, միջազգային արկածախնդիրը և ուրիշ անձնավորություններ: Սկսվում է «Բանկ Օտոման» գործողությունը...»: Լուրն անմիջապես հասնում է սուլթանին: Փողոց է հանվում զորքն ու թալանի պատրաստ խուժանը, որոնք բանկը հետ գրավելու մի քանի անհաջող փորձեր են ձեռնարկում: Ողջ օրը, սա-

կայն, բանկում կյանքը կանգ չի առնում: Հայ հեղափոխականներն իրենց անունն ու գործը չարատավորելու նպատակով խստագույնս հետևում են, որ չտուժեն պատանդները, որ դրամն ու մյուս հարստությունները մնան տեղում: Օգտվելով իրավիճակից՝ մյուսները, ովքեր սեփական խնդիրներով էին հայտնվել բանկում, մեկմեկուց ծածուկ, իրենց հարցերն էին լուծում: Նրանք անհաղորդ էին այս իրադարձության բուն նպատակներին:

Նույն իրավիճակն էր տիրում նաև դրսում: Չնայած Թուրքիայում հայերի վիճակը բարենորոգումների միջոցով թեթևացնելու մասին իրենց խոստումներին, եվրոպական երկրներից և ոչ մեկը չի համարձակվում միջամտել, և Ելդըզ պալատի կողմն ուղղված նրանց նավերի թնդանոթներն այդպես էլ կրակ չեն բացում: Կրկին գերակայում է դրամի պաշտամունքն ու Թուրքիայի հետ հանուն հայերի չթշնամանալու միտումը:

Այդուհանդերձ հայերի պահանջները, որ գրավոր տեսքով հասցվել էին սուլթանին և դեսպանատներին, առերես ընդունվում են: Հանդուգն խումբը օտարերկրյա դիվանագետների ուղեկցու- թյամբ դուրս է գալիս բանկից և քայլում դեպի նավահանգիստ՝ Թուրքիայից հեռանալու համար: Մի հանգամանք, սակայն, այստեղ կգրավի ընթերցողի ուշադրությունը: Այդ երթի ընթացքում հեղափոխականների ճանապարհը փակում է իբր թե նույն օրը Պոլսում մորթված տասնյակ հազարավոր հայերի դիակներով բեռնված սայլերի անվերջանալի շարանը: Թե որտեղից է հեղինակը վերցրել այդ փաստը և այն ներկայացրել որպես «Բանկ Օտոման» գործողությանը զուգահեռ տեղի ունեցած հակագործողություն, վեպում չի նշվում: Խիստ անհամոզիչ է, և այդ պատճառով էլ այն կարող է դիտվել որպես գեղարվեստական մի անհաջող հնարք, որի խիտ գույների հետևում են մնում վեպի բուն թեման ու շարժառիթները:

Ի վերջո ովքե՞ր շահեցին այս իրադարձություններից: Հարցը, որ հեղինակը տալիս է վերջում, բնական է, կասեինք նույնիսկ անհրաժեշտ, որովհետև սրընթաց դեպքերի նկարագրությունները այդ մասին մտածելու ժամանակ կարծես չեն թողնում: Ըստ հեղինակի՝ շահել են բոլորը, նույնիսկ գրավված և հետ վերադարձված բանկը, նույնիսկ Թոփալ Հասան անունով մի անտուն սրիկա, որ ընդհանուր խառնաշփոթում հասցրել էր երկու անօգնական պառավ կին մորթել ու հիմա մտքում հաշվում էր, թե դա որքանով կօգնի իրեն դրախտ ընկնելու: Ա. Թոփչյանը ցավով է արձանագրում այդ ամենը, վեպի սկզբից մինչև վերջին տողերը մի անզուսպ ցանկությամբ, թութակների բերանով, անընդհատ հայհոյում Սուլթան Համիդին, բայց և ջանք չի թափում տեսնելու այն դրական փոփոխությունը, որ տեղի էր ունենում անպաշտպան ժողովրդի կազմակերպման ու բռնակալության դեմ ոտքի հանելու մեծ գործընթացում: Դա է թերևս պատճառը, որ վեպի բուն թեմային առնչվող կերպարներն իրենց գույներով զգալիորեն զիջում են երկրորդական դեմքերին, որոնք զուտ սպասարկու դեր ունեն: Կարո Բաբաջանյանը, Բագրատը, Լևոնը և էլի շատերը փաստորեն մնում են Աբդուլ Համիդի և հայտնի կողոպտիչ Ժան-Լյուկ Ռիվազի, մինչև անգամ մադմուազել Կիկիի և Թոփալ Հասանի կերպարների ստվերում:

Ամփոփելով ասվածը՝ կցանկանայինք ընդգծել նաև հեղինակի գրական խիզախությունը՝ ան-դրադառնալ ոչ վաղ անցյալի հերոսամարտի դրվագներից մեկին ու փորձել այն բերել գրական հարթություն: Մեր համեստ կարծիքով, եկող սերնդի դաստիարակության գործում շատ մեծ ծառայություն կարող են մատուցել մեր հեղինակների այս և նման փորձերը, որոնք ամենափոքր ու ան- նշան թվացող պատմական իրողություններով հնարավորություն կտան վերականգնելու մեր ժողովրդի հարատև պատմության շղթայի պակասող օղակները:

Լևոն Ասլանյան

Աորյա անցուդարձը, ներկա իրականությունը, ամենօրյա հոգսերը հազվադեպ են պարգևում մեզ ակնթարթներ, որոնք լի են յուրահանչյուրիս ներքնաշխարհի հեքիաթային վերապրումներով և երազանքներով: Սակայն, մի գողտրիկ անկյուն այս քաղաքում բացահայտում է մեզ համար այդ մոռացված և բաղձալի, հոգուն այդքան ցանկալի խաղաղությունը: Այսպիսին է Լևոն Ասլանյանի գեղանկարչական կոմպոզիցիաների հիմքը կազմող գաղափարախոսությունը: Եվ պատահական չէ, որ նկարիչը բնորոշում է իր արվեստը հետևյալ կերպ. «Վերցնելով կյանքից միայն լուսավորը և դրականը, փորձում եմ ստեղծել մի հեքիաթ, որը կցանկանայի իրականություն դառնար»: Նկարչի ստեղծած այս իրականությունը չի ճանաչում ժամանակ. կտավների վրա ապրող կերպարները գալիս են մի նոր խորհրդավորության շղարշով պարուրված իրականություն:

Սոնա Հարությունյան

արվեստաբան

ԴՐՕՇԱԿ

Պատկերասրահ





ԴՐՕՇԱԿ

ՀՅԴ Պատմութիւն